24904

331.88(47.925)
И-49

15 JAN 2010

ՅԵՐ. ՄԵԼԻՔ-ՅՈԼՉՅԱՆ

1903-1907

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

331.88(47.925)
Մ-4

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

№ 1 ԿՈՒՍՊԱՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

331.88 (47.925)
Մ-49

ՅԵՐ. ՄԵԼԻՔ-ՅՈՂԱՅԱՆ

4036

ՉՈՐՍ ՏԱՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

1903–1907

5818

ԵՐԵՎԱՆ
Տպագրական Տրեստի II տպարան
1924 թ.

2341

24904

27 JUN 2013

Ա. Սրապիոնյան-Լուկաշինին

Ողիրում և հեղինակը.

1646
2ա

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՊ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆ.
им. А. Мясникяна

16465-58

Գրաճարիար № 1079. Գաւոիր № 2848. Տիրաժ 1000

ՀԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Քառորդ դարի պատմություն ունի Հայաստանի բանվորական շարժումը։

Սակայն մինչեվ այժմս էլ բաղաքական տարբեր տիպի համբակներ կամա-ակամա ձգտում են տարակուսանքի յենթարկել, կասկածի տակ առնել Հայաստանի բանվորության դասակարգային պայքարի շեշտն ու ընթացքը։ Մինչդեռ այդ նշանակում է անգիտանալ պատմությունը, խարդախել իսկությունը յեվ չարամտորեն վարագուրել Հայաստանի տնտեսական զարգացման յեվ հասարակական կյանքի շերտավորման շնորհիվ ծառացող հակադիր շահերի անխուսափելի բաղխումը։

Այսօրվա հրամայողական պահանջն է վերհիշել Հայաստանի բանվորա-գյուղացիական հեղափոխության նախապատրաստական ուղին, մերկացնել նրան նպաստող ու խոչընդոտ բաղաքական խավերի դերն ու նպատակները, արձանագրել նրա հաղթության կամ պարտության ելքերը,—վորքան հնարավոր է կոնկրետ, կենդանի որինակներով,—նամանավանդ վոր աշխատավորության աճող սերնդի առաջապահ ներկայացուցիչները պարտավոր են իմանալու, ճանաչելու յերեկվան որը, վերագնահատելու անցյալի բաղաքական փորձը, վերապրելու ժամանակի բաղաքական պայքարը։

Բանվորական շարժման հիմնական պատճառները սերտորեն շաղկապված են յերկրի արդյունագործական կյանքի զարգացման—աշխատանքի շահագործման պրոցեսում յերեվան յեկող հակադիր շահերի անմիջական, տեսանելի բաղխման հետ։ Գծելով այստեղ արտադրության զարգացման ընթացքը, միաժամանակ նիշել ենք բանվորական շրջանների՝ նացիոնալիստական ազդեցություններից սթափվելու մոմենտը, ինչպես յեվ վերջինիս հեղափոխական—դասակարգային վոգորումները։ Վերջին դեպքում մենք պետք է հանդիպեցինք ինչպես գյուղացիական չքավորության հողային շարժումներին, նույնպես յեվ Հայաստանի մաս-

ամներին հեղափոխութեանը խորթացնող՝ կենտրոնախույս ուժերի գործունեութեան։ Մենք հարկադրված եյինք զբաղվել նաեվ այս յերեվույթների մանրամասն ընութեամբ, վորքան յեվ դրանք դուրս չլինեյին մեր բուն ծրագրի շրջանակից։

Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական կուսակցութեան Անդրկովկասյան կազմակերպութեան յեվ հատկապես իր բոլշեվիկյան հատվածի կատարած դերը մեր բանվորական շարժման մեջ մնում է դեռ յեվս շատ շատերի յեվ ամենից առաջ յերիտասարդ սերնդի համար terra incognita. յեվ այդ իսկ պատճառով մենք աշխատել ենք հնարավորութեան չափ կանգ առնել նրա գործունեութեան բանի մի մանրամասնութեյունների վրա՝ լրացնելու այդ խոշոր բացը, մանավանդ վոր դեռ յեվս արձանագրված չե լիովին Անդրկովկասի յեվ մասնավորապես Հայաստանի բանվորական շարժման կազմակերպման ժամանակաշրջանի հեղափոխական նչերը։ — Թերևս այդ դեռ ուշ չե։

Սակայն արանով մենք չենք ապատել մեր նյութը յեվ հավակնութեյուն ել չունենք յենթադրելու, վոր ընդգրկել ենք մեզ զբաղեցնող պատմական շրջանն իր ամբողջութեյամբ։ Դեռ ցիր ու ցան՝ կան դոկումենտներ, վոր մեր կամքից անկախ չեն ոգտագործվել։ Սրանց կենտրոնացնելու անհետաձգելի գործը միայն հնարավորութեյուն կտա վերականգնել Հայաստանի բանվորական շարժման ամբողջական պատմութեյունը։

Հավելվածում գետեղած մի քանի խմորատիպ դոկումենտները գալիս են շատ բան ապացուցելու — յեվ ամենից առաջ այն, վոր 1903—07 թ. թ. Հայաստանում բոլշեվիկյան կազմակերպութեյունների դժնդակ պայմաններում վարած աշխատանքները աննկատ ու անհետևանք չեն մնացել։

Յեվ յեթե, այնուամենայնիվ, մեզ հաջողվել և գեթ որվագծել Հայաստանի բանվորական շարժման շարիխները սահմանափակ մի ժամանակամիջոցում (903—07 թ. թ.) յեվ տալ յերիտասարդ գվարդիային մեր որերում կատարված մեծ դեպքերի զարգացման պատմական ընթացքը — մեր առաջադրած նպատակը իրագործված կհամարենք։

Յեր. Մելիք-Յոլյան

Մոսկվա,
Նոյեմբեր, 1923 թ.

Ս Տ. Շ Ա Հ Ո Ւ Մ Յ Ա Ն
ազգությամբ յեվ ուսուցողական շրջանում։

Գլ. I.

ԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայաստանի հասարակա-անտեսական կյանքի զարգացման սիրական բարձունքներին միանգամից ու դյուրությամբ չէր, վոր գրավից արտադրության կապիտալիստական յեղանակը։ Յերկրի ուրույն պայմանները և սոցիալական ուժերի տարբեր շերտավորումները հոգուտ նրան չէին դասավորված։

Պարսկական սիրապետության շրջանից ճնացել էր ժառանգությունն հին կենցաղը իր բավանդակ պեսպիտությամբ։ Ինտանտություն և սրանից հետևող ժողովրդական զանգվածների պրիմիտիվ փոխհարաբերությունները շարունակում յեին ճնել բան ամենայնի անհողդողդ՝ կասեցնելով կուլտուր-տնտեսական կյանքի հարաճուն վերելքը։ Սարդարների ու խաների, ագա բեկ ու աղալարների «կուլտուրական» գործունեությունը, իրոք բովանդակում էր միայն տարրական պայմանների կ'երառումը։ Տիդական «նըրբամիտ» չինովնիկությունը հասարակական տականքների հետ գրկախառնված՝ նվիրագործում էր ամենահզոր ինքնակալության քաղաքական ձգտումները՝ ուժեղացնելով մեռնող կալվածատեր-պամիշչիկության արմատները՝ կրկնակի կողոպտի յենթարկելով աշխատավոր բազմությունների վաստակը, անելով նրա ինտելիգենտները, ներարկելով փոխադարձ տեսության թույն, պահելով նրան խավարի ու տգիտության մեջ։

Ռուսական սիրապետության առաջին քառամյակի ընթացքում և այնուհետև Հայաստանում՝ շնորհիվ արտաքին պայմանների բացարձակ հնարավորության, առևտուրը հետզհետե գարգացման նշաններ և ցուցանանում,—նրա առաջ բացվում են գործունեության լայն հորիզոններ։ Ռուսական ներմուծվող ֆաբրիկատը գրավում և տեղական շուկան։ Վորպես հետևանք և հետամնաց ձայրագավառ—Հայաստանը ապարելց և գառնում կենտրոնական իմպերիայի գաղութային սպանիչ քաղաքականության։ Կուտակվող առևտրական կապիտալը արտահանում և այսուհետև հում

նյութ, միաժամանակ սպառում կենտրոնական արդյունագործության արտադրությունը. նա այն չափով էր շահագրգռված մեր յերկրի տնտեսական բարեկեցությամբ, որչափով վերջինս հարուստ աղբյուր կարող էր ծառայել կենտրոնական շրջանի արդյունագործությունը սնելու, զարգացնելու համար: Այդ իսկ պատճառով ռուսական բուրժուազիան ձգտում էր ծայրագավառները զրկել տեղական արդյունագործության զարգացման ամեն հնարավորություններից ի հաշիվ կենտրոնի տնտեսական ու քաղաքական գերիշխանության հզորացման: Այս հանգամանքը յերկուսաեք ձեռնտու յեր նրա դասակարգային պահանջներին. նա մի կողմից խուսափում էր թե նոր մրցակցից և թե մտատանջվում սպառողական այդ շուկայի անաղարտ պահպանության համար, մյուս կողմից ծայրագավառների արդյունագործության զարգացման նպաստելու դեպքում, վերջինիս զուգընթաց նա ակամայից կստեղծեր բանվորական մի ուժ, որը հետին հաշվով պիտի ծառանար, ինքնատիրության, նրա ու ցարական իշխանության հանդեպ:

Այդ հեռատեսությունից զուրկ չեր ռուսական բուրժուազիան:

Անդրկովկասը՝ ինչպես և Հայաստանը բացարձակապես յենթարկված էր առևտրական կապիտալի գիշատիչ գործունեության, որը հնարավորություն չեր տալիս տեղական արդյունագործության վոտքի կանգնելու: Նա, ճիշտ և, քայքայից հինը, նահապետականը—սակայն և չստեղծեց կուլտուրական միայնն արժեքներ. նա ուժգին թափով քայքայեց նահապետական գյուղը՝ ուժեղացնելով նրա չքավորության կոնտինգենտը, ինչպես և վառնգեց տեղական մանր արդյունարերությամբ զբաղվող վաճառականության ու արհեստավորության հետագա գոյությունը:

Յեվ հակառակ անգամ անհյուրընկալ այս գրության, այնուամենայնիվ արդյունագործական կյանքը հետզհետե ընդգրկեց բնական հարստություններով լիառատ Հայաստանը: Այդ պրոցեսը, անկասկած պայմանավորեց ժողովրդական զանգվածների նորանոր շերտավորումը—հակադիր ուժերի բազմությունները—ու կուլտուր—հասարակական կյանքի զարթոնքը: Նրա ընթացքը պայծառորեն գծեց մի խոշոր անդունդ յերկրի և այսորվա մեջ ու ձևավորեց տնտեսական զարգացման ուղիներով բարձրացող սոցիալական մի նոր ուժ—բանվոր դասակարգը:

Դա գարը բոլորում և այսոր այն ժամանակաշրջանից, յերբ բոլոնդակ Հայաստանի աշխատավոր ժողովուրդը դեռ ևս ապրում էր նահապետական կենցաղով, հենում՝ կալվածատեր—պամիշչիկության նվիրագործած կարգերի տակ, վորոնք շղթայազերծ

պահպանում էին ժողովրդական զանգվածների առաջադիմական յուրաքանչյուր հնարավորություն, ձգտում: ժամանակի արտոնյալ գասը՝ մելիք թե բեգ, աղալար թե թավադ—իր ձեռքում կենտրոնացրել էր հողային հակայական տարածություններ: Նա իրախուսված ցարական իշխանության առանձին խնամակալությամբ—շարունակում էր մինչև յերեսնական յեռանդով սեզմել սակավահող թե հողազուրկ գյուղացիության վոչ միայն հարկերի, տուրքերի կամ այլ պարտավորությունների ծանրության տակ, այլ և՝ թալանելով նրա ամբողջ վաստակը՝ ձգել էր նրան պրոֆեսիոնալ ագրատության ճիրաններում:

Վոչնչով հետ չեր մնում հոգևվորականությունը, վոր մի յերբորդ իշխանություն էր հայ գյուղացիության պարանոցին բազմած: Հակայական կալվածքներ, գյուղեր, անտառներ—կազմում էին նրա գոյության խարիսխը: Նրա իշխանության տակ գտնվող գյուղացիության անտեսական դրությունը ավելի ծանր էր, քան յերբևիցե կալվածատիրական տայնների գյուղացիության վիճակը վորովհետև առաջին դեպքում նա գործիք էր հզոր և մարմնավոր իշխանության շահատակություններին—յերկուսին էլ վճարում էր հարկեր և տուրքեր, մինչդեռ վերջին դեպքում նա ճանաչում էր միայն մարմնավոր իշխանության: Յեվ տես «աստվածային» մարդկանց—փարաջավոր պատառուզծների այս կաստան, մյուս կողմից, շարունակում էր կրկին յեռանդով խնկարկել «կրոնասեր» ժողովրդի ապիրատությունը, տաճարների ուխտագնացությունը, փառաբանել նրա «յերջանիկ անցյալը, խաղաղ, անվրդով» հոգին, նահապետական ապրելակերպը—կոչելով ամեն ինչ դեպի հետ, դեպի հինը:

Հասարակական փոխհարաբերությունները — սրտաքուռ պարզ, պրիմիտիվ, առանց ներքին տնտեսա-քաղաքական խոշոր բաղխումների, թեև աննկատելի ու դանդաղորեն՝—սակայն այնուամենայնիվ խորանում, բարդանում էին: Յերեկվա իշխանը թե մելիքը՝ այսոր սոսկ հողագործ էր, այսորվա բեգը թե թավադը՝ վաղվա մուրացիկը կամ ծառան.—կալվածատեր—պամիշչիկությունը վորքան էլ չհովանավորվեր պետության կողմից—այնուամենայնիվ տնտեսական անապահովության պատճառով վոչ միայն կորցնում էր իր «կթան կովը», այլ և հետզհետե հասարակական իր պիրքը պիչում էր վոտատիրոջ, առևտրականին: Յերեկվա ֆեոդալական մնացորդները՝ այսոր իրենց հզորությունը բոլոր առանձնաշնորհումներով հանկերձ նվիրաբերում էին հասարակական նոր ուժի՝ վաճառական դասին, վորը վաստորեն 70-ական թվականներից դեռ ևս վարում էր «ազգի»

բարձր քաղաքականութիւնը, անորինում նրա վիճակն ու բախտը։

Առևտուրը՝ թէև մանր, նեղքին շուկայի գնողական ուժը՝ չնչին, արտահանութիւնը՝ սահմանափակ — այնուամենայնիվ կերկրի անտեսական ռեսուրսները, նրանց զարգացման բոլոր հնարավորութիւնները կենտրոնացած էր վաճառական դասի, դռբանչիութեան, փողատեր-վաշխառուի ձեռքին։ Գյուղական բազմութիւնը, որ անքամ էր պետական ու մասնավոր տուրքերի ծանրութեան տակ—զուրկ դրամական միջոցներից՝ ինքնըստինքեան վաշխառութեան դատապարտված գոհն էր։ Ընչին գումարից պահանջվելիք տոկոսը հաճախ տարեգլխին կրկնապատկում էր հիմնական գումարը։ Մեկ ռուբլուն որական $1\frac{1}{2}$ կոպեկ տոկոսը՝ Հայաստանի գյուղերում սովորական երևույթ էր։ Վաշխառութիւնը վորպես մի պատուհաս կախված էր աշխատավոր ժողովրդի գլխին և բոլորովին էլ տարորինակ չէ ուշադրութեան արժանի այն առանձնահատուկ հանգամանքը, վոր անգամ մեր 70—90-ական թվականների զրական ստեղծագործութեան ներգործող շեշտը, սիրած ժոտիվը, շատ հաճախ վաշխառութեան ստեղծած ծայր աստիճանի աղքատութեան նկարագիրն է, նրա առաջացրած քայքայումներն ու արձանագրութիւնը։

Այս հանգամանքը չէրկար ժամանակ ծծել և չերկրի հյութը՝ անզոր լինելով զարգացնել նրա արտադրական կարողութիւնը, մշակել նրա արդավանդ դաշտերը (բուսական բարձր կուլտուրաներ՝ պլանտացիա և այլն), բնական հարստութիւնները։

Քաղաքները՝ անգույն, զուրկ քաղաքային արդյունաբերութիւնից, անծանոթ մեքենայի, շոգիի կամ էլեկտրականութեան—ավելի շատ անարտադրողական արհեստանների բնակավայրեր էին։ Այստեղ բնակչութեան մի խոշոր տոկոսը աշխատում էր սեփական «արհեստանոցներում», վորոնք լսա մեծի մասին անդավորված էին խոնավ գետնահարկերում, նահապետական մի քանի գործիքներով, հաճախ առանց վարձու աշխատող ձեռքերի, զուրկ մշտական սպառողից ու շրջանառութիւնից—ահա այն արհեստանոցները, վոր պիտի կերպարանափոխեին անտեսական կյանքը, արտադրութեան միջոցները, վրդովիչ քաղքենու միօրինակ տուրյան։

Արհեստավորութիւնը և վաճառական դասը իր ձեռքումն էր կենտրոնացրել նեղքին առևտրի մենաշնորհը։ Սրանք ունէին իրենց կազմակերպութիւնը—ժամանակի հնդինակավոր հատուկ մի հիմնարկ—համքարական կորպորացիան։ Սա ինքնավար կազմակերպութիւն էր և իր շուրջն էր կենտրոնացրել միևնույն արհեստի կամ պարապմունքի ներկայացուցիչներին։ Սա-

կայն բացի արհեստավոր և առևտրական դասից՝ «ընկերութիւններ» էին կազմակերպում նաև բոլոր այն քաղաքացիները, վորոնք զբաղվում էին այս կամ այն աշխատանքով։*)

Յևթային այդ ընկերութիւնները ամենախստաշունչ տնտեսական բռնադատության ենթարկվում էին քաղաքային ինքնավարութեան և հանդիսանում, իրապես, նրա որդանը։ «Վորպես այդպիսի որդաններ Անդրկովկասի համքարական կազմակերպութիւնները պահպանեցին իրենց նախնական ֆունկցիաները մինչև 70 ական թվականները»։**)

Համքարութիւնը Հայաստանի քաղաքաներում գերազանցապես իր շուրջն էր հավաքել արհեստավորութեան և վաճառականութեան։ Ամեն մի վարպետ կամ վաճառական ուներ իր արհեստանոցը կամ առևտրական ձեռնարկը, իր բարգահը և աշակերտը կամ աշխատակիցը։ Բարգահը՝ տարիներ սովորած և վարպետացած՝ նախկին աշակերտն էր, վարձու բանվորը։

Համքարութեան մեջ կազմակերպված էին՝

Յերեվանում	722	վարպետ	692	քարգահ,	667 աշակերտ
Ալեքսանդրապոլում	850	»	603	»	780 »

Համքարութեան մեջ չկազմակերպված՝

Յերեվանում	143	վարպետ,	84	քարգահ,	43 աշակերտ
Նախիջևանում	109	»	59	»	41 »
Ն-Բայազետում	154	»	39	»	60 »
Ողուբաթում	140	»	82	»	128 »
Ընդամենը	2118	»	1559	»	1719 »

Կազմակերպված համքարութեան մեջ քարգահների և աշակերտների թիվը միատեղ վերաբերում և վարպետների թվից կրկնապատիկ անգամ, մինչդեռ չկազմակերպվածներում՝ միանգամայն հակառակ պատկերն է նկատվում.—այստեղ վարպետները կրկնակի, չեռակի անգամ շատ են քան քարգահները ու աշակերտները առանձին։ Սա հետևանք է նաև վերջիններիս իրավական դրության և աշխատանքի պայմանների համեմատական տանելի վիճակին, վոր կիրառվում էր մասամբ կազմակերպված ցեխային միութիւններում։

*) С. А. Егиазаров „Исследования по истории учреждений в Закавказьи. Част II—„Городские цехи.“ Стр. 264, Казань 1891 г.

**) Ibidem, стр. 264.

Մանր առևտրի և արհեստավորության ձեռնարկ-արհեստանոցները զուգահեռ անհատական կյանքի ընդհանուր զարգացման — հետզհետե կրճատվում են՝ զուրկ մնալով քարգաննների ու աշակերտների շարքերը։ Խոշոր առևտրի և արդյունաբերության զարգացմամբ, ինչպես քիչ հետո կտեսնենք, նվազում և թե այդ արհեստանոցների արտադրության քանակը, ձեռքից ընկնում նրա շուկան և թե համբարությունը մորթես այդպիսին անցնում և պատմության դիրքը՝ դիջնալով իր տեղը բանվորական կազմակերպություններին։

Իր աշխարհագրական դիրքով Հայաստանը ընկնում է Արևելքի խաչաձև ճամբաների հանգույցին։ Սև ծովի ափերից թե Ռուսական տափաստաններից դեպի Պարսկաստան ու կենտրոնական Ասիա մորթ ձգվող առևտրական բանուկ ճանապարհները անցնում են նրա ձորերով և լեռնափաշաներով։ Այս հանգամանքը չէր կարող չնպաստառնալ թե նրա առևտրական կյանքի զարգացման ասպարեզ և թե նրա անհատա-քաղաքական դրության վրա։ Հաճախակի պատերազմական գործողությունները իրանց ավերածություններն ու կամայականությունները հետ միաժամանակ զարկ են ավել նաև նրա առևտրի ծավալման ու ծաղկման, խոշոր գումարներ կենտրոնացնելով այստեղ՝ դեպի խոպերխայի կենտրոնական շրջաններն արտահանելու չնչին արժեքով այն բոլոր բարիքները, որոնց բացակայությունը խոշորապես անդրադառնում էր առւսական շուկայի վրա։

Թե վոր սահմանի չէր հանդում ընդհանրապես Անդրկովկաս ներմուծվող ֆաբրիկաների և այստեղից արտահանվող հում նյութերի քանակը,—սկսած Ռուսական տիրապետության սկզբնական շրջաններից— դա յերևում է հետևյալ աղյուսակից *)։ (Աղյուսակը՝ 11 եջ)։

Այս թվերը պերճախոս ապացույց են առևտրական կապիտալի գիշատիչ գործունեության։ Պետք է միայն ուշադիր, վոր Հայաստանի առանձին շրջանների վերաբերյալ թվական տվյալները ընդհանուր գումարից զատելը, ըստ յերևույթին, հնարավոր չե)։

Մի հանգամանք ևս չպետք է աչքիդ առել, զա զորքի պարենավորման խնդիրն է, վորը նմանապես խոշոր գումարներ էր շուկա նետում։ Այս առթիվ կատարուածների, առևտրա-

*) Н. Шавров. Обзор производительных сил Кавказского Намесничества за 1879 г. Стр. 342—345. Тифлис, 1880 г.

Թվակ.	Ներմուծած ե (ռուբլիներով)			Արտահանած ե (ռուբլ.)			Ընդամենը			Ժառանգիչ գործունեության տոկոսը
	Ապրանքով	Դրամով	Հավաք.	Ապրանքով	Դրամով	Հավաք.	Ապրանքով	Դրամով	Հավաք.	
1822	825.985	—	825.985	463.123	—	463.123	1.289.108	—	1.289.108	—
1830	2.518.303	—	2.518.303	584.680	—	584.680	3.092.983	—	3.092.983	—
1840	3.406.735	2.587	3.409.322	1.019.989	1.513.687	2.533.676	4.426.724	1.515.274	5.941.998	254.066
1850	3.741.211	68.782	3.809.993	1.005.996	2.829.354	3.835.350	4.747.207	2.898.136	7.645.443	411.618
1860	5.049.758	82.236	5.131.994	2.318.326	2.006.454	4.324.780	7.368.084	2.088.690	6.456.774	749.547
1870	11.461.384	1.029.820	12.491.204	3.927.344	504.817	4.432.181	15.388.718	1.534.667	16.923.385	1.329.602
1875	8.096.141	877.719	8.973.860	5.887.358	374.794	6.262.152	13.983.499	1.252.513	15.236.012	1.213.664

կանների սերազործությունների չափը սահմանից անցնում եր. գործի անունով, նրա ուժին հենած՝ թալանում էին ոչ-ում ժողովրդի աշխատանքը։

Մինչև 70—80-ական թվականները դեռ ևս դեպի Մոսկով, Վարշավ կամ այլուր չվող կաթվանները ու նրանց «խրիզավոր» սերերը հետզհետե այլևս հարկից ընկնում էն՝ յերբ ռուսական արդյունաբերական շրջանները ռուս-տաճկական պատերազմից հետո (1877 թ.) առանձին յեռանդով կանգ էն առնում Հայկական գավառներից հում նյութի արտահանության վրա։ Սակայն առևտրական կապիտալը մուտք եր գործում նաև Հյուսիսային Պարսկաստան ու Անատոլիա, միաժամանակ կազմակերպելով հում նյութի արտահանության գործը։ Հայաստանը այդ առևտրի կապող հանգույցն եր, կամուրջը։ Այսպիսով վոչ միայն սեփական յերկրի արտադրության բարիքների արտահանությունն ու ներմուծումն եր ծավալվում, այլ և Պարսկաստանի և Տաճկաստանի խորքերից ամենահզոր վոսկին ձգում եր ուզած կարավաններով տասնյակ հարյուր հազարավոր փթերով հում՝ թանգարժեք ապրանք Հայաստանի վերայով դեպի Հյուսիս։ Այդ առևտուրը պայմանավորված եր խոշոր շահով, ուստի և արագությամբ լայնանում, ծավալվում եր։ Առանձնապես խոշոր չափերի յեր հասնում 90-ական թվականներին։ Այսպես Պարսկաստանից ներմուծվել և Հայաստան և Յերևան-Ազատաֆա գծով մեծ մասը արտահանվել դեպի Հյուսիս-դանագան ապրանք՝ փթերով *)

թ.	Ջուլֆայի վրայով	Շարուր-Դարալագյազից	Որզուրթից	Ընդամենը
1891	167000	199000	13864	379.864
1892	200000	268000	14395	482.395
1893	217000	379000	43664	639.910

Միևնույնը նաև Տաճկաստանի Հյուսիսից՝ Իգդիրի, Կաղզվանի, Սարիղամիշի պունկտերից Յերևան-Ազատաֆա և Ղարս-Ալեքսանդրապոլ-Ազատաֆա կամ Թիֆլիս գծերով։ Մեզ, ի հարկե, չի հետաքրքրում այստեղ թե ինչ ապրանք և արտահանված. մենք միայն արձանագրում ենք առևտրի թևավատրած աճումը։

Ինչպես վերևում հիշատակեցինք՝ Հայաստանը նկատվում եր վորպես սպառող շուկա, ուր արտահանվում եր ռուսական ֆաբրիկատ։ Այդ հաշվով միայն Յերևանի շուկա և ներմուծած Հյուսիսից (Ռուսաստան՝ Բագու)՝ Ազատաֆա շոսեյով՝

1890 թ. 832.616 փութ ապրանք
1891 թ. 983.257 » »
1892 թ. 932.535 » »
1893 թ. 1.797.714 » » *)

Ներմուծածի մեծ մասը գործարանային ֆաբրիկատ է, ապա կերասին, յերկաթ, շաքար և այլն։ Վերջապես միայն Յերևանի շուկայի արտահանության կարողությունը 1894 թ. համար քաղաքային վարչությունը վորոշում եր մոտ 2 միլիոն փութ ապրանք՝ 6.125.000 ռ. ընդհանուր արժողությամբ **), իսկ յերկու ուղղությամբ՝ դեպի Յերևան և Յերևանից շարժվող ապրանքի քանակը այդ ժամանակ բարձրանում եր 4.425.000 փթի՝ համաձայն միայն Քանաքեռի կայանի տված տեղեկությունների ***), վորը ցույց է տալիս, թե վորպիսի արագությամբ եր զարգանում առևտուրը, ինչքան ապրանք եր արտահանվում կամ ներմուծվում։

Ինչ են ասացուցում այդ թվերը. անկասկած այն, վոր ռուսական առևտրական կապիտալը մինչև 80—90-ական թվականները գրեթե ամբողջովին իր ձեռքում եր կենտրոնացրել մեր յերկրի առևտուրը և լայնացրել գրամական շրջանառության շրջանակը։ Առանձ պայմանները և պետական ընդհանուր քաղաքական վարքագիծը չեզին թեվավորում նրա «նատակեցությունը», այլ, ընդհակառակը, հովանավորում՝ անտեսական թալանի կիրառվող մեթոդները։ Պետական հովանավորող քաղաքականության կառչած գրի կապիտալը թեև գանդաղորեն, սակայն և այնպես, հետզհետե և յերկրում առաջին արդյունաբերական ձեռնարկները՝ անհամեմատ նվազ գրամագլխով ու չնչին բանվորական ուժով։ Յերկրի անսպառ հարստությունները շահագործելու նպատակով բնականաբար ձեռնարկվում և մեքենաների տեղափոխության, կառուցվում և տեխնիկայի ժամանակի պահանջներով կահավորված գործարաններ, վորոնք նախակարապետ են հանդիսանում

*) Данилович. Араксская равнина. (Район Тифл.—Карской—Эриван жел. дороги Эконом. и коммерч. отношениях) էջ 791, Թիֆլիս 1896 թ.

*) Ibid էջ 792։ —1893 թվի սոսի պատճառով ներմուծված է 1893 թ. մոտ 7 0.000 փութ տարբեր հացահատիկներ։ Հանելով անգամ այս ընդհանուր ներմուծումից (1797714 փ.) այնուամենայնիվ մենք կստանանք մոտ 1.100.· 00 փ., վոր ցուցադրում է ընդհանուր վերելքը։

**) Jbid. էջ 783.

***) С. Заваров. „Опыт исследования сельского хозяйства хл. района Эрив. губ. и Карской обл.“ էջ 383. Тифлис. 1899 г.

Հայաստանի արյունագրծութեյան հետագա զարգացման ու ծաղկման։ *)

Սակայն այդ պրոցեսը կատարվում էր դանդաղ, կրեյի քայլերով՝ չեն թե այստեղ բացակայում էր շահագործման առաջնակարգ աղբյուրներ, կամ բանվորական ուժն էր խիստ թանգ ու պայմանները՝ դժնդակ, և կամ շահը աննշան,—ոչ, կուլտուրապես և անտեսապես հետամնաց Հայաստանը այդ տեսակետից շատ ավելի հարմարութեյուններ ուներ։ Գաղտնիքը հենց նրանումն էր, որ Հայաստանի շուկան, ինչպես նկատեցինք, բացառապես գտնվում էր ռուսական առևտրական կապիտալի ճանկերում, որը միայն ծծում էր, քամում նրա վերջին հյութը՝ դեպի դուրս՝ կենարտնական շրջանները արտահանելով այն ամենը, ինչ որ կարող էր գյուղութեյամբ մշակվել սեփական բնագավառում։ Այստեղ գործարան թե ֆաբրիկա կառուցելու, արտադրական միջոցները զարգացնելու մտքից միշտ հեռու էր ազգային թե ռասր կապիտալը—չէ՞ որ ծայրագավառները դեռ ևս ռուսական բուրժուազիայի ու ինքնակալութեյան հանդեպ բանեհուսութեյան վիճակներն անգամ չունեին։ Յեվ չէթե Հայաստանը ազատ ու արտահանող շուկայից խեղդոմում էր արտադրական միջոցների զարգացման ու արդյունաբերութեյան և զարգ քայլերով, յերերուն հույսերով բարձրանում էր նրա քաղաքներում ու հանքերում ծխնելույզի փողը, լսվում մեքենայի շաչը...—այդ էլ պիտի վերագրել առավելապես արտաքին, ռասր արդյունագործական կապիտալի ներխուժման անխուսափելիութեյան հետ շաղկապված այն առողջ անտեսական մրցութեյան, որը հատկանշական յերեվույթ էր ռուսական իրականութեյան համար անցյալ դարի վերջին տասնամյակներում։

Հարկավ, չէթե հետևենք 19-րդ դարի վերջին յերեք տասնամյակում յեվրոպական ինդուստրիայի զարգացման, միանգամայն հասկանալի կդառնա ընդհանրապես հասարակութեյունների կուլտուր-տնտեսական կյանքի զարգացման վողջ ընթացքը։ Յեվրոպայում այդ ժամանակ կապիտալիզմը իր զարգացման գագաթնակետին էր հասնում։ Սեփական միջավայրում կուտակված հավելյալ կապիտալը այլևս չէր արգարացնում շահագործող դասակարգի խելահեղ պահանջները։ Նա նորանոր հատուկ համաութեյամբ ախնաձում էր հեռավոր գաղութային հարուստ

*) Ալմիածնի վանքը փորձ է անում հիմնել վաղարշապատում շաբաթը գործարան. սակայն կաթսաների գոյութեյունից հետո նա փակվում է ընդմիշտ՝ 1857 թ. Չնայած անգամ իր «բարձր տեսակի արտադրութեյան» (М. Сагателов „Экономические очерки Эриванской губернии.“ 1879 г. Тифлис).

նացվին... նա ձգտում էր հայրենական «ոջախից» դուրս՝ նոր հայրենիք ստեղծել, նոր շուկաներ տիրապետել՝ ավելի շահ կուտակելու համար։ Նրա հաղթական մուտքը դեպի անտեսապես ու կուլտուրապես հետամնաց յերկրները ընդունում է ինքնատիպ բնույթ և պայմանավորվում նրանով, որ այստեղ, «այս հետամնաց յերկիրներում շահը ավելի բարձր էր՝ որովհետև կապիտալ քիչ կար, հողի արժողութեյունը համեմատաբար ցածր էր, աշխատավարձը՝ նվազ, հում նյութերը՝ ժամն*)»։

Դեռ ևս 70-ական թվականներից արտասահմանյան կապիտալիստները փորձեր են անում հաստատվել Հայաստանում՝ կոնցեսիաներ վերցնել, խոշոր նախաձեռնութեյուններ սկսել։ Այսպես 1873—4 թ. գերմանացի հռչակավոր ինժիներ—գիպրավիկ Գորտոմը (գործազրկված կապիտալիստների կողմից) ուսումնասիրում է առաջինը Սարդարապատի տափաստանը՝ ծրագրում յերկաթուղագիծ անցկացնել, կառուցել մի նոր քաղաք, վոռոգել 75.000 դես. և այլն, սակայն նրան մերժում են։ **)

Մինչդեռ 1872 թ. գնդապետ Ն. Ա. Կախանովին կապալով է տրվում Արազդայանի տափաստանը՝ մոտ 60.000 դեսյատին—65 տարով չնչին կապալավարձով։ 10.000 դես. վոռոգելու համար կառուցվում է առու (1874. 3 XI) 200.000 ռ. արժողութեյամբ։ Հողամասեր են գնում նաև Ռուս կալվածատեր Շերեմետևը, Բոբրինսկին, Զուբկովը, Ամիրխանյանը և ուրիշները։ Հողի արժեքը տատանվում է։ Այնուհետև նույն թվականին Շարուր-Դարալագազում Շան-Գիրեյը կապալով վերցրած մոտ 4000 դ. Ղազաշար վոռոգելու համար փորում է 30 վերստ ձգվող առու (1874 թ. 15 XII)։***) Յեվ այսպես անվերջ։

Դիմադիր յուրաքանչյուր մի փորձ արհեստական ընտավորութեյուն պիտի կրեր, պլիտաիով ու հետագիտական։

Անդրկովկասը ընդհանրապես կուսական իր լեռներից «թափվող», հարթավայրերից «հոսող» հարստութեյուններով մնին էր այն շրջաններից, ուր 70—80-ական թվականներից սկսած կենտրոնանում, հաստատվում էր յեվրոպական, ապա և մասամբ ռուսական խոշոր կապիտալը։ Այսպես անգլո-չվեդական միջոցները գրավում են նավթարդյունաբերական շրջանները ու նախորոշում նրա զարգացման ուղիները, իսկ ֆրանսիական ու գերմանական

*) Н. Ленин. Империализм как новейший этап капитализма. էջ 18. Մոսկվա 1923 թ.

**) С. А. Егиазаров. Исследования по истории учреждений в Закавказьи. часть I-ая стр. 243. Казань, 1889 г..

***) М. Сагателов. Экономические очерки Эриванской губ. էջ 8—13, 16—17, 20—22.

կապիտալը կենտրոնանում է առավելապես գործարանային շրջաններում՝ մեղմում լեռնարդյունաբերության շահագործման դարձը գլխին բացառապես անցնում է նրանց ձեռքը։

Հայաստանի տնտեսական կյանքում կատարվում է խոշոր բեկումիւ։ Առևտրական թալանին փոխարինում է յերկրի արտադրական ուժերի կազմակերպման ծայրն աշխատանքները։ Արդյունաբերական կյանքը կենդանության նշաններ է ցույց տալիս, զարգացման հունի մեջ մտնում։ Կահավորվող նոր տիպի արհատանոցներն ու գործարանները և բուսական կուլտուրանների ավելացած նոր յեղանակները անկասկած յերկրի կուլտուրտնտեսական կյանքում մտցնում են նոր շեշտ։

Հին, նահապետական անխռով դրախտավայրը, արբշյանիտ ու սրբակերտ Հայաստանը սրան զուգընթաց հետզհետե կորցնում է իր յերեկվա պատկերը։ Յերկու տասնյակ տարիների ընթացքում (1880—1900) նրա հատարտկական կյանքի տեմպը արագանում է, ներմուծվող կազմակերպվող ու կատարվող գործարանների մեքենաների շուրջը համախմբվում հազարավոր աշխատող ձեռքեր, անմիջական արտադրողներ։ Տեղհան են լինում գյուղացիական չքավորության շարժունները ու հետզհետե կենտրոնանում թե յերկիրը խաչաձևվող՝ կատարվող յերկաթուղագծերի շուրջը և թե Հայաստանի ու Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում։ Հատարտկական կյանքը յենթարկվում է հիմնական փոփոխությունների։ Անթիվ ու անհամար «արհեստանոցները»— կամ ինչպես պետական տոտատիստիկան և հրատարակում—«փարբրիկա-գործարանները» իրենց ջատագովներով, աշխատավոր— աշկերտներով չքանում, հրապարակից անհետանում են—մինչդեռ յերևան են գալիս նոր կոմպաններ, կուլտուր—տնտեսական կյանքի զարգացման նոր հեռանկարներ։ Դեռ ավելին.—արդյունաբերական կապիտալը ընդմիշտ թաղում է յերկրի բնական հարստությունների շահագործման արհեստահատեսական ֆորմաները ու նրա շարժական ուժերը, գործիքները՝ փոխարինելով բարձր տեխնիկայի, շոգիի, հլեքտրականության, ձևափոխում և ուժը, նյութը և մարդկային աշխատանքը հասցնում է անհամեմատ լավագության, արդյության։ Փոխվում է աշխատանքի և կապիտալի, բանվորի և ձեռնարկատիրոջ մինչ այդ ընտանեկան հարաբերությունը՝ կապիտալիստական տնտեսության ընթացքում բարձրացող շահագործվողների և շահագործողների բարդ փոխհարաբերությամբ։ Դարերի ընթացքում ստեղծած միտքը պայծառանում, խորհրդանում է։

Մետաքսի, բամբակի, կոնոպների, ըրնձի, կաշվի, սպիրտի,

ինչպես և հանքային այլ և այլ արտադրությունները ընդունում են արդյունաբերական բնույթ՝ շնորհիվ ցրված, անջատ «գործարանների» կենտրոնացման՝ շահագործման միջոցների փոփոխման։

Արդ՝ ինչ եր յերկրի արդյունաբերության գլխավոր ճյուղերի պատկերը մինչ այդ և դրանից հետո։

Բամբակի արդյունաբերության զարգացումը, որ Հայաստանի ժողովրդական անտեսության կարևոր ճյուղերից մեկն է, չեր նկատվում մորպես առաջնակարգ կուլտուրա։ Ինքնամփոփ Հայաստանի դաշտավայրերում նա մշակվում եր նահապետական միջոցներով և նկատվում իրրև յերկրորդական, լրացուցիչ հանդամանք յերկրագործության զրաղվող բնակչության համար։ Մի քանի տասնյակ կամ հարյուր հազար փութ բամբակը արտահանվում եր դեպի հյուսիս՝ հազար ու մի փոխադրական դժվարին պայմաններում։ Մինչդեռ ռուսական տեքստիլ արդյունաբերության պահանջները վազուց արդեն Յերևանի բամբակի շնորհիվ դիպել եյին պատկառելի չափերի։ Առաջին անգամ 1884 թ. Ս. Մարոզով յեվ ըկ., քիչ հետո Ա.Գրեչ Կարագինկին՝ խոշոր գրամատերերը բաց արին Յերևանում և Դարալագյազի Յենգիջա գյուղում իրենց գրասենյակները վոչ միայն բամբակ գնելու այլ և բամբակագործության մշակելու, խրախուսելու, կայուն հիմքերի վրա գնելու համար։ Վերջին նպատակով այդ գրամատերերը վորոշ վարկ բաց արին գյուղացիության։ Նույն թվականին առաջին անգամ բամբակ մաքրելու մեքենաներ են տեղափոխվում Արարատյան դաշտի գյուղերում։ Շուտով (1887 թ.) ավելանում են նաև յերեք առևտրական ֆիրմաներ՝ Մոսկվայից, Վարշավից և Թիֆլիսից։ Մինչ այդ մի քանի շրջաններում ոգտագործված եր Cotton syppey association-ի միջոցով Ամերիկայից առացված սերմը՝ բամբակի տեսակները ավելացնելու նպատակով։ Բամբակի կուլտուրան շնորհիվ բաց արած վարկի ու խրախուսանքի հիմնական աշխատանք և նկատվում նրանով զրաղվող գյուղացիության կողմից։ Յերևանից արտահանած բամբակի քանակը ցույց և տալիս արդյունաբեր-թյան այս ճյուղի զարգացման ընթացքը*)։

1861 թ.	Յերևանի նահանգից	արտահանված	և	30.000 փ.
1862	»	»	»	60.000 »
1863	»	»	»	150.000 »
1876	»	»	»	132.000 »
1877	»	»	»	149.084 »

*) Տեղեկությունները և թվերը քաղված են՝ Даниловч. Аракская равн. էջ 654 667, 766 и Сагателов. Экономические очерки Эр. губ. էջ 40,

1645-78 4936
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUA-Арм.ССР

1890 թ. Ազատաֆայի վրայով արտահանած է 386.346 փ.*)։
1891 » » » » 368.964 »
1892 » » » » 409.811 »
1893 » » » » 469.885 »
1894 » » » » 500.000 » **)

Այլ կերպ ասած տարեկան $3^1/_2$ մինչև 4 միլիոն ռ. արժողութեամբ։

Սպիրտի և կոնյակի արդյունաբերութիւնը նմանապես խոշոր փոփոխութիւններ և մասնաւոր յերկրի պետգործութեան զարգացման մշակման մէջ։ Նախկին «գործարան»—այսկոխրոջ մառանը՝ առանց մեքենայի, մաքրութեան կամ զտման միջոցների—փոխարինւում են 90-ական թվականների սկզբներից կառուցվող իսկական գործարաններով, որ միաժամանակ բարձրացնում և նաև խաղողի կուլտուրան։

Սպիրտի արդյունաբերութիւնը առանձին զարկ և առնում 90-ական թվականներից. ***)

1889 թ. 181 գործարանից ստացված է 2.341,736 վեդրաւոր
1890 թ. 142 » » 2.474.448 »
1891 թ. 231 » » 4.541.135 »
1892 թ. 274 » » 5.701.169 »
1893 թ. 500 » » 8.569.593 »

Աքցիզ վերցնող չինովնիկի հիշատակած «գործարանները» ի հարկէ չեն համապատասխանում բուն իսկական իմաստին։ Արտադրութեան խոշոր առիւծը պատկանում էր միայն մի քանի գործարանի, որոնցից 900-ական թվականներին ռուսական խոշոր դրամատեր Շուստովը կառավարեց, կազմակերպեց համառուսական նշանակութեան ստացած Յերևանի սպիրտի կոնյակի գործարանը։ 1900-ական թվականներից այս «գործարանների» թիվը նվազում և անհամեմատ արագ, իսկ պատրաստվող սպիրտի քանակը բարձրանում է՝

1900 թ. ստացված է 8.500.000 վեդր.
1908 թ. » 9.200.000 »

Վորից $80^0/_0$ արտադրում էին 4 գործարանները (Յերևան, Ղամարլու), վորոնք հետզհետե իրենց ձեռքն էին առնում արտադրութեան այդ ճյուղի մոնոպոլիան։

Արտաքին շուկա յեր արտահանվում ստացված սպիրտի մինչև $50^0/_0$՝ այսպես՝

1892 թ. արտահանվել է 2.584.043 $^1/_4$ վեդր.
1893 թ. » 3.434.673 $^1/_2$ »

Իսկ յերկաթուղու բացման շրջանից սկսած արտահանած

*) 1890 թ. հունձը յեղել է 504.550 փ. տես К. Календарь 1897 թ.

**) Համաձայն Յերևանի քաղաքային վարչության 1894 թ. նախահաշվի՝ Даниловичъ, էջ 783։

***) Jbid. էջ 700—702։

սպիրտի քանակը հասնում էր 6.000.000 վեդր.։

Շնորհիվ գործարանային տեխնիկայի զերազանց կարգացման, կոնյակի արդյունաբերութիւնը առանձնակի տեղ է գրավել առավելապես 900-ական թվականներից՝

1900 թ. արտադրած է 283.000 վեդր.
1902 թ. » 845.000 »
1904 թ. » 3.229.000 »
1906 թ. » 2.387.000 »
1908 թ. » 4.824.000 »

Սրանից արտահանվել է մոտ 90 $^0/_0$-ը։

Միևնույն ժամանակաշրջանին և վերաբերում նաև մետաքսագործութեան, կաշվեգործութեան համեմատական կատարելագործութիւնը։ Յերկրի աշխարհագրական դիրքն ու ուրիշ պայմանները միշտ հանդիսացել են արտադրութեան այս ճյուղերի զարգացման նախադրյալները։

Սակայն և այնպես վոչ մի բնագավառում այն չափով չկենտրոնացավ արդյունագործական կապիտալը, վորքան լեռնարդյունաբերական ոլորաններում։ Կարճ ժամանակամիջոցում նա ողակեց Ալահվերդի-Շամբլուղի և Ղաթարի հարուստ պղնձահանքերն ու գործարանները։ Այստեղ, այս բնագավառում պիտի փնտռել արդյունաբերական կապիտալի խոշոր կիզակումը, վոր միաժամանակ իր շուրջը կուտակեց հազարավոր բանվորութեան և զարկ տվեց յերկրի տնտեսական կյանքի առաջընթացութեան։

Պղնձի արդյունաբերութեան զարգացումը հետևյալ պատկերն է տալիս՝

Ստացված է պղինձ

թ. թ.	Ալահվերդի-Շամբլուղ		Ղաթարի գետափ		Ընդամենը	
	Հանք	Հալած պղինձ	Հանք	Հալած պղինձ	Հանք	Հալած պղինձ
1887 [1]	—	1500—(2000)	—	—	—	—
1897 [2]	—	4500—(6000)	—	33.339	—	37.839
1900 [3]	543.108	19.682	259 160	51.783	802 268	71.465
1901 [4]	2.089.650	59 769	325.418	57 820	2.415.068	117-589
1904 [5]	—	—	384.145	68 .76	—	—
1906 [6]	1.923.944	88.762	311.115	55.700	2.235.059	144 462 $^3/_4$
1907 [7]	3.673 594	123.734	548.491	72.476 $^3/_{10}$	4.222.005	196.210 $^{23}/_{10}$

[1]) Аргут.—Долгоруков. Борчалинский уезд (район и тд.)
[2]) Кавк. Календарь за 1898—99 г. г.
[3]) Jbid—за 1902 г.
[4]) Jbid—за 1903 г.
[5]) Дело за № 268 Кавказск. Горного Управления (Հ. Ֆ. Տ. Ա.).
[6]) К. Календарь за 1909 г.
[7]) Jbid—за 1910 г.

Այս թվերի բովանդակությունը ավելի հասկանալի կդառնա, յեթե նկատի առնենք, որ առաջին անգամ ֆրանսիական կապիտալիստները վտակ են գրել Հայաստան և հատատավել Ալավերդու շրջանում 1887 թ., յերբ հուն լեռնարդյունաբերողները այլևս անզոր եյին շարունակելու հանքերի շահագործման պիշատիչ յեղանակը։ 80-ական թվականների վերջին և 90-ականի ընթացքում ֆրանսիական կամպանիան հիմնական փոփոխություններ և մտցնում շահագործման մեթոդների մեջ, ինչպես և կառուցում նոր վառարաններ, վառելժակեաններ, կարգի ձգում ձուլարանական գործարանները, կանոնավորում մի քանի տասնյակ բնակարաններ, սակայն այնուամենայնիվ արտադրությունը 5 6000 փթից անցին չի անցնում։ Անհրաժեշտ եր խոշոր գլխավոր և լայն նախաձեռնություն՝ շահագործման շրջանակները լայնացնելու—մի հանգամանք, որ թե վախեցնում եր գործարատերերին և թե՝ ճանապարհների բացակայությամբ անհնարին սեպվում։

1899 թվականին պատրաստ եր յերկաթուղին։ Ալավերդու գործարանային կյանքը մանում և նոր շրջան։ Հնոցատեղում տեղատափվում և նրա արտադրությունը, բանվորության թիվը, լայնանում են շահագործման շրջանակները, նոր պլերսպեկտիվներ փռում շահագործողների առաջ։ Միևնույն յեռանդով 90-ական թվականներին հրապարակ են նետվում Դաթևի լեռնարդյունաբերողները։ Ձեռնարկությունների թիվը կրկնապատկում և, ձուլարանական գործարանների թիվը ավելանում և «Սյունիք» գործարանով (1897 թ.)։ Սակայն զարգացման այն թռիչքը, որ նկատելի յեր Ալավերդու գրեպտյում—այստեղ բացակայում եր շնորհիվ նեղքին մի շարք հանգամանքների, որոնց կանդրադառնանք իր տեղին։ Թե ինչ արագությամբ եր շահագործվում լեռնահանքային հրատատությունները և զարգանում արդյունաբերությունը—պարզ և այդ թվերից, իսկ թե ինչպիսի պայմաններում և ինչ գնով եր ընթանում այդ աշխատանքը՝ կտեսնենք ատրև։ Նկատենք, որ 1906 թ. արտադրությունը համեմատած նախորդ տարիների ընդհանուր վերելքին՝ անհամեմատ նվազ և յերկու տեղում էլ շնորհիվ բանվորական գործադուլների։

Պղնձաարդյունաբերության զարգացման վերաբերյալ այդ թվերը, ի հարկե, չպետք և ընդունել որպես բացարձակ հշմարտություններ, քանի որ նրանք հիմնված են ադմինիստրատիվ բարեհաճ տեղեկությունների վրա—այլ մոտ նախագրած մոծությունները, որ ցուցադրում են ավյալ արտադրության զարգացման ընթացքը։ Այդ միևնույնն և ապացուցում նաև այն, որ

1894—6 թվականներին յերկու տեղում աշխատող բանվորության թիվը հասնում եր մինչև 1000-ի, մինչդեռ հեղափոխության (1905 թ.) նախորյակին այս յերկու կենտրոնները Հայաստանի դյուղերից, Պարսկաստանի հյուսիսից ու այլ շրջաններից կենտրոնացրել եյին իրենց շուրջը աշխատանքի մի համեստ բանակ՝ 6 7000 բանվորություն։

Քարտի արդյունաբերությունը նմանապես զարգացման նշաններ եր ցուցադրում 90-ական թվականներին։ Այսպես Յերևանի և Դարեի շրջանների հանքերը արտադրել են *)

1897 թ.—1,504,285 փութ
1897 թ. 1,955,534 »
1899 թ.—1,820,724 »
1901 թ. 2,604,969 »

Այս թվերից ակնհայտնի յե, որ 1890-ական թվականներից սկսած Հայաստանի արդյունաբերական կյանքը զարգացման հունի մեջ եր մտել։ Սակայն ինչ փոփոխություններ, շերտավորություններ եր կատարվում դրան զուգընթացաբար հասարակական կյանքում։ Այս առթիվ մեր տրամադրության տակ յեղած սատատիստիկական ավյալները վերաբերում են ըստ ամենայնի 1886 թ. ընտանեկան և 1897 թ. պետական մերյա՝ ցուցակագրության, թեպետ սրանք էլ իրականությունից հետ յեն և խոկական լինելու համար մնում և շատ բան ցանկալ։ Անգամ այդ և ուրիշ ցիր ու ցան տվյալներով պետք աշխատել պարզել յերկրի արտադրական կյանքում կատարվող անխուսափելի փոփոխություններին զուգահեռ հաջորդող հասարակական նոր շերտավորությունները, որ զարգացման նոր ազդակներ պետք դառնային յերկրի կուլտուրական բովանդակ կենցաղի համար։

Համաձայն 1897 թ. ցուցակագրության՝ Կովկասում յեղած 104.655 անտեսություններից՝ որտեղ աշխատում եյին (բացի ընտանիքի անդամներից) նայել վարձու բանվորներ, բաժանվում եյին ըստ վերջինների թվի՝ **)

1-ական վարձու բանվոր 76,535 անտեսություններում
2—3 » » » 22,836 »
4—5 » » » 3,269 »
6—10 » » » 1,427 »
11—ից ավելի » 598 »

*) Кавк. Календарь за 1901 и 1903 г. г.—Պետական այս հանքերը գտնվում եյին մասնավոր կապալավի ձեռքում. կապալավարձը ընդհանուր հաշվով հավասար եր մոտ 80.000 ռ. (Кавк. Календарь за 1909 г.).

**) Ձեռքի տակ չունենալով „Первая всеобщая перепись Рос Имп.“—այս թվերը վերցնում ենք՝ Б. Ишханян „Народности Кавказа“ գրքից։

Ինչպես տեսնում ենք այստեղ գերակշռող տեղը գրավում են մանր, վարձու 1 բանվորով տնտեսությունները։ Սակայն ակնհայտնի չի նայիվ այն, որ վորքան բարձրանում է վարձու բանվորների թիվը—տեղ է՝ ընդլայնանում տնտեսության արտադրական շրջանակը, նույնքան և նվազում է համեմատաբար նրանց (տնտեսությունների) քանակը՝ յենթարկվելով կոնցենտրացիայի։ Այս պրոցեսը առավելապես հատուկ եր քաղաքային տնտեսություններին, վոր նկատելի չի հետևյալ տոկոսային փոխհարաբերությունից։ *)

Քաղաքի տնտեսությունների թիվը գյուղականի նկատմամբ կազմում եր՝

1—	վարձ.	բանվ.	26,64%
2—3	»	»	38,46 »
4—5	»	»	41,39 »
6—10	»	»	34,15 »
11—ից ավելի	»	»	43,47 »

Քաղաքային տնտեսությունը, պարզ և, զարգանում, բարձրանում եր, ինչպես և կենտրոնանում եր այստեղ բանվորությունը։ Սակայն տեսնենք այժմ թե ինչ եր կատարվում Յերևանի նահանգում։ Այդ տեսակետից չափազանց հետաքրքիր պատկեր և տալիս Յերևանի նահանգի «ֆաբրիկա—գործարաններում», այսինքն՝ մանր արհեստանոցներում աշխատող բանվորության քանակի տեսակետից ստորաբաժանած հետևյալ ապյուսակը**)։

Քանի՞ բանվորով	Ֆաբրիկա—գործարանների թիվը			
	1884 թ.	1886 թ.	1897 թ.	1906 թ.
1	15	3505	2376	2215
2—3	276	1611	682	888
4—5	236	73	387	36
6—7 և բարձր	15	31	40	82
	542	5220	3485	2221

*) Jdid.

**) Աղյուսակը կազմել ենք К. Календарь-ի 1886—1910 №№-ներից։

Այստեղ առաջին հայացքից կարելի չեր յեզրակացնել, վոր Յերևանի նահանգում «գործարանային» կյանքը զարգացել ու ծաղկել է 1880 ական թվականների յերկրորդ կեսից և այնուհետև թեք գծով իջել է 5220-ից մինչև 3221-ի (և 2607-ի՝ 1915 թ.)։ Սակայն դա կլիներ միանգամայն սխալ. այստեղ կատարվել ու զարգացել է միևնույն պրոցեսը՝ մանր տնտեսությունները կամ քայքայվել, փակվել են, կամ ձուլվել, կենտրոնացել՝ կոնցենտրացիայի յեն յենթարկվել։ Վորովհետև այդ «ֆաբրիկա—գործարանները» հենց նահապետական արհեստանոցներից և անչնագործական «ձեռնարկություն» շրջանակից ավելի բարձր չեյին, ուր $^2/_3$-ից ավելը 1 վարձու բանվորով եր՝ կամ իրեն սերոջով—բնականաբար չգիմանալով զարգացող կոնկուրենցիային և շատ դեպքում զուրկ արտադրությունը բարձրացնելու վորևե հնարավորությունից—պիտի միանային, ձուլվեյին կամ խափան փակվեյին (1 բանվորով՝ 3505—2376—2215) ի հաշիվ նոր տիպի գործարան—արհեստանոցների զարգացման (6-ից ավելի բանվորով՝ 15—31—40—82), վորոնք ունեյին խոշոր դրամագլուխ, մեքենայական արտադրության զարգացման լիակատար հնարավորություն և ավելի թվով բանվորություն։ Վոր այս հանգամանքը բարձրացնում եր բուն տնտեսության ձեռնարկությունների արտադրությունը և զուրկ տալիս արդյունաբերության զարգացման, ինչպես և առանձին կուլտուրաների մշակության—դա ակնհայտնի չի այն յերևույթից, վոր չնայած այդ «ֆաբրիկա—գործարանների» թվի ընդհանուր առմամբ արագ նվազմանն, վոչ միայն չի պակասում, ընդհակում նրանց արտադրությունը՝ ռուբլիներով (տես հետևյալ ապյուսակը), այլ և մասնակի բարձրանում է։ Նամանավանդ յերթ ի նկատի ունենանք, վոր բանվորության թիվը Յերևանի նահանգում 8707-ից (1886 թ.) իջնում է 6382-ի (1906 թ.) և 4738-ի (1915 թ.)), իսկ արտադրության գումարը 1000 ռ.-ով 216-ից (1884 թ.) բարձրանում է 1219-ի (1897 թ.), ապա 1404-ի (1906 թ.), 1730-ի (1908 թ.) և 3380,3 (1912 թ.)։

Պատկերը ավելի լրիվ կլինի, յերթ համեմատենք Անդրկովկասի 4 նահանգի վերաբերյալ հետևյալ ապյուսակը։

Հիշատակած շրջանների արդյունաբերության զարգացման չափազանց հետաքրքիր նկարագիրն է տալիս այս աղյուսակը։ Բացուն, նավթարդյունաբերության կենտրոնը հսկայական քայլերով առաջադիմում է թե ֆաբրիկա-գործարանների ու բանվորության թվով և թե, մանավանդ, արտադրականության, որ՝ ինչ որ տասնյակ միլիոններից հասնում է յերկու միլիարդի։ Առաջին տասնամյակում (1886—97 թ.) Թիֆլիսի նահանգի ձեռնարկությունների թիվը կրկնապատկվում է՝ արտադրության նույնության, մինչդեռ հետագա 10-ամյակում նրանք կրճատվում են $\frac{1}{3}$-ով արտադրության նույնության և վերջապես վերջին գումարի բարձրացումով ու բանվորության թվի նկատելի նվազմամբ։ Այս մինուսը կատարվում է նաև Գանձակի և Յերևանի նահանգներում ավելի ուժեղ՝ ձեռնարկությունները գլխավորապես արտադրության նվազում են, մինչդեռ արտադրության գումարը կրկնապատկվում է՝ առաջինում բանվորության թվի նկատելի աճումով (1897 թ.=8724, 1908 թ.=(29.195—18.392=) 10.803), իսկ յերկրորդում՝ սրա նկատելի կրճատմամբ։

«Կրճատվող» ֆաբրիկա-գործարանները յերկու կատեգորիայի են պատկանում. մեկը՝ դա մանր-սեփականատերերի տնարույս արհեստանոցներն են, մյուսը՝ այն «գործարանները», որոնց նահապետական միջոցներով կազմակերպած արտադրությունը անկարող եր մրցել ներմուծվող կամ յերկրի ներսում վերջին տեխնիկայով հագեցվող գործարանների պրոդուկցիայի հետ (ապրանք, կոնյակի, գինու և այլն)։ Յեթե հետևենք Յերևանի նահանգի արտադրության գլխավոր ճյուղերին վերաբերող ֆաբրիկա-գործարանների տախտակին *), կտեսնենք, որ իրոք այդ «գործարաններից» մի մասը պրոդրեսիվ զարգացման նշաններ և ցուցադրում (բամբակի, ապրանքի, մետաքսի, կաշվի և այլն) և ձգտում արդյունարերության միայն աղքատ հանդիսանալ, մինչդեռ մի ուրիշ մասը ապրում և իր գոյության վայրկյանը (գինեգործական, յուղատան, աղյուսի, ջրաղացի և այլն **)։

*) Վերցրել ենք այն „գործարան-ֆաբրիկանները", որտեղ աշխատող բանվորների թիվը ավել և քան 2½-ը, բացի ջրաղացներից՝ Кавк. Календарь за 1886—1910 г.

**) Յուրահատուկ տեղ և գրավում ջրաղացների արտադրողականության խնդիրը. միամիտ և անհայտ, թե ինչ գումարներից և կազմվում նրա արտադրության վերագրված թիվը՝ ստացված շահից թե ապրվող ցորեկի արժեքից։ Այդ յերկու տարբեր արժեքները կազմողների ստատիստիկան հաճախ չի տրոհում և
(Ленин-Аграрный вопрос в России 1908. СПБ.)

Ֆաբրիկա-գործարանների թվի, տված 1000 մարդկանց դիմաց ունեցած բանվորների թվի և տարեկան արտադրության գումարի դինամիկան 1886—1908 թթ.

Գավառի անունները	1884			1886			1897			1908		
	Ֆաբրիկա-գործարանների թիվը	Բանվորների թիվը	Տարեկան գումարը հազ. ռուբլով	Ֆաբրիկա-գործարանների թիվը	Բանվորների թիվը	Տարեկան գումարը հազ. ռուբլով	Ֆաբրիկա-գործարանների թիվը	Բանվորների թիվը	Տարեկան գումարը հազ. ռուբլով	Ֆաբրիկա-գործարանների թիվը	Բանվորների թիվը	Տարեկան գումարը հազ. ռուբլով
Բազմի նահ.	833	2138	3745,5	419	2237	10545	1206	29,160	17619	711	1890	25551
Յելիզավետպոլի . . .	542	2410	216	520	1503	8707	3485	1219	2581	(3221	1404	6382*)
Գանձակի . . .	2202	6878	1298	2205	3059	9267	1761	3306	8724	3183)	4761	29195*)
Թիֆլիսի . . .	1002	5015	8933	947	7045	7148	3798	7552	10554	1406	7413	11162
Ս. Քոմ.										2004	26950	25238
										443		

*) Ներկայացված տվյալների համեմատությունը 1884—1908 թթ. տե՛ս Կովկասյան Տարեգրքի 1911 թ. № 5-րդի։

*) Ներկայացված տվյալների համեմատությունը 1884—1908 թթ. տե՛ս Կովկասյան Տարեգրքի 1911 թ. № 5-րդի։

Ինչ գործարաններ.	1884			1886			1897			1901			1906		
	Մեծ գործարան.—Մանր գործարան.	Մեխանիկական ուժ (*)	Բանվորների թիվը միասին	Մեծ գործարան.—Մանր գործարան.	Մեխանիկական ուժ	Բանվորների թիվը միասին	Մեծ գործարան.—Մանր գործարան.	Մեխանիկական ուժ	Բանվորների թիվը միասին	Մեծ գործարան.—Մանր գործարան.	Մեխանիկական ուժ	Բանվորների թիվը միասին	Մեծ գործարան.—Մանր գործարան.	Մեխանիկական ուժ	Բանվորների թիվը միասին
Համբակ մաքրելու	15	2	20	51	736	376	64	742	335	40	664	347	80,1	876	
Սպիրտ պատ. . .	—	—	—	96	40	4	107	47	2	90	33	2	400	28**)	
Մասուր մանելու	15	35	500	121	325	33	137	380	22	130	167	12	84,5	216	
Կաշվի	42	12	141	18	151	35	19	155	34	24	167	35	20,6	259	
Փակնոցակար.—մանեկի . . .	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	9	15	
Բրուտ և բրիկնա	30	6	121	14	182	67	12	141	96	17	325	71	9,7	180	
Գինեգործ . . .	130	78	454	683	2771	329	434	1615	361	281	952	307	376,6	1011	
Յուղոնի . . .	206	61	961	35	683	201	39	754	165	33	595	161	36,2	414	
Ագռաղ	16	8	37	9	110	20	8	97	20	11	81	16	7,2	65	
Չրագործ . . .	—	—	—	423	3455	2333	334	3369	2231	401	3128	2170	2675	2991	

*) Ձրատրության ուժը մեկ 1000 ո. և աւելն ուղ.

**) Այս թիվը ակնհայտորեն վերագրած է աւելորդ 4 անգամ։

Յերևանի նահանգի առավելապես քաղաքային անտեսութեանների վերոհիշյալ ընթացքը Հայաստանի արդյունագործութեան զարգացման հրամայողական չափանիշը չէ դեռ, քանի որ այստեղ հաշվի չեն առնված վոչ յերկաթուղային արհեստանոցները և վոչ էլ հանքային հարստութեանների շահագործման վայրերը՝ գործարանային ռայոնները, վորոնք սերտորեն շաղկապված էին Թիֆլիսի և Գանձակի նահանգներին։ Մինչդեռ արդյունագործութեան այդ բնագավառի և մեխանիկական արդյունագործութեան այդ բնագավառի մեխանիկական արհեստանոցների շուրջ բոլոր խոսացող զեպքերը անպայման խաչահատվում են թե պյուղական մանր անտեսութեանների և թե քաղաքի արհեստավորութեան քայքայման հետ։

Հետաքրքրական է դիտել այստեղ նաև քաղաքային բնակչութեան զարգացման պատկերը *).

Քաղաքներ	Յերևան ազգաբնակչութեան թիվը				
	1832	1886	1897	1906	1908
Յերևան	11.500	14.738	29.033	30.670	31.432
Ալեքսանդրոպոլ . .	3.300	24.230	32.018	32.901	33.723
Ն. Բայազետ . . .	1.300	7.488	8.509	9.872	10.119
Նախիջևան . . .	5.500	6.939	8.845	9.739	9.978
Ղարս	—	3.939	20.891	17.513	18.397
Որդուբաթ . . .	—	4.199	4.929	5.102	5.227
Ընդամենը .	21.600	61.533	104.225	105.797	108.876

Յեթե ներգաղթի հավանականութեան անգամ նկատի առնենք, այնուամենայնիվ քաղաքային բնակչութեան թիվը մինչև 1897 թ. անհամեմատ արագ աճում է։ Հետաքրքրելին այստեղ այն է, վոր այդ կատարվում էր առավելապես ի հաշիվ պանդխտող գյուղացիական չքավորութեան, վորպիսի յերևույթը մասսայական տարերային բանվորութեան էր առաջել 90-ական թվականներին։ Նկատենք, վոր այդ «տեղափոխութեունը» առանձին չափերի էր հասել լեռնային շրջաններից (անտեսական անապահովութեան, պարենավորման բացակայութեան ընորհիվ) դեպի դաշտավայրերը, արդյունաբերական կենտրոնները և այլն։

*) Кавказский Календарь за 1898—1917 թ. և С. Заваров.—Опыт и т. д. էջ 246։

Սրա հիմնական պատճառների քննության կանդրադառնանք կրկին, իսկ այժմ ասում և արձանագրել, որ քաղաքացիների կոնտինգենտը լրացվում էր լեռնային շրջաններից հավաքվող՝ աշխատավարձի հետևից ընկած նոր տարրերով, որոնք հեռվհեռու կորցնում էին գյուղ վերադառնալու բոլոր հույսերը։ «20 տարի առաջ գյուղչեցիների համար ամոթ էր համարվում գործարան մտնելը և կամ որևէ ապրելը, մինչդեռ այժմ (1896 թ.) այդ շրջանները բանվորներ են հայթայթում ոչ միայն Սիմնսի (Գեզարեգի) գործարանին, այլ և Ռիհոսայի և Սևաստոպոլի նավահանգիստներին»։ *) Զանգեզուրցին պանդխտում էր Բագու, լոռեցին, շորագյալցին, արարատցին՝ Բաթում, Բագու, Թիֆլիս՝ չհաշված յերկաթուղին, Ալահվերդու գործարանները։

Գյուղացիության չքավոր մասը հետզհետե ավանդին խմբերով, յերբեմն անկանոն, զտանին։ «Շատ շատերը գնում են մուրացկանության անելու՝ առանց որ և է զոկուժինոի, վոմանք՝ տանուտերի խուլյուվության և մնացյն շատ քչերը որինական ճանապարհով՝ անցագրերով»։**) Այդ «շատ քչերի» թիվը Նոր-Բայազետում և Ղարաքիլիսայում արտահայտվում է հետևյալ աղյուսակով՝

Տրված և անցագրեր ամիսներով՝ ***)

	Հուն.	Փ.	Մ.	Ա.	Մ.	Հունիս	Հուլ.	Ա.	Ս.	Հոկ.	Ն.	Դ.	Ընդամենը
Նոր-Բայազետ 1892 թ.	—	195	117	146	9	27	12	18	113	86	95	155	1171
1893 թ.	103	192	98	174	61	30	32	70	179	93	132	83	1247
Մ. Ղարաքիլիս. 1893 թ.	—	—	6	19	35	48	51	53	65	75	100	118	570
1894 թ.	126	144	173	186	196	201	206	216	221	224	—	—	1893

1893 թ. 10 ամսվա ընթացքում Ղարաքիլիսայից հեռացել է 570 մարդ, իսկ 1894 թ. կրկին 10 ամսվա ընթացքում՝ 1893 մարդ։ Այսպես էր և դեռ ավելի վատ՝ մյուս շրջաններում։ Յեվ վորքան զարգանում էր արդյունաբերական կյանքը, կատարվում յերկաթուղու գիծը, բարձրանում, աճում առևտուրը —նույնքան արագությամբ և գյուղացիական չքավորության գործի ալիքը

*) С. Заваров. Опыт исследования сельск. хозяйства էջ 283

**) Jbid էջ 284.

***) Jbid էջ 285, բաց թողնված ամիսների անհրկությունները բացակայում են։

մեծանում, ուռճանում էր։ Այս «ապրավեր» յերևույթի հանդեպ, հավաքական ազգի նվիրական ոչնչի յերկունքով բռնված հայ դատաստիության ու հոգեվոր բարիքներով անված կղերա-բուրժուական ինտելիգենցիան վայնասուն բարձրացրեց «հայրենական սճախը», «լեզուն ու հավատը» մոռացնել ավող՝ գյուղի բնական բացթայան նպաստող հանգամանքների դեմ։ Սակայն ոչ և վոր քայքայման նպաստող հանգամանքների դեմ։ Սակայն ոչ և վոր ուժը պիտի կանգնեցներ պատմության անիվը, արդյունագործական կապիտալի ներխուժուժը, քաղաքների, կալվածատիրական կապիտալի կենտրոնների, արդյունարերական վայրերի մոտական այն ուժը, վոր հարվածում էր նահապետական արխայիկ կյանքի վերջին բնկերներին, անպատճառ անում հարյուրավոր վերստերից կիսաքաղց բազմությունը և ձգում իր առաջ մասսայական յեռուզեռի պատյանները...

Առևտրական և արդյունարերական մանր բուրժուազյան կենտրոնացել էր քաղաքներում։ Նրա մասնակցությունը հասարակական գործերում կրում էր բատամնային դերիշխող բնույթ։ Հակառակ անգամ դրան, յերկրի ներսում՝ տնտեսք, նա չէր ուսել իր բանը՝ կատարելով հավաքից հայկական այգեստանի հյութը, չնայելով յերբեք նրա կոկոնների բազմությը։ Յեվ միայն այն ժամանակ, յերբ ռուսը կապիտալը ընձեռում է յերկրի անթիվ հարստությունների շահագործման, արտադրական ուժերի սիստեմատիկ կազմակերպման՝—դրամական խոշոր գումարներ *) են մուտք գործում յուրաքանչյուր ասպարեզ, յերևան հանում վոչ միայն գետնի խորքերում թաղված հարստությունները, այլ և խթան են հանդիսանում ժողովրդական անտառության տարբեր մշակությունների հետագա զարգացման ու միատեսակ պայմանների ստեղծվող բանվորության հավաքական կամքի բովանդակ կազմակերպման։

Յեզրափակենք. ակներև վատա և, վոր 19—րդ դարի վերջին տասնամյակում Հայաստանի ժողովրդներին այլասերող նահապետական անտեսության հոշոտված վարագույրը բարձրանում էր վեր։ Մերկացած հասարակության լճացած կյանքը յենթարկ-

*) Արդյունարերության զարգացման գործընթաց՝1893 թ. Յերևանում բացվեց Գետային բանկի բաժանմունքը (Даниловичъ. Араксск. равнина)։ Հետագայում այստեղ էր գործունեության ասպարեզ ընարեց նաև Թիֆլիսի Առևտրական բանկը։ Այնուհետև (1903—4 թ.) ծրագրված Գյուղատնտեսական բանկը, վոր պիտի 100—ական ու վարկ բացեր յուրաքանչյուր գավառական կենտրոնում՝ դժբախտաբար իր ժամանակին չիրագործվից՝ շնորհիվ ուռճացած քաղաքական պահերի («Факты,» 1907 г. № 1)։

վում եր ցնցման, ժառայվում յերեկվա առորյան. «ծերացած դրախտը» իր բնակիչներով «սայթաքման» ուղին եր բռնում։ Յերկրի անապատ տարածությունները՝ առանձնապես լեռնարդյունարերության բնագավառում՝ շահագործվում են ամբողջ թափով։ Կուսական լառու ձորերով ձգվում եր վոլորապտույտ յերկաթուղագիծը դեպի Ալեքսանդրոպոլ (փետրվար 1899 թ.), ապա Շորագյալի լանջերով դեպի Ղարս, Յերևան (հունվար 1901 թ.), Ջուլֆա (1905 թ.)։

Կուլտուրական խոշոր մի նվաճում եր յերկաթուղին *)։ Նա վոչ միայն յերկրի անասնական զարգացման առհավատչյան հանդիսացավ, այլ և Հայաստանի բանվորական շարժման ուղեհարթը։ Գծի կառուցող բանվորությունը դաստիարակեց, կրթեց հազարավոր գյուղական չքավորների հավաքական կամքը, վորոնք մի կտոր հացի համար՝ թողած գյուղի անհրապուրը ոգան՝ գալիս եյին «բանվոր դրվելու», մշակություն անելու։

Թե յերկաթուղիների կառուցումը և թե Հայաստանի անասնական կյանքի զարգացման զուգընթաց արտադրության բնագավառում կիրառվող մեքենաները ու նոր գործարանների կառուցումը՝անխուսափելիորեն պետի արագացնեյին թե մանր արհեստների անկումը և թե նամանավանդ սակավահող գյուղացիության արտագաղթը դեպի արդյունարերական շրջանները։ Այստեղ՝ աշխատանքի անմիջական շահագործման պրոցեսում, տարբեներ շարունակ կրտկի ու շոգեի առաջ յերկրի ներսում թե նրանից դուրս —Հայաստանի բանվորությունը վերջին հաշվով առանում եր մի ժառանգություն՝ դարբնում դասակարգային շաղախի մեջ իր միաքն ու գիտակցությունը։

*) Պատմում են, վոր յերբ Լոռվա ձորերում կառուցվում եր յերկաթուղագիծը, շրջակա գյուղացիք բանատեղծ Հով. Թումանյանի գլխավորությամբ ամռուկ են բարձրացնում և ամեն կերպ խոչընդոտ հանդիսանում՝ պատճառաբանելով, թե յերկաթուղին վնասից բացի վոչ մի ոգուտ չի բերելու նրանց, վոր նա միայն թալանելու և իրենց չքնաղ Լոռին, կտրատելու նրանց անասունները։ Համախոհականներ են կազմում, գիմում են ոչ և ում հարկն ի, վոր իրենց դլխից հեռացնեն այդ «փորձանքը», նրա թելն ու շառը։ Չհասնելով վոր և է գրական հետևանքի, գյուղացիք զինված գազանիներով, բան ու բրիչով հարձակվում են կառուցող բանվորության վրա՝ արգելելով կարել անտառը, ձևվել ճամբան... Յերկաթուղին, սակայն, շուտով խախտում կարել անտառը, ձևվել ճամբան... Յերկաթուղին, սակայն, շուտով խախտում է Լոռու կուսությունը, գրկելով ագիտության ու խավարի ճիրաններից։

Գլ. II

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անհնախանձելի պայմաններում եր գալիս ապրել իր գոյությունը թե բանվորությունը և թե, նամանավանդ, արհեստավորությունը։ Բանվորական շարժման հիմնական սկզբունքներին անդադրում, Հայաստանի աշխատավորությունը շարունակում եր խորխորատել ազգային մթնոլորտում՝ կղզիացած, մեկուսացած, զատված իր դժնդակ առորյային։ Կուլտուրական հետամնացությունը ու քաղաքական ապիրատությունը առեղծել եր պարարտ հող շահագործելու նրա թե ֆիզիկական ունակությունները և թե բարոյական—քաղաքական ուժը։

Արևելքի կախումղական սովորույթները խափան շղթայել եյին անհանդուրժելի պայմաններից զժգոհող առորներին, նախապես կիզակետել դասակարգի և կենցաղվող բազմության հասկացողության բնական կռիվը։ Սակայն շնորհիվ արդյունաբերության զարգացման, արտադրական շրջաններում մեխանիկական միջոցների կիրառման և անասնական կյանքի ընդհանուր վերելքին զուգընթաց բյուրեղանում, բարձրանում եր նրա բանվոր դասակարգի գիտակցության մակարդակը։ Մի բուռն ձեռնարկատերերի շահագործման արբագպատված վայրենի սիստեմը հետզհետե կատարելով շահագործվող բազմության հավելյալ համբերությունը՝ բնականորեն պատճառում եր բանվորական լայն շրջաններում աշխատանքի ընդհանուր պայմանների ծանրության դեմ թե զժգոհություն, բողոքի արտադրություն, և թե հատուտ համոզմունք շահերի միատեսակության ու պայքարելու կոլեկտիվ կամք։

Գործարանային բանվորության շրջանում կիրառված եր 11 և 12 ժամյա աշխատանքի օր, չհաշված աշխատանքի կամ արտադրության վորակը։ Այսպես պղնձաձուլարանական գործարանային արդյունաբերության բանվորությունը աշխատում եր 12 ժամ, ստանում եր որական 20 կոպեկից (անչափահասների) մինչև 70 կոպեկ (հատակավորների) աշխատավարձ։ Ամենի ծանր

պայմաններում էին հանքափոր բանվորները. սրանք աշխատում էին այսպես կոչված արանիներով՝ թվով 4—6 բանվոր—առավոտից մինչև յերեկո, քանի դեռ ամենավոդրման Ալլահը խավարով չէր պատում հանցավոր յերկիրը։ Արանին ուներ իր գլխավորը—բևուքը, որը առանում էր «վորոշ» պայմանով պատվերներ փոդրաթչուց, իսկ այս վերջինը՝ հուշն հոդատերերից, վարոնք իրենց հերթին առանձին հարգի էին գործարանատերերի ու հանքատերերի մոտ։ Այս յուրաքանչյուր աստիճանի գլխին կանգնած էր հատանելիքն ուներ արանիի «ոդուտից»։ «Մի սաժեն կարծր տեղ փորելու համար արանիը առանում էր 70—80 ռ., իսկ փափուկից՝ 20 ռ.։ Առաջինը փորում էին 5—7 որում, յերկրորդը՝ 1—2 որում» *), իսկ թե այդ բոլորից հետո քանի կոպեկ գլուխ հասներ արանիի յուրաքանչյուր անդամին, գժվար չէ յեզրակացնել։

Վոչ միայն այս այլ և աշխատանքի շահագործման մի այլ սիստեմ—«կաորով» աշխատելու սկզբունքը—կիրառված էր թե հանքային և թե, նամանավանդ, կառուցվող յերկաթուղագծի շուրջ կենտրոնացած բանվորության շրջանում։ «Կաորով» աշխատելու սկզբունքը, վորին առանձին սիրով փարվում էր տեղական պյուդջետային չքավորությունը, առաջ էր բերում հիվանդոտ մրցություն՝ հետին հաշվով լցնում էր փոդրաթչուց սկսած մինչև պարոն ինժեների գրպանը—մինչդեռ բանվորն այդպիսով ջլատում էր ֆիզիկական աշխատունակությունը, դառնում իռվալիդ, անընդունակ՝ իսկ լավ դեպքում՝ սիստեմատիկ աշխատանքի միանգամայն անկարող, անպետք։ Իսկ այդ մրցությունը տարիների ընթացքում նվազեցնելով «կաորի» արժեքը մինչև minimum—ի, թողնում էր նրա սերտողներին աշխատանքի առաջարկից դուրս։

Բանվորներին շահագործելու պատկերը ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ և արձանագրել նաև այն յուրահատուկ՝ նախապես ընձեռած միջոցները՝ վորոնց դիմում էր մեր հանքային հարստությունները շահագործող ոտար թև հայրենի կապիտալը։ Դա բանվորության կազմի, վորակի խնդիրն էր, վոր բոլորովին էլ յերկրորդական նշույ չէր։ Տեղացի (պետական սերբիտարիայի իմաստով), բնիկ տարրերը առանձին հարգանք չունեին։ Գործարանատերերը իրենց առանձին պետնանների (մակլերների) միջոցով պրիտացիա էին մղում հեռավոր հյուսիսային Պարսկաստանում, նյութական կատարյալ ապահովության հանդիսավոր յերաշխավորություն տալով—գաղթեցնում էին հարյուրավոր ընչազուրկ պարսիկների (մեծ մասամբ առանց ընտանիքի) դեպի հանքային շրջանները, ուր խորամանկությամբ գրժեխ լով իրենց խոստումները՝ ամենաստոկալի պայմաններում շահագործում էին նրանց աշխատանքը, օգտվելով նրանց համեմատական կուլտուրական հետամնացությունից ու կրոնական սովորույթներից։ Այսպիսով հանքափոր բանվորության խոշոր տոկոսը կազմում էին պարսիկ (համշարինները), ապա հուշն և հայ բանվորները։

Աշխատանքի պայմանները սոցիալիկյա անցքերում, շատ դուրս էր մարդկային յերևակայությունից. վոլորապատույա ձգվող խավարում՝ ջրի մեջ վոտաբորիկ կամ ցեխի կուլաների կոխնած՝ անարեվ, առկայծող մոմի կամ ճրագի լույսին հայացքը սևեռած—սրն ի բուն փոքրիկ բրիչը ձեռքին հանքափորը (պարսիկ, հուշն, հայ) անվերջ հատում էր յերկրի կուրծքը։ Նա բոլորովին ապավինած էր բևուքի, մինչդեռ կամ ապահակալի խղճին—չէր էլ հետաքրքրվում անգամ լույսի տակ կատարվող աշխարհային գործերով, կամ թե աշխատավարձի, աշխատաժամի կամ աշխատանքի ծանր պայմանները թեթևացնելու խնդիրներով։

Աշխատանքի 11-ժամյա որ կիրառված էր նաև ապրյուի արդյունաբերության պատկանող Սարաչևի և Շուստովի գործարաններում։ Իսկ թե վորպիսի պայմաններում էր ընթանում բանները՝ Իսկ թե վորպիսի պայմաններում էր ընթանում կաշվի արդյունաբերության շուրջ աշխատող բանվորության որը —պարզ պիտի լինի ինքնին՝ յեթե ի նկատի առնենք այն վնասակար արտադրության ներգործող պայմանները չեզոքացնող միջոցների կատարյալ բացակայությունը։

Անմիջապես, ծայր առաջանում էր վոչ միայն արդյունաբերական շրջանների բանվորությունը, այլ և անասնագործական ձեռնարկների ու քաղաքներում կենտրոնացած ինքնաքայքայման պրոցեսում գտնվող մանր արհեստավորության՝ համքարության։ Քաղաքականապես անկազմակերպ, աննախընթաց ծանր պայմաններում իր որը բոլորող արհեստավոր վեհաբյարը կամ սրանց աշկերտը «վորպիսի աշխատանք, անձանձիր յեռանդ ել չցուցադրեր իր արտադրության մեջ՝ աշխատելով որական 16—18 ժամ՝ միևնույն և արտադրական հատուկ այդ աշխատանքը վարձատրվում էր որական 10—15 կոպեկ»։ *)

Առանձին արտադրությունների (կոշկակար, հացթուխ, անային

*) Аргут. Долгоруков. Борчалинский уезд (Район и т. д.) стр. 150-154.

*) Ширалов. Краткие очерки к. п. „Кавк. Календарь“ 1901г.

ռայող) աշխատավորության եւ վարձատրության և եւ աշխատանքի ընդհանուր պայմանները ավելի քան անբավարար, այլասեռված պատկեր էր ներկայացնում։ Զկար բանվորի կամ աշխատավորի ապագության սոցիալական պահպանության կամ հոգության, մարզավայել վերաբերմունք, սանիտարական տանելի պայմաններ, բժշկական օգնության, բնակարան, անգամ նվազագույն վարձատրություն. մինչդեռ բանվորական որը 11-ից մինչև 18 ժամ տեւողությամբ՝ սարկական պայմանների դիմիշխանության ահռելին էր թեւակոխում։ Յեվ միայն 20-րդ դարի արշալույսից սկսած յերկրի արդյունաբերության զարգացման շնորհիվ ժողովրդի սոցիալական կյանքում ընկվող պայմանները աղզակ են հանդիսանում եւ և արդյունաբերության և եւ արտադրական միությունների շուրջ կենտրոնացող բանվորության իրենց վաստնահարված իրավունքները պահպանելու համար զործադուլների դիմել, հիմնական միջոցներ ընձեռել, բանվորական օրգաններ կազմակերպել—և ընդհանրապես դասակարգային հանի մեջ դնել առանձին դեպքերն ու պահանջները։

Գլ. III

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կատարվող իրադարձությունները ըստ ամենայնի ձեւավորվեցին գյուղական զանգվածների քաղաքական պատկերության հորիզոնը։ Յերեկվա ապիատության մեջ խարխափող, նահապետական ազատների փոխ, սարկացած աշխատավոր գյուղացիությունը ճիգ էր թափում հնձեավորապես ազատագրվելու աշխատանքի սիրող պայմանների։ Դյուրին չէր այդ անհետական և իրավական այն շղթաները։ Հողային անկում, որը կազապարել էր նրա ամբողջ որպանիզմը։ Հողային հրաժեշտ տարածությունից զուրկ, անձանոթ մշակման կուլտուրական մեթոդներին՝ առանց գործիքի, հարկ չեղած պայմանների— ծանրաբեռնված հարկերի և հասարակական պարտավորություններով՝ գյուղական աշխատավորությունը իր անհետության մի ծայրը մյուսին չէր կարողանում հասցնել։ Մինչդեռ գյուղական ցեղերը, համփանները, մանր ու խոշոր հողատերերը իրենց չնչին զրաժանքի աշակցությամբ՝ զրավում էին վոչ միայն հողամասեր, այլ և կանխատես գյուղացու աշխատանքը, նրա բանվորական ուժը։ Այսպիսով ժամանակի ընթացքում գյուղական մթնոլորտում մեծանում էր չքավորության թիվը ու բնակչության մեջ կատարվում վորոշ շերտավորում։ Այդ շերտավորումը վոչ միայն մեկեվնույն գյուղում, այլ և տարբեր գյուղերի, շրջանների նկատմամբ միատեսն բնույթ էր տացել, վորը պարզ նկատելի յե հետեվյալ աղյուսակից։

Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջանների միջին տարեկան ջերմաստիճանները Ցելսիուսի սանդղակով (մեկ տասնորդական նշանի ճշտությամբ)

	Ամենից հին հայտնի դիտումներ		Ամենից քիչ հայտնի դիտումներ		Փութ.	Դեկ. տար.
	Փութ.	Դեկ. տար.				
Դարսի շրջ.	6,0	0,50	Քաղքաղաղ. Ալեքսանդրապոլ, Ղարսի-Ախալքալաք (տես.) . . .	13	1,08	Քեռ . . . . . Կիբլովսկա	2,5	0,21
				12	1,00		4,6	0,39
Ալեքսանդրապոլի գավ.	4,54	0,38	Քաղքաղաղ. Գյումրի-Ղարսի և Գյումրի-Ղարաքիլիսա . . .	9,2	0,77	Մ. Դարագլիխ . . . . . Մերաք . . . . . Բաղդ գիղ . . . . . Վարվարինովկա	3	0,25
				8	0,67		3	0,25
				5,2	0,43		1,1	0,09
							1,0	0,08
							4,0	0,33
Էջմիածնի գ.	4,6	0,38	Բաշ-Ապարան	5,8	0,48	Ցլամբրիզ . . . . . Դաշտադիմաղ	3,6	0,30
				7,6	0,63		3,7	0,30
Ջերվեժի գ.	5,2	0,45	Ապարան . . . . . Քանաքեռ	5,5	0,46		3,3	0,23
				8,2	0,68	Ինգաբիլ . . . . . Զեյթուն . . . . . Սմբերդա . . . . . Գյարմրլիճա — Ալեքսանդրապոլ	3,3	0,33
Նոր-Բայազետ — Ախալցխա	4,6	0,38	Ախտա-տուս. . . . . Ջելեռնովկա . . . . . Բեռնի	6,0	0,50		4,0	0,20
				7,73			2,4	
				5,2			3,0	0,25
				5,3	0,43		1,7	0,14
Չարե-Ալիսկ. գ.	4,7	0,39	Նոր-Բայազետ					

*) С. Заблудов. Опыт исслед. сельского хозяйства и т. д. стр. 258—9.

Բացի այսպիսի տարբերությունից առաջացող հողային անբավարարությունից՝ գյուղացիության մինչև 42%-ը զուրկ եր նաև աշխատող անասուններից, որոնք նախապես չեր կարող պահել ինքնուրույն յերկրագործությամբ. և այս յերկու կարգի չքավորները իրոք լրացնում եյին գյուղի պրոլետարների շարքերը։ Այսպես որինակ 1894—6 թ. զրանց թիվը հավասար եր*).

Գ ա վ ա ռ ն ե ր	Առանց աշխ. անասունների գյուղացիների %-ը	Ցանքս չանող գյուղացիների %	Նորմային հակառակ կրճատված ցանքսերի %-ը
Դաբսի շրջան	17.6	6,2	21,7
Ալեքսանդրապոլի գավ. . . .	16,0	19,7	31,6
Եջմիածնի (լեռն. մ.) . . .	42,3	24,2	42,0
Ցերվանդի (լեռն. մ.) . . .	37,0	36,0	50,0
Նոր-Բայազետ { Հյուսիս-արևմ.	22,2	23,3	42,0
Նոր-Բայազետ { Հարավ-արևմ.	34,0	29,9	39,0

Յեթե այս բոլորին ավելացնենք նաև այն հանգամանքը, վոր Հայաստանի գավառներում գյուղական յեկամուտը հազիվ առանձի պատահական միջոցներով ծածկվը նրա տարեկան ծախսերը—կատանանք մեր յերկրի առավելապես լեռնային լանջերում ընկած գյուղական բնակչության անհեռական անապահովության պատկերը։

Պետական գյուղացիության տուրքերի (չհաշված կուռ և բեգյարը) քանակը համեմատած ստացվող յեկամուտի դեմարին՝ արտահայտվում եր հետևյալ թվերով.—

	Ալեքս. գավ.	Նոր-Բայազետ	Եջմիածնի (լեռն. մ.)	Ցերվանդի (լեռն. մ.)	Ամբողջ շրջանի համար.
Մի անձի յեկամուտը յերկրագործությունից և անասնապահությունից	27,8	23,1	20,9	26,5	25,4
Տուրքերի %-ը յեկամտի նկատմամբ . . .	7,6	9,6	11,9	8,2	9,1

*) Ibid. стр. 264 и 418.—1892—3 թ. անբերրիությունը համեմատական նշանակություն կարող եր ընդունել-իսկ փաստը ճիշտ եր անփոփոխ

Գավառներ	Հետազոտված տնտեսությունների թիվը	Ընտանիքի միջին թիվը	Ընտանիքի միջին տարիքը	Ընտանիքի միջին թիվը ըստ սեռերի և տարիքների										Ընտանիքի միջին թիվը ըստ զբաղմունքների								Տարեկան միջին եկամուտը մեկ շնչի հաշվով
				տղամարդիկ				կանայք						տղամարդիկ				կանայք				
				ընդամենը	16 տարեկանից ցածր	16—60 տարեկան	60 տարեկանից բարձր	ընդամենը	16 տարեկանից ցածր	16—55 տարեկան	55 տարեկանից բարձր	ընդամենը	գյուղատնտեսությամբ զբաղվող	գործարանային բանվոր	արհեստավոր	ուրիշ զբաղմունք ունեցող	ընդամենը	գյուղատնտեսությամբ զբաղվող	գործարանային բանվոր	արհեստավոր	ուրիշ զբաղմունք ունեցող	
Ալեք-պողի . .	11	11.55	282	—	107	30	419	195	77	34	16	322	70	26	418	+ 1
Նոր-Բայազետ .	6(1/2)	5.6	261	—	57	—	318	127	40	14	8	189	71	7	267	+51
Ջերմակ . . .	7(1)	10.9	260	—	81	50	397	100	43	19	19	181	56	116	353	+44
Էջմիածնի նահանգ	8	3.4	162	45	42	81	330	151	45	36	22	254	49	18	321	+9.2
Նոր-Բայազետ .	9	—	—	—	242	80	322	107	65	32	11	215	49	25	289	+32.3
Ջերմակ . . .	8	4.0	97	170	58	20	345	138	78	31	22	269	64	9	342	+2.3
Նախիջևան (գյուղ.) .	6	9.2	273	31	12	15	331	120	30	8	17	175	54	41	270	+61
„ (քաղ.) .	17	13.65	234	—	79	85	398	145	16	18	15	197	118	34	349	+49
Ջանգեզուր .	12	10.36	322	—	112	—	434	217	87	47	26.4	377.4	100.6		478	—44
Փոքրի թվով մեկ ընտանիքում:																
Ջերմակի հաշ.	1	0.93	21.9	3.4	9.4	5.0	39.7	15.1	5.4	2.7	1.8	25.0	7.7	3.1	36.2	+3.5
Ջանգեզուր .	1	0.86	26.8	—	9.3	—	36.1	18.1	7.3	3.8	2.2	31.4	8.4		38.8	—3.7
Գերմանական.	1	4.60	135	154	31	—	320	80.4	26.7	42.1	3.7	153	74.3		227.3	+92.7

*) Ibid էջ 428—29. Կերմանական գաղթերի մեջտեղ դրացիների մեջ նշ դրել համեմատության համար:

Ծխերը կազմված են ըստ հետազոտության եղած գյուղ. բնակչության. Ծխերը կազմված են ըստ հետազոտության եղած գյուղ. բնակչության.

Տես նաև Ղարաբաղի գավառի վերաբերյալ տվյալները (էջ 369) և Ելիզավետպոլի գավառի վերաբերյալ տվյալները (էջ 369)։ —Ա. Ս.

Պետական միջակ գյուղացու այս բյուջեն պարզ ցույց է տալիս թե վորքան վողորմելի պիտի լիներ չքավոր գյուղացիության կեսամուսը։—«Հասարակա-տնտեսական բարդ պայմանների բազմաման հետևանքով գյուղացիության ուղբատ մասը անկարող է լինում նորմալ ճանապարհով իր կեսամուսով ծածկել իր կենսական ծախսերը. նա ստիպված է աղբյուրներ փնտրել՝ այդ բավարարելու համար։ Յեվ ահա... խեղճը ստիպված է կամ պարտք վերցնել 30—40, դուցե եվ ավելի %-ով, կամ լքել արհեստությունը և գնալ աշխատանքի, և կամ ծախել վոչխարը, կովը, յեզները, անհատական շինվածքները (пристройки), հողի նագելը... բանվորության տալով պատանի վորդուն...»։*)

Սա դեռ մի կյանք եր ծավալվող դրամայի։

...Մտանում է ձմեռը իր վախճանին, հատնում և գյուղացիների պաշարը —մինչդեռ գյուղատնտեսության արդյունքները իրացված են վորչափ հնարավոր եւ Հարց և բարձրանում՝ ինչով գնել պաշար, կարդի ձգել գյուղատնտեսական գործիքների դեֆեկտները, լրացնել նրանց կազմը նորերով, և կամ ինչ միջոցներով վարձել մշակներ... Այս հարցերի դրական լուծումը հիշեցնում է գյուղացիներին «ապա-պատվելիների» գոյությունը... պարտք են խնդրում։ «...Հարկահավաքության ժամանակ կուլակ-վաշխառուները ներկայանում են իրենց առաջարկներով... ուրիշ յելք չկա—գյուղացիք պարտք են վերցնում անելևվախուրիշ յելք չկա—գյուղացիք պարտք են վերցնում անելևվախյելի տոկոսներով 16—24%-ը համարվում և տանելի. 10 ռուբլուց ամսական 30 կոպեկ (տարեկան 36%) սովորական յերեվույթ է. սակայն լինում են նաև 1 ռուբլուց ամսական 5 կոպեկ՝ այսինքն տարեկան 60%։... Փոխառության պայմանները եվ ավելի ծանրանում են, յերբ պարտքատուը տալիս է վոչ թե վճռակուլ, այլ, ընդհակառակը, նախապես ծախելու պայմանով. այդ ժամանակ գյուղացին ստիպված ծախում է իր գալիք բերքը այն գնով, վորը կրկնակի առաջարկել վաշխառուն։ Այսպիսով՝ գարնանը խաղողի խալվորը (=30 փութ) ծախում են 8 ռուբլի, մինչդեռ աշնան նրա սովորական գինը 23—30 ռ. է։... Վաշխառուները սովորաբար փող են տալիս պարտք՝ փոխարենը բամբակ առնալու՝ փութը 1 ռ. 20 կ. արժեքով։—Գյուղացին գարնանը 12 ռ. պարտք վերցնելով, պարտավորվում է բերքը հավաքելու ժամանակ վճարել պարտքատիրոջ 10 փութ բամբակ, վոր արժե ամենաքիչը 28 ռ. դուրս հանելով սրանից հիմնական պարտքը, —գյուղացին 9 ամսվա համար վճարում է 133%, վոր կազմում է

*) Ibid. էջ 369.

տարեկան 176%...»—հիմնված բազմաթիվ ավյալների վրա—այսպես և արձանագրում գյուղացու դրությունը (1904 թվին) **Ցերեվանի ճահճագային գյուղատնտեսական արդյունաբերության ոգնող կոմիտեի***): Գյուղացիությունը պղծատության ճիրաններում սեղմված եր. նրա աշխատանքը որը կերկով թալանվում եր—պետական որենքները միայն հատատում՝ ամրապնդում եյին այդ սիստեմը, վորի դերակատարները՝ կալվածատեր—հողատեր, պրիստավ և վաշխառու—համփա ու բեզ շարունակում եյին յուցադրել առանձին յեռանդ ու հավատարմություն...:

Ամենի տագնապալից եր կալվածատիրական գյուղացիության դրությունը, վորի անտեսական վիճակը հնարավորին չափ մանրամասն պարզարանության ենթարկելն եր ամենի անհրաժեշտ և այն նկատառումով, քանի վոր հնից այս կատեգորիայի գյուղացիությունն և հրահրել առաջինը լողոթի խոլ ձայնը Լոռու շրջանում՝ վորը կերպարանավորվեց հետագայում վորպես հողային շարժում:

Նախկին Բորչալվի գավառում հուղը բաժանված եր **)

Դ ե ս յ ա տ ի ն ն ե ր ո վ

Գյուղտնտեսություններին		Մասնավոր սեփականատերերին	Ընդամենը
Պետական	Ոչ պետական		
112 088	17,688	349,753***)	479,529
23,3%	3,8%	72,9%	100%

Մասնավոր սեփականատերերին՝ արտոնյալ դասին եր պատկանում ամբողջ հողի 72,9%-ը, իսկ գյուղական հասարակություններին՝ 28.1%-ը: Այնուհետև այս վերջինը իր հերթին գյուղա-

*) Տես՝ „Факты" № 1 բնկ. Senex-ի աշխատությունը:

**) Кавк. Календарь за 1907 г.

***) Որանից 41.520 դ. պատկանում և «Удель. ведомство»-ին և մոտ 20,000 դ. վանքապատկան: Այդ գումարը մի այլ տեղ հիշատակած և 337,886 դ. (Район и т. д. «Борчалинск. уезд.», стр. 71).

յեության պանդան կատեգորիաների միջեվ ատարատաժանված եր հետևյալ կերպ.—*)

Հողային բավարարումն՝ դեսյատիններով՝

Վոր կատեգորիան	Այգիների և բանջարանոց.	Վարելահող: Ջրատեղ	Վարելահող: անջրդի	Խոտհարք	Արոտատեղիք և անպիտերը	Ընդամենը
1. Պետական գյուղաց.	1,239	912	23,960	7,683	20,729	54,523
2. Գյուղացի սեփականատերերի . . .	73	--	5,048	8,916	5,210	19,247
3. Լեհնաբանավորության (հույներ) .	101	—	480	214	585	1,380
4. Ժամանակավոր—պարտադիր գյուղ.	71	1,727	3,523	35	791	6,147
5. 1870 թ. որենքով տեղավորված գյուղ	81	9,361	1,544	—	298	11,284
6. Խիզանների . . .	—	—	496	60	25	581
	1,565	12,000	35,051	16,908	27,638	93,162

Յուրաքանչյուր ձեի ու շինի հողային տպահովության ընդհանուր պատկերը վորոշելու համար անհրաժեշտ և ճշտել տպրդարնակչության քանակը և տոկոսային հարաբերությունը ըստ կատեգորիաների: Այսպիսով կստանանք***)

*) Аргутинский - Долгоруков. Борчалинский уезд. стр. 67-74. Այս ուսումնասիրությունը չի ընդգրկում ամբողջ գավառը, 53 գյուղ-հասարակությունները չի ընդգրկում և մեզ 9 գյուղական հաս., վորը բռնում է գավառի հյուսիս-արևմտյան մասը: Դրանով էլ պիտի բացատրել հետագա թվերի (դեսյատինների և տպրդարնակչության) ճշտորեն չհամապատասխանելը.—սա, ի հարկե, ձեվական նշանակություն ունի միայն, նամանավանդ, վոր հիշատակած ուսումնասիրությունն ամբողջովին ընդգրկում և հայկական մասը՝ Լոռին, մեզ պրպտելու շրջանը:

**) Jbid. стр. 53.

Գյուղական ազգաբնակչության թիվը.

Գուզակ. կառավար.	Ծուխ	%	Հեթանոս			%
			Տղ	կին	Ընդամենը	
1 Գետ. գյուղաց. . .	3860	32	16,649	14 834	31,483	36
2. Գյուղաց. սեփակ. .	706	6	2 860	2,791	5 651	6
3. Լեռնաբնակներ. . .	409	3	1,042	895	1,937	2
4 Ժամանակ. գաղթական	1578	13	6,624	5,084	11,708	13
5. 1870 թ. տեղափոխված. . .	3050	26	11,210	8,204	19,414	22
6. Խիզան	135	1	572	436	1,008	1
7. Կազակաստ. . . .	2035	17	8,715	6,879	15,694	18
	11,773	98	47,672	39 123	86,795	98

Յեվ յեթե առանձին կառավարիանների պատկանելիք հողի քանակը բաժանենք յուրաքանչյուրի ծխի, տղա և շնչի վրա —կստանանք թե մեկի և թե մյուսի հողային ապահովության հետևյալ պատկերը *)

Հանում է (դեսյատին) յուրաքանչյուր՝

Գյուղ. կառավար.	Ծ խ ի ն		Արական մեկ շնչին		Յերկուսի մեկ շնչին	
	Ամեն տեսակի հողամաս	Վարելահող	Ամեն տեսակի հողամաս	Վարելահող	Ամեն տեսակի հողամաս	Վարելահող
1. Գետ. գյուղաց.	14,1	6,4	3,2	1,5	1,7	0,8
2. Գյուղացի սեփակ. . .	27,1	7,1	6,6	1,7	3,4	0,8
3. Լեռնաբնակներ. . .	Մշտական և միայն գյուղատնտ. չեն զբաղվում.					
4. Ժամանակ. գաղթ. . .	3,9	3,3	0,9	0,7	0,5	0,4
5. 1870 թ. տեղափոխված.	3,7	3,5	1,0	0,9	0,6	0,6
6 Խիզանցներ	4,3	3,6	1,0	0,8	0,5	0,4

Այսպիսով միանգամայն գարշ և գյուղական ազգաբնակչու-

*) Jbid. стр. 66

թյան գանազան կատեգորիաների մեջ գտած տարբերությունը՝ հողային ապահովության տեսակետից։ Համեմատելով վերոհիշյալ տվյալները հողային ապահովության աղյուսակները մենք տեսնում ենք հողային ապահովության հետևյալ պատկերը։ Նախ, մոր գավառի ամբողջ հողի միայն 27,1% -ն (129,776 դես). և անմիջապես ոգտագործվում գյուղատնտեսական նպատակների կողմից. յերկրորդ՝ մոր մեզ հետաքրքրող չորջանի հողամասից (99,162 դես.) ուղիղ 79% -ը կամ (54,523—19,247=)70,770 դես.-ը պատկանում է պետական գյուղացիներին և գյուղացի—սեփականատերերին, որոնք միասին կազմում են ազգաբնակչության միայն 42% -ը։ Մինչդես գյուղական մյուս ազգաբնակչության հինգ կատեգորիաները միասին կազմում են 54% -ը, սակայն այս մեծամասնության վերապահված և ամբողջ հողի միմիայն 20% -ը։

Հողային այս ազազակող անհավասարությունը ավելի հրեշավոր կերպարանք ես ստանում, յերբ տեսնում ենք, մոր գավառի 257 կալվածատերերը պրավում են միասին հողի 72,8% -ը (=349,753 դես). սրանց մեջ այդ տարածությունը բաժանված ես՝

41	կալվածատեր	ունեին	յուրաքանչյուրը միջին	20 դես.
55	»	»	»	20—73 »
52	»	»	»	73—190 »
27	»	»	»	190—380 »
82	»	»	»	380-ից բարձր »

միջին հաշվով յուրաքանչյուր կալվածատիրոջ հասնում և 1300 դեսյատինից ավել*)։

Բեգլարյանական—կալվածատերական հողամասերը տարածված էին Զանգեզուրի, Նախիջևանի, Բարչալուի շրջաններում։ Համաձայն 1886 վիճակագրության կալվածատիրական հայ գյուղեր կային**)

	գյուղերի քանակը	ծուխ	յերկուսի հոգի
Զանգեզուրի գավ.	35	2,819	22,987
Նախիջևանի »	50	5,105	24,256
Բարչալուի »	28	1,456	13,343
Յերևանի »	13	910	5,873
Ղզլարիածնի »	11	1,682	11,137
Սուրմալուի »	7	568	4,257
Շարուր-Դարալ. »	6	320	3,376
Նոր-Բայազեդի »	2	188	1,398
ընդամենը	142	11,048	85,627

*) Jbid. էջ 74—կալվածատերերի թիվը տրված և 225 փոխանակ 257—ի. հետագայում էլ՝ մենք առավելապես ոգտվում ենք մյնիվնույն այդ ժողովածվում գետեղած արժեքավոր ուսումնասիրություններից։

**) Գ. Ալիխանով. Բուսահայերի հասարակական զարգացումը XIX դար, հատոր I—էջ 157—159

Այս թվերը վերաբերում են մեծիայն հայկական գյուղերին և, ըստ այնմ էլ՝ կազմում են բնակապատկան—կալվածատիրական գյուղացիության մի մասը։

Մեզ զբաղեցնում է այստեղ այն՝ թե վերջին պայմաններում էին ապրում վերոհիշյալ գյուղական առանձին կատեգորիաները և ինչ տուրք վճարում—ահա լուսաբանության կարոտ մի հարց։ Թեև այս խնդիրը բնթերին հետևում է նրանց հողային ապահովության տեսակետից (տես 42), սակայն միանգամ ևս պիտի կրկնենք, որ պետական գյուղացիք և գյուղացի սեփականատերերը 3½—4 անգամ ավելի ապահովված էին՝ քան ժամանակավոր—պարտադիր, 70 թ. տեզավորված, կամ թե կապալառու գյուղացիությունը։

Ժամանակավոր—պարտադիր (временно—обязанные) գյուղացիք իրենց գրությամբ, վճարած տուրքերով, կատարած պարտավորություններով զրկվեն վոչնչով չէին զանազանվում կապալառու գուղացիության իրավական դրությունից։

Կապալառու գյուղացիք (крестьяне—арендаторы), որ կազմում էին ազգաբնակչության 18%-ը, հողը կապալով վերցնում էին կալվածատիրոջից 3—5, իսկ հաճախ 1 տարի ժամանակավորությամբ։ Յուրաքանչյուր տարեգլխի կալվածատերը թելադրում էր իր պայմանները՝ ավելացնում կապալավարձը։ Գյուղացիք, որ տարիներ անընդհատ աշխատել էին այդ հողի վրա, տեղեակ իրենց փոքրիկ անհատականությանը, տուն-տեղ արել—պայմաններին չհամաձայնելու պարագային, պարտավոր էին լինեն ի վար թողնել ամեն ինչ և հեռանալ մի ուրիշ կալվածատիրոջ հողամաս։

Գաղթի այդ հետևանքը լուրջ մտահոգնել էր տալիս տարեց-տարի ավելացող կապալավարձը — մինչդեռ նրա անհատական բյուջեն (տեղեկագիրը) տեղից չէր շարժվում։ Ծախսերի մի նոր գուռ էր բացվում նաև այն ժամանակ՝ երբ կալվածատերը հողը կապալով էր տալիս **միջնորդի** միջոցով։ Այս վերջինը (անկախած՝ գյուղի կուլակը) իր համագյուղացիներին «լավությունն» անելու փոխարեն վաստակում էր «համիսա» գումար։ «Այդ միջնորդությունը գյուղացիության հետ չի նստում. այսպես օրինակ տեղում գյուղացի վերցրել են կնյազ Որբելիանում 1.400 դես. կալվածքը 1.300 ռուբլով, իսկ իրենք արենդով են տվել համալուցիներին 2.500 ռուբլով» *) և այսպես անվերջ...

*) Jbid. стр. 69

«Գյուղացիությունը այդ հողի վրա առանձին իրավունքներ չունի. նա վերցնում է ժամանակավորապես և կալվածատիրոջ կամքից և կախված՝ թողնել նրան այդ ժամանակից ավելի երկար ժամանակ — թե՞ առաջարկել անմիջապես դադարել տանելը, շինվածքները և գնալ՝ ուր կուզե»։ *)

Կապալավարձը արտահայտում էր բերքի ¼-ի և յուրաքանչյուր դեսյատինին 3—5 ռուբլի՝ «կոնդրակտի» համաձայն՝ —վճարով։ Սակայն բացի դրանից գյուղը կամ առանձին արենդով հող վերցնողները **պարտավոր էին** յուրաքանչյուր տարի՝ 1) իրենց բոլոր արտ-սեփականներով գալ մի օրվա մեջ վարել կալվածատիրոջ հողերը, կամ վճարել տանն մի գութանից 5-ական ռ. դրամով, 2) Յուրաքանչյուր ձուխ պիտի գար նրա 5-ական ռ. դրամով, 2) Յուրաքանչյուր ձուխ պիտի գար բերքը մի տարի՝ կամ վճարեր 1-ական ռուբլի, 3) Հնձի ժամանակ յուրաքանչյուր ձուխ պիտի գար բերքը մեկ աշխատավոր՝ կամ վճարեր 1-ական ռ., 4) Յուրաքանչյուր ձուխ կալ կալելու համար պիտի տրամադրեր մեկ աշխատավոր, մեկ զույգ եզներով՝ մեկ օր —կամ վճարեր 1-ական ռ., 5) Յուրաքանչյուր ձուխ կալվածատիրոջ տարեկան պիտի տաներ մեկ տայլ փայտ **) և այլն, —«և չեմ ասում այս բոլորը վերացնել շուկայի արժեքով դրամի, կատարվի որ հողի չեկամտաբեր ամրողջովին հավիտ ծածկեր...» չեզրակացնում և միևնույն բուժուական հետախուզը։ ***)

Միևնույն վիճակում էր նաև 1870 թ. տեզավորված գյուղացիությունը, իսկ խեղճները՝ էլ ավելի վատթար։

Կալվածատեր դասը առանց պրոշ գիշերվա շարունակում էր չքավոր գյուղացիության լարված աշխատանքը թալանել՝ ձգելով նրան մերթ վաշխառուի ձեռքը կամ մերթ վաճառքի հանելով նրա շարժական կայքը։ Ձորացին պայմանները փաստորեն թալանվում էր դեռ և 20-րդ դարասկիզբն։ Կուլտուրական հաստատությունը բոլորովին շրջապատել էր գյուղական հասարակության, մարդիկ շարունակում էին «քեզի վրա նայել վարպես բժշկական միջոցի»... ****) Ով և ուր գյուղացին կհամարձակվեր բարձրացնել, դժգոհել—այդպիսի հանգամանքները նախ ևսկ էին անում այլևս կապալով հող չտանել—որ համարյա էր ընտանիքը քաղցի և մահացության շեմնալ—որ համարյա էր ընտանիքը քաղցի և մահացության շեմնալ

*) Jbid стр. 67
**) Jbid стр. 73
***) Jbid стр. 50
****) Jbid стр. 623

քին կանգնելու, – և կամ հանրածանոթ վոտաիկանութեան մշտական այցելուն՝ հյուրը լինելու պատվին արժանանալ...

Ծայրագավառային ադմինիստրացիայի գործունեությունը քննութեան կարիք չունի—ով չգիտե նրա կամայականութեանների, զրկանքների, ձեռ—հայհոյանքի, կաշառքի, բանտի ու բռնարարութեունների շարանը։ *) «Վոտաիկանութեունը հանդիսացել և պատրաստութեան ունեցվածքի գրավման թե անմիջական հանցավորի վերաբեր—թե վորպես տարբեր տուրքերի, նկուցիկի պահանջների պատրվակի տակ, թե նրա ազատութեան՝ իսկ յերբեմն անգամ նրա գոյութեան»։ **) կենտրոնական իշխանութեունը առիթներ կալվածատիրութեան ու գյուղացիութեան (վերարնակիչ, կազակաուս) միջև «հողային հարաբերութեունների այնպիսի յուրահատուկ կարգ, վորտեղ գրութեան բոլոր բարեմասնութեունները բացառապես պատկում էր առաջինների ձեռքին» ***), նամանավանդ նրան էր վերապահված պոլիցիական պաշտոններ առանձնելը, մի հանգամանք, վոր կրկին, յուրատիպ ծանրութեամբ սեղմել էր գյուղացիութեան հատկացրած յեղոտացան իրավունքների շրջանակը,— նկատում և իր ժամանակին ցավակցական ակնոցներով Անդրկովկասի հողային պայմաններին քաջ տեղյակ յուրաքանչիւր։

Այս վակխանալիան շարունակվում էր ծանրանալ հողազուրկ գյուղացիութեան վրեն՝ ավելի քան մթագնում, մոայլանում էր նրա անտեսական պայմանները—անգամ 20-րդ դարասկզբին, յերբ-ուսական իմպերիայի խավար յերկնակամարը սկսել էր շատ-պատնել բանվորական շարժման առկայծող լոցերով։

Անդրկովկասի արդյունաբերական կենտրոնների բանվորական բազմութեունը արձագանքեց այդ յուրյերին՝ 1902—3 թ. ****)։

*) Ռուս չինովնիկութեան «գործունեությունը» նկարագրել էր կալվածատիրութեան բոլորովին այլ հատված կամ վախ արևների դիմաց, վորը ձեակերպում է Ղարաբաղի խոշոր կալվածատեր—ազատ Սամսոն-Սուլթանը կլոսիկ զարձվածքով։— «Յես շատ լավ գիտեմ ռուսական գահը.—ձեռքը զրպանին խփելով—ահա նա, փառք Ալլահին, սրանից յես շատ ունեմ»։

Акты К. О. К. т. IX ստ 189 և М. Н. Кучаев—Феодализм и закрепощение в Закавказьи. Русский Вестник III ստ 95 СПБ. 1893 թ.

**) «Факты» №1 ст. Seneka

***) М. Н. Кучаев. Поземельный вопрос в Каспийской области и т. д. Русский Вестник IV ստ 202 изд. 1893 г.

****) С. Аркомед. Рабочее движение и С. Д. на Кавказе. Москва. 1923 г. «Միայն բանվոր գործադուլավորների թիվը, չհաշված ապստամբած գյուղացիութեյան, հասնում էր 100,000 » (յերես 131)։

Արևմտյան Վրաստանում՝ (Գուրյա և Մինգրելիա) — ծայրը եր առել ապրարային շարժումը, վոր ձևավորվում էր վորպես խիստ ապստամբութեյուն։ Բազաքական այդ դեպքերը այս կամ այն կերպ չէին կարող չանդրադառնալ կալվածատիրական դասակարգի ստրկական վիճակի թոթափման ունչերի վրա, նամանավանդ վոր Լոռու աշխատավորութեունը սերտորեն կապված էր Բաթումի հետ։ Այդպես էլ յեղավ։ Գյուղացիական առաջին հարվածային շարժումը մեղնում սկսվեց Հաղրաթի արյունոտ դեպքերով։

Հաղրաթը, վոր գտնվում է Ալեքսանդրապոլ պղնձահանքերից 7 վերստ վրա, ուներ 9.682 դեսյատին տարածութեյուն. *) որից նրից 8.500 դես. կնյազ Բարյատինսկի կալվածքն էր, 500 դես. Սբ. Նշան վանքին, 150 դես. Յերզնկյանցներին և մոտ 500 դես. նշան վանքին, 150 դես. Յերզնկյանցներին և մոտ 500 դես. նշան վանքին, 150 դես. Յերզնկյանցներին և մոտ 500 դես. նշան վանքին, 150 դես. Յերզնկյանցներին և մոտ 500 դես. նշան վանքին, 150 դես. Յերզնկյանցներին և մոտ 500 դես.

Թավադի առաջարկին՝ վոխարինել նոպելի առանձին կտրոնները իր հոդամասերով՝ կալվածքն առանձնացնելու նպատակով--գյուղացիք մերժում են: 1902 թ. նա կրկին բարձրացնում է կապալավարձը. գյուղացիք մերժում են կապալով վերցնել և լքում են հողերը: Զայրացած իշխանը «պատվարժանությունից» զուրկ գյուղացիներին «զաս» տալու նպատակով կալվածքների կառավարիչ և նշանակում վոմն համալսարանական՝ լիբերալ կնյազ Ամզուշելաշվիլուն. սա իր սահմանադրական խորամանկություններով անկարող և լինում կտրել գյուղացիության հավաքական կամքը: Հարևան գյուղացիք նմանապես մերժում են հաղրաթյինների «հողերը» կապալով վերցնել. կնյազը գիմում է այլ միջոցների: 1902 թ. անվար ճնշած հողերի տուրքը պահանջում և իր նշանակած՝ կրկնակի չափով. գյուղացիք մերժում են: Մայիսի մի գեղեցիկ որ գալիս են գավառապետ և պրիստավը չափարներով ու կոզակների խմբով ու պահանջում են «անհապաղ» կատարել Ամզուշելաշվիլու «արդար» պահանջը: Ամբողջ գյուղը մի հոգի դարձած իրար աշխատում են համոզել այդ պահանջների անիրավացի լինելը: Անասունների և անելի ունեցվածքների յուցակագրության փորձը այս անգամ վերջանում է ձեռով ու թնդանոթի քարկոծությամբ, վորը սոխալում և պարոն նաչալնիկին բավականանալ միայն մանավոր բանդարկություններով ու հետանալ: Շրջանի իշխանության ուշադրությունը կենտրոնանում է «ապստամբ» գյուղի վրա և մնկը մյուսի հետևից սարսափելից մինչև պրիստավ իրենց անակնկալ ներկայությամբ ու բանի պահանջներով վերջ են գնում գյուղացիների համբերությանը:

Վերջապես գալիս է (նոյեմբերին) և գաղտնի պրիստավը յուցակագրելու և վաճառքի հանելու գյուղացիների ունեցվածքը: Գաղտած գյուղացիք զազանակներով, քարերով ու լսո ու լրիչով

Նանք 200 թունդ (1 թ. = 10 գրվ. = 20 կոպեկ) = 40 ո.:
7) Ծխի հարկ՝ յուրաքանչյուր ծուխ վճարում էր՝ I-ին կուրկի՝ 2 ո. 50 կ., II-րդ կարգի՝ 3 ո. և III-րդ կարգի՝ 5 ո., միջին թվով 4 ո. (120 ծուխ) = 480 ո.:
8) Կակալը (орехи), սրա ամբողջ հասույթը Թավադին էր պատկանում -- մոտ 20 փութ:

Այսպիսով կնյազ Բարաթովը հաղրաթյիններից վերցնում էր մոտ 4.000 ո. մի գումար, վոր միշտ ձգտում էր ավելանալ: Բացի սրանից գյուղացիք վճարում էին պետական հարկ (թամղին), վանքապատկան տուրքը և այլն:

Տուրքերի և պարտավորությունների այս ցանկը բոլորովին էլ չի համապատասխանում Аргут-Долгоруков-ի նկարագրության („Борчалинский уезд"): Մոտավորապես միևնույնն և արձանագրում նաև «Պրիստավական կոխ» (№ 6,905 թ.) թերթի թղթակիցը Դուբնուկ և Ներքին Քոթիշ գյուղերի վերաբերմամբ, վոր նմանապես գտնվում էին կնյազ Բարաթովի կալվածքի վրա:

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ (ՏԻՄԱՖԵԵՎ)

ջարդում են յեկվորներին պրիստավի գլխավորությամբ, վորը հավիվ ձլվում և դյուղից։ Սակայն հաջորդ որը ներկայանում և կրկին նաչալիկը 200 կոզակների ուղեկցությամբ, կատաղած վճռականությամբ հավաքում դյուղացիներին և ձեռ ու հայհոյանքով, «հաղթական որինականությամբ» հրամայում և հավաքել դամերից՝ անասուններն, անեից՝ իրերը։ Ի վեր են անցնում կրկին ազաչանքներն ու լացը։ Պատրաստվում են քշել անասուններ։ Ընկնում և իրարանցում։ Հինավուրց վանքի պանգակատան դողանջը մի ակնթարթում վոտքի և կանգնեցնում ամբողջ գյուղը։ Կանայք, յերեխաները, ձերերը վախեցած անասունների վրից կամ գրված իրերը՝ չեն թույլ տալիս տանելու։ Ուժեղանում և իրարանցումը, հայհոյանքը, հրոսյուը։ «Կոզակները սկսում են ձեղել կանանց և յերեխաներին, վորոնք պաշտպանվում են գագանակներով, քարերով և ով ինչով կարող և։ Այդ ժամանակ գազանացած կոզակի ոգիները հրամայեց կրակել։ Կոզակները մի հազարկով վռեցին 8 մարդ (չորը կանայք)»... շարունակում և թղթակիցը։ Ապտամբ դյուղացիներից ձերբակալվում և բանդ են նետում 60 մարդ։ Իսկ գավառական ադմինիստրացիան կոզակների նիզնեգուցիոն գնդի ոգնությամբ յերկար ժամանակ շրջում և իր սովորական ասպատակությունները թե «ապտամբությունը» ճնշելու և թե «արդարադատությունը» վերականգնելու անվան տակ։

Կնյազ Ավգուշևլաշվիլին հասնում և իր նպատակին։ Հաղթի պիմադրությունը կազմակերպված չեր ու միանգամայն դուրկ քաղաքական դեկավարող ձեռքից — նա կրում եր տարբեր բնույթ. ուսաի և միևնույն պայմաններում շրջակա կեդվող դյուղացիությունը չարձագանքեց նրան։ Սակայն թողեց ձանր ապավորություն կռուի և յերկրի հեռավոր անկյուններում։ Անգին դյուղացիության խիզախ պիմադրության առաջին այդ փորձը, վոր յերևան հանեց կենդվող մասսայի հիմնովին ծառացումը հին պամիշչիկական-պոլիցեյական կարգերի դեմ՝ անուշադիր և անհետևանք մնալ չեր կարող։ *)

*) 1905 թվի հեղափոխության սրերին (հոկտեմբեր—դեկտեմբեր) այս գավառի դյուղացիությունը (բացառությամբ Թալինում և գավառի մի քանի տեղերում Ա. բամյանի (նախկին կնյազ Բարյատովի), Մերգեևի, Մանթաշյանի, կնյազ Սամբեկովի, Յուրինովի և ուրիշների անտեսությունները», գրավում հնվենտարը, չարժական կարողությունը և մյուս բարիքները (Վրաստ. Գետ. Արխ. գործ. ըստ ցուցակի №11 մաս II, 905 թ. Доклад Тифлисского губернатора за № 4277, от 30 октября 1905 г.)։ Ինակցիայի ուժեղանալով՝ վերականգնվում և նախկին դրությունը։

ադմինիստրացիան հավասարապես կողոպուտի և քմահաճույքի յեր յենթարկել բովանդակ յերկրի գյուղացիությանն: Նա կորցրել եր վերջին հարգանքը, ձգել իր պրեստիժը և վաղուց արդեն նըկատվում եր վորպես անխուսափելի պատուհաս, ցնց, վոր շրջանակում եր անպատիժ կրծել հասարակական որգանիզմը: Հասարակական այս ընդհանուր անբավականությունը արտահայտվեց մասսայական ցույցերով, դեմոնստրացիաներով մինչուն 1903 թ.՝ յեկեղեցական կալվածքների գրավման պատրվակի հետ զուգորդված:

Ի՞նչ ցույցեր եյին գրանք և վո՞րը նրանց բնույթն ու ընթացքը:

1903 թ. հուլիսին ինքնակալությունը հարքունիս գրավեց հայ յեկեղեցական, վանքապատական կալվածքները, կրճատեց «հոգեվոր հոտի» մարմնավոր իրավասանությունների սահմանը: Ակնհայտնի յեր, վոր յեկեղեցին, վորպես ֆեոդալական խոշոր մի միավոր, փաստորեն զրկվում եր իր յեկամուտների գլխավոր աղբյուրից, ինչպես և իսպառ կորցնում եր քաղաքական ազդեցությունը հասարակական կյանքում: Հայ հոգեվորականությունը իր «կարյաց չափ» վաստատուն բարձրացրեց, սակայն այն ջնջմեռանդությունը չդադարեց, վորպիսին նրա փարաջայի տակ թաղնված հայ նացիոնալ-դեմոկրատական խմբավորումները: Սրանց մեկնարանությամբ պետական այդ ուկազը «քանդում եր լուսավորչական յեկեղեցու հիմքը», «ձեռք մեկնում լուսավորչական հավատին», իսպառ ջնջում եր «հայ յեկեղեցու նվիրական իրավունքները, կաթողիկոսի հեղեմոնիան մեր ազգային կուլտուր-հասարակական ասպարիզում» *) և այլն և այլն:

Ազգային «գժբախտությունը» իր կնիքն եր դրել հասարակական կյանքի վրա: Բուրժուազիան ամբխտածության քողով եր պատել իր դեմքը. մինչդեռ կաթողիկոսի, նրա կամարիլայի՝ վանքային կույսերի ու բոլոր փարաջավոր ու անփարաջա լուսավորչական հավատացյալների ջերմեռանդ աղոթքներն ու արտասվից պետիցիաները—չդղնեցին, մազաչափ անգամ չշարժեցին «վանմոիտա կայսրի», «ոգոստափոս կայսրուհու և զաւակաց» և բոլոր աստիճանի բարձրաստավելիների... գութը:

«Ինքնապաշտպանության կոմիտեի» անվան տակ թաղնված Դաշնակցությունը փոխանակ ոգտագործելու ժողովրդական տրամադրությունները և ուղղելու այն քաղաքական ճիշտ կուրսի—կապակցել Թուրքահայաստանի սուլթանության հետ, ընդհակառակը, ամեն կերպ ձգտում եր ժողովրդական շարժումը տանել դեպի ահաբեկչություն, ինչպես դա տեսնում ենք նրա հետևյալ հրատարակություններից:

«Հայեր, արդեն մոռանում և այն որը—գրում եր այդ «կոմիտեն»,—վոր ռուս ցարի գծած չինովնիկները վոտ են կոխելու մեր տաճարները նրա ունեցած գույքերը, կալվածքները ու դրամագլուխները հափշտակելու:

«Մեր բարձր հոգեվորականությունը Նորին Ոծության թեվերի տակ ապավինած յուր կանգուն դիմադրությամբ հակառակելով հակառակել և մինչև որս յեվ ելի շարունակելու և յուր դիմադրությունը ռուս կառավարության հունիսի (իմա՝ հուլիսի Մ.) 12-ի կարգադրության դեմ առանց վախենալու բանաերից ու աթոռից:

«Այսօր նա առաքայիչ և յուր հայ ժողովրդի (ուշադրություն! Մ.) բուռն հուզմունքների, վորոնք արտահայտվում են Կովկասի զանազան քաղաքներում երբեմն ցույցերով ու մարդկային զոհերով (!?? Մ.), ապա ուրեմն յեվ մեզ՝ թե քաղաքային ցնծերիս յեվ թե գյուղացիներիս վերա «պարտականություն և ընկնում, ի նկատի ունենալով մեր մինչև որս կատարած յեղբայրների դիմադրական քայլերը, հայտնել յեվ մեր բողոքը, յեվ մեր հուզմունքը ռուս կառավարության հափշտակման դեմ:

«Այն որը, յերբ մեզանում կսկսվի յեկեղեցական կալվածքների գրավումը, պետք է՝

1. **Փակել բոլոր կրպակները:**

2. **Հավաքվել բոլոր յեկեղեցիները** (յուրաքանչյուր ծուխ յուր յեկեղեցին) **յեվ ճերկա լինել ըստ ավուր պատճառի** (ասելյուրյա !! Մ.) **ժամապահության:**

3. **Այդ որվանից 3 որ շարունակ վոչ մի հայ ընտանիք վորպես ազգային սուգ չի ունենալու վոչ մի խնճույք, հանգես ու հարսանիք:**

4. **Այս վորոշումներից դուրս շարժվող հայ անհատներ, ովքեր եյ վոր լինեն նրանք՝ վաճառական թե արհեստավոր՝ ոգնած թե հարուստ՝ թեկուզ հայ հոգեվորական, համարվելով ազգային դավաճան, կստանա յուր պատիժը:**

Ինքնապաշտպանության կենտրոն. Կոմիտեի Մանանցյուղ)

Այս ծրագրով և այս միջոցներով Դաշնակցությունը յերազում եր և վախենալ, և չկորցնել իր կապը իսպառ ցարական իշխանությունից, և շահել հայ աշխատավորության հարգանքը...

Սակայն այլ եր ժողովրդական լայն խավերի տրամադրությունը: Յեկեղեցական կալվածքների գրավման լուրը միայն

*) Ե. Ա[illegible]նի (Ե. Մարտունի) Դեպի կովկ, Մ. Վարանդյան—Դաշնակցությունը և իր հակառակորդները:

*) Հ. Հեղափոխության թանգարան, գործ № 60. ընդգծումները իմն են: Մ.

առիթ հանդիսացավ, վորպեսզի տարիների ընթացքում կուտակված գայրույթը՝ քաղաքի ու նամանավանդ գյուղի աշխատավորության փոդոց նետեր՝ չէ թե կալվածատեր—վանքի ֆեոդալական իրավունքները պաշտպանելու, այլ իր զվարճն արտահայտելու ռուսական գաղութային քաղաքականության, տիրող կարգերի, տնտեսական փոխհարաբերությունների, ծայրագավառների պետական վարքագծի խնդրին սխտեմի ու նրա գործոն ապարատների՝ անլուր կամայականությունների հանդեպ։ Դրա դեմ եկին ընդդիմին ծառայում դասակարգային և քաղաքական դաստիարակությունից զուրկ մասսաները։ Այս դիտակցությունը շարժման սալիս է տարերային բնույթ։ Անջատ գավառներում դեպքերը ծավալվում են առանց վորևէ քաղաքական կազմակերպության միջամտության։*) «Լոռու գավառի գրեթե բոլոր գյուղերում կատարվում են դեմոնստրատիվ հոգևնանդիսաններ՝ վերջին դեպքերի (հուլիսյան գործադուլների Մ.) ժամանակ սպանված ների առթիվ (Թիֆլիսի, Ղարսի, Գանձակի և այլ քաղաքների գուբերնատորների հրամանով), վորից հետո իշխանության անեծք կարդալով՝ արտասանում են ճառեր, յերգում ազգային-հեղափոխական յերգեր։ Մի քանի տեղերում յեղել են ընդհարումներ վոստիկանության հետ... Ջալալ-ողլում ուղել են ձերբակալել ագիտատորին, սակայն բազմությունը ուժով հետ է թվել նրան»...**) և այսպես ամենուրեք։ Ալեքսանդրոպոլում, Ղարաքիլիսայում և այլ շրջաններում ժողովրդական ցույցերը բացարձակապես ուղղված եկին խնդրող ցարիզմի սպանդի դեմ և... պետք վոր նրանք առեղծեին հուլիսյան դրության համար, վորպեսզի ամենուրեք կռվի մի ֆրոնտ, յերեք միայն ազգայնական կուսակցությունները, առաջին հերթին՝ Դաշնակցությունը, ճարպկորեն չկենտրոնացներ գեկավարությունը իր ձեռքում և կանխամտածված չթեքեր այն ընդդեմ «հայ յեկեղեցու պղծման», «ռուսացման», «Հայրիկի սպանության», սրբերի ու սրբուհիների «դարավոր հանգստի» վրդովման... «սպառնալիքի»... Ցույցերը հետզհետե մասնատվում են, մասսայական դեմոնստրացիաները նահանջում են, կարիկատուրային ձև և բնույթ ընդունում։

*) Ժամանակի գաղտնիության մասին անվերապահորեն այդ վերաբերյալ «մարտական» դուրսկության.—Ակնհայտ սուտ. Դաշնակցությունը **ակտիվական** **մասնակից** վոչ մի առնչություն չի ունեցել այդ դեպքերին, իսկ հետագայում նա վախկոտորեն թագնվել է «հայ յեկեղեցու տաճարների կամարների տակ» և ոգտագործել այդ շարժումները հոգուտ «մայր աթոռի» մշտնջենության!

**) «Искра», № 50.

Դաշնակցական Մկրտիչ Արխյան կաթողիկոսը որվա հերոս և հարյուրվում...

Շարժումները կորցնում են դասակարգային-քաղաքական նշանակությունը՝ վերածվելով շովինիստական սովորական ցույցերի, *) խռովությունների՝ և մարում են անհետևանք։

Այսպիսով տեսնում ենք, վոր բռնակալության ապրեսիվ քաղաքական վարքագիծը իր դեմ և կանգնեցնում մինչ այդ բատմենայնի լեգիֆերենտ՝ բովանդակ Հայաստանի աշխատավորության։ Սա չափազանց ուսանելի հանգամանք և, վոր Գուչկինյանը ուժգին իր անդուլ վորոգայթներով ավելի շատ հեղափոխական դործ կատարեց՝ հայ զանգվածներին միացնելով բռնակալության դեմ մղվող կռվին, քան հայ փետուրավոր «հեղափոխականները»։**) Հայ ազգայնական մտայնությունը հեղափոխականացած գյուղացիության և քաղաքի բանվորության դասակարգային-քաղաքական ձգտումները պարուրեց միայն ազգային ու կրոնական վշրանքներով՝ թեքեց ու խորտակեց նրա ճամփան նացիոնալիզմի ճահճում։

Հայաստանի աշխատավոր ժողովրդի սթափման ճավը կրկին փոխեց իր ուղին արտրված ճանապարհներով...

*) Թե վորպիսի արտասով կերպարանք ստացան այդ ցույցերը հետագայում բավական և հիշել, վոր հայ մանր բուրժուազիան հանձինս իր «քաղաքական» կազմակերպությունների անցավ կռվի էր հայտարարել այն բոլորին, ինչ ռուսական կնիք էր կրում—սովորական տարազը, թե ճաշը, ձևնասփայլուն ռուսական կնիք էր կրում—սովորական տարազը, թե ճաշը, ձևնասփայլուն թե գլխարկը—հավատարապես զրպոում էին նրա ազգային բնավորությունը։ Ալեքսանդրոպոլի փողոցներում բրածած էին անում անցորդներին կամ ալանդակում նրանց «ռֆաքը»—յերեք ռուսերեն խոսքից։ Այս զավեշտը տարբեր արարներով կրկնվում էր անգամ հազվում, Ցերևանում... կազմակերպում էին սգահանդեսներ... սև հագնում՝ և այս բոլորը դևկավարում էին կերպում էին սգահանդեսներ... սև հագնում՝ և այս բոլորը դևկավարում էին դաշնակ-հնչակյան «սոցիալիստները»՝ հանուն սոցիալիզմի ..

**) „Искра", № 50.

Գլ. IV

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԽՈՒՅՍ ՈՒԺԵՐԸ

Ռուսական հեղափոխության մակընթացության ալիքները ծավալվելով հյուսիսից հարավ, հնազհատ պարուրեցին Անդրկովկասի թե բանվորական և թե այլազան ժողովուրդների լայն շերտերը։ Ցարիզմի դեմ մղվող այդ կռիվը կուլտուրապես հետամնաց, ծայր աստիճանի կևղեքվող ազգությունների համար բացում էր սպասելիքների հեռանկար։ Տասնյակ տարիներ ցարական բռնակալությունը կիրառելով Անդրկովկասում իր դաժան քաղաքականության եքսպերիմենտները—շնորհիվ կամայական ներդաղթի կամ արտաղաղթի, ազգային փոքրամասնության տարրական իրավունքների բռնության, հալածանքի, մեկի ազգայնական կրքերը բորբոքելով ընդդեմ մյուսի,—փաստորեն ստեղծել էր մի դրություն, որի չեզքը լիներալ բուրժուազիան փնտրում էր պետական կարգերի բարեփոխության, թարմացման, իսկ բանվորական մասսաները՝ նրա խափան վերացման, բռնի տապալման մեջ։ Իսկ աշխատավոր գյուղացիությունը բացարձակապես տակավին՝ իր մեջքը ծռած հողային—հարկային սիստեմի ծանրության տակ, մասնավոր ծայրագավառային պաշտոնեության մարակի ու կաշառքի քաղաքականության զորության,—ինքնին չէր կարող այդ ազատարար կռվին հանդիսատեսի դերը ստանձնել և կամ բարեկազների անդին անցնել։ Միայն բուրժուազիան՝ թեև արտաքուստ անտարբեր, ներքուստ ամեն կերպ աջակցում էր պետական ուրդաննների ամրապնդման, հզորացման. հեղափոխության բարձրացող ալիքվակնը նրա հանդիսատը վրդովում էր անդադար.

Գործադուլային շարժումը ավելի ընդարձակվում էր, ստանձին զասված ուժերը կենտրոնանում, գործունեության ընդհանուր պլանով վերահավաքվում, ստվարանում էին բանվորական շարքերը։ Ռուս-յապոնական պատերազմը հաղիվ փրկեր ցարական պետականության խախտված հիմքերը հարյուր հազարավոր բանվորության զրոհից։ Զինվորական կարգերը, բռնի ուժը, նազայական ու կախազանը, առաջավոր դիրքերի սպառնական վտանգը—պահ մի «խաղաղացրին» գազազած յերկիրը արտաքուստ։ Հեղափոխական պրոպագանդան, գաղտնի կազմակերպության աշխատանքը կրկնապատկվում, ամեն արգելքներ արհամարհելով՝ ծավալվում էր անգամ ծայրագավառների խուլ շրջաններում։ Այս շատ լավ գիտեր բուրժուազիան և ամենից առաջ ցարական վոսպիկանությունը, որ հավատարիմ շան պես պրպտում էր ալեկոծվող հասարակական կյանքի յուրաքանչյուր յերեվեչ և գունավորում այն ի փառս բռնակալության հիմքերի ամրապնդման։

Ծավալվող հեղափոխության հակահարվածը Անդրկովկասում կազմակերպվում էր պալատական կուլուարներում։—Պետք էր կանխել ուռճացող «կարմիր ուրվականը», ջլատել կենտրոնացող հեղափոխական ուժերը, կազմալուծել նրանց քաղաքական ճակատումների ֆրոնտը, «զրաղեցնել» այլ խնդիրներով—մինչ իմպերիային սպառնացող կենտրոնական վտանգը կենթարկվեր լիկվիդացիայի։ Ահա հեղափոխության հակահարված կազմակերպող ուժերի հետագա գործունեության տակտիկան։ Յեվ ամենից առաջ մանր բուրժուազիան ու նացիոնալիստական կազմակերպությունները հանդիսանում են արժանի սրնդահարներ վոսպիտանիա Շերխենկինի և փոխարքա Վորոնցով-Դաշկովի ձեռքին այդ ծրագիրը կիրառելու գործում։

Սրանց նազատեց նաև սոցիալական ուժերի այն փոխհարաբերությունը, դասակարգերի խորացող շերտավորումները, որ շնորհիվ արդյունագործության արագ զարգացման—ստեղծվել էր յերբեմնի միատարր Անդրկովկասում։ Թուրք ազալարները հետզհետե կորցնում էին իրենց կարողությունը, հողը, ունեցվածքը։ Արդյունաբերական Բագուն ու տափաստանները ձեզբող յերկաթուղին դեպի իրեն էր ձգում տասնյակ հազարավոր աշխատող ձեռքեր։ Այստեղ աշխատանքի պայմանները անհամեմատ բարձր էին, քան բնական կալվածքների մշակության բնագավառում։ Ի հարկե արդյունաբերության զարգացումը, կապիտալի ներհուժումը հակահարված էր հասցնում անմիջապես կալվածատիրության նահապետական կարգերին ու ազատներին և, որ գլխավորն է, գրպանին։ Այստեղից էլ բնական պիտի համարել բնակ ու ազալարության այն ատամ կրճտոցումը, որ ազգային տանկության բռնադատությամբ ներարկվում էր տգետ մասսային ընդդեմ «քայքայիչ» կապիտալիզմի մունետիկի՝ հայ բուրժուազիայի։

Այնուհետև արդեն իսկ վերջին տասնամյակի ընթացքում անտեսական տապարհում կատարվող կոնկուրենցիայում հայ

բուրժուազիան իր «հայրենիքից» դուրս, առավելապես Բագվի նավթարդյունաբերական ոլորտում ու Անդրկովկասի առևտրա-արդյունաբերական շրջաններում գրավել էր առաջնակարգ տեղ և խեղդել կուլտուրապես հետամնաց՝ մասնավորապես նորածնունդ թուրքական ինդիւիտուիան—ամեն ասպարիզում։ Սա բավական էր, որպեսզի հրահրեր դասակարգային գիտակցությունից մի անդամայն զուրկ մանր բուրժուական, դուքանչի—սեփականատիրական դանդվածների ազգային ինքնասիրությունը, վերջիններս հակատակ ինտելիգենցիայի նացիոնալիստական մոտիկ ու հեռավոր ձգտումները՝ յերկուստեք կապիտալի մարտական կռիվը «ազգային» թափանցիկ շղարշով պարուրեր և ռեվանշի մղեր ազիտացիայի մեջ խարխափող մասսաներին՝ զրաղեցնելով հասարակական ուշքյան։

Դեռ ավելին. հայ ազգայնական մտայնության դեկավարները մի կողմից և թուրք նացիոնալիստ-ազալարները ու մանր բուրժուազիան մյուս կողմից, տարիներ անընդհատ «կրթում» եյին հայ և թյուրք մասսաների անհատնի ինտելիգենտները՝ մեկը—Տաճկահայաստանի ազատագրական շարժման գաղափարի տակ անուշելով միայն վրեժխնդրության և ազգային առելության դեպի թուրքը, մահմեդականը, մյուսը—զղվանք ներշնչելով դեպի իսլամի խաղաղ «կյանքի ու զարգացման» մշտական թշնամի «գյավուր հայը»—ստեղծել եյին վերին աստիճանի լարված մի մթնոլորտ, ուր ամենափոքրիկ կայծն անգամ պիտի բռնկեր յերկիրը համատարած հրդեհով։

Տնտեսական հակամարտությունը և իշխանության պրովոկացիան այսպիսով իրական փաստ դարձրին հայ-թուրքական ընդհարումները։

Հայ և թուրք նացիոնալիստական կազմակերպությունները թառած սեփական բուրժուազիայի թևերի տակ, անցան մասսայական ջարդերի ու կոտորածների գլուխ՝ միանգամայն յերես դարձնելով բռնակալության դեմ ծավալվող հեղափոխական փրոտեից։

Ցարական քաղաքականությունը խորացրեց ու ծավալեց այդ պայքարը։

Բարձր իշխանությունը պատվավոր սեկունդանտի դերը ստանձնեց. նրա միջամտությունը ուղղված եր միայն հավասարակշռությունը պահպանելու։ Կովկասի վոստիկանության շեֆը՝ արքունարբու Շիրինկինը, մեկը այդ ընդհարումները հրահրողներից, զեկուցում եր ներքին գործերի պարոն մինիստրին թե՝—«հակահեղափոխական շարժումների ընթացքը ինչպես փոխարքա-

յության սահմաններում, նմանապես և Թիֆլիսում չի կարելի համարել ուժեղացած, այն, ընդհակառակը, այժմ ես ընտելիորեն ցավագել ե հայ-բուրթական ընդհարումների ազդեցության տակ. վոր (ընդհարմները՝ Մ.) աւեագրությունը զբաղեցրեց ուրիշ կողմ»։ *)Դաղտնիքը հենց սրանում եր, ընդհարումների հմայքը միանգամայն բարերար զորությամբ հեղափոխության թափը «նվազեցրել», մասսաների մարտունակությունը «ուրիշ կողմ» եր թեքել։ Մթթե այս տարրական հետաքրքրությունից զուրկ եյին նրանք, ովքեր անմիջապես դեկավարում եյին հայ-թուրք աշխատավոր ժողովրդի արյունոտ կոտորածները. մթթե, ասենք, «ամենամարտական» Դաշնակցությունը չեր գիտակցում, վոր մեկուսացնելով հայ-թուրք աշխատավորության ցարի դեմ մղվող կռվից՝ փաստորեն նժարում եր դավաճանական հարվածներով Անդրկովկասյան պրոլետարիատի թիկունքին։ Հարցի ծանրությունը հենց նրանումն եր, վոր թե Դաշնակցությունը և թե հնչակյան «դեմոկրատիան» գիտեին իրենց անելիքները։ Յեվ դա րդում եր նրանց հիմնական նպատակից։—Պետք եր ամեն կերպ վառ պահել կովկասահայության մեջ Տաճկահայաստանի ազատագրության գաղը, չթույլ տալ, վոր նա («ժողովուրդը») տարվի Ռուսահայաստանի հեղափոխության, զրաղեցնել տեղական խնդիրներով, բարձրացնել նրա մեջ «հայի ավյունը», պատրաստվել Տաճկահայաստանը փրկելու... Ահա այն մտածելակերպը, ավել Տաճկահայաստանը փրկելու... Ահա այն մտածելակերպը, վոր յերկու հայ քաղաքական կուսակցություններին հետին թվով կանգնեցրեց հեղափոխության հակառակ բանակում։ Սակայն այդ մասին քիչ հետո։

Հայ-թուրքական ընդհարումները հիմնովին քայքայեցին յերկուստեք չբավող դյուզպիության տնտեսությունները, կանգնեցրին առևտուրը, արդյունաբերական ձեռնարկները, գործարանները և այլն։ Ինքնապաշտպանության անվան տակ Դաշնակցական «կոմիտեները» բառի իսկական իմաստով թալանեցին հայ աշխատավորության ամենավերջին կոպեկները։

Սրբագործվել եր հարկային մի նոր սիստեմ «ինքնապաշտպանության ֆոնդ» անվան տակ, վորը իր ծանրությամբ գերազանցում եր բոլոր տեսակի պետական հարկերն ու տուրքերը իրենց տակած մինչև շրջիկը ու կոմիտաչիները—ապրում եր այդ րոպեին

նված ձևի արդարադատության տանջանց, վորտեղ կուլակը, վաշխառուն թե վաճառականը՝ թելադրում եր իր կամքը հանուն «ազգի ինքնապաշտպանության»։ Դաշնակցության ադմինիստրացիան, վոր «դեկավարում» եր ներկիրը, ներսեն հանեց չենիչերիական թագնված տագնապ. մշտական սերբորի, սպառնալիքի, ձեռ ու բանաի, ահ ու դողի ուրվականը կախված եր Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների գլխին։

«Ամբողջ Ղարաբաղում հայ-թուրքական ընդհարումների ջնասը, ներկու կողմերի զինելու ծախսերը, պետի հաշվել 3-3½ միլիոն ռ. (վոսկով) վոչ քիչ, մի գումար, վոր հավասար է ամբողջ գյուղացիության շարժական կայքերի ⅙ մասին» *), գրում եր Զավարյանը, մեկը այդ ընդհարումների էքսպլոատներից. նա պատասխանում է այն մասին, թե ինչպես նրանք մոտ 2 միլ. ռ. գանձեցին առանց այն էլ չքավորության մեջ խեղդվող միայն Ղարաբաղ—Զանգեզուրի հայ գյուղացիությունից։

Այսպիսով ժողովրդի վճարունակությունը, չնորհիվ այդպիսի «ինքնապաշտպանության» տանդաստիկ ընկել եր, ասել է՝ վատթարացել նրա տնտեսական դրությունը։ Այսպես որինակ՝ միայն Զանգեզուրում առևտրական ձեռնարկությունների տուրքերը պակասել էին. **)

Տարի.	Տուրքերի գումարը.	Ռևառտա-արդյունարերական պտույտը (оборот).
1904 թ.	12,000	1,200,000 ռ.—
1905 թ.	9,700 ռ.	980,000 ռ.—
1906 թ.	700 ռ.	750,000 ռ.—

Այն ժամանակ, երբ սարսափի ուրվականը դամոկլյան սրի պես կախված լինի աշխատավոր ժողովրդի գլխին, վոչ միայն նրա հեղափոխական ջերմաչափը սառցման կետին պիտի հասներ, այլ և ներկոտրանքի մեջ՝ նա հեռացներ պիտի կորցներ և իր հասարակական նկարագիրը։

Հայ-թուրքական ընդհարումները փաստորեն հանդիսացան հեղափոխության ընդհանուր ֆրոնտի կենտրոնախույս ուժերից մեկը և ամենազգեստվորը, վոր քայքայեց, ջլատեց բանվորական շարժման թափը։

Սակայն ինչ ընթացք էլին բռնել հայ քաղաքական կուսակցությունները հանդեպ հեղափոխության ու մանավորապես հայ բանվորական շարժման։

*) С. Заварьян. Экономические условия Карабаха, էջ 31, СПБ 1907г.

**) Jbid էջ 32-33. (Թվերը վերաբերում են միայն Ղարաբաղին)։

Բաղաքական կազմակերպություններից ամենաուժեղը՝ Հայ **Հեղափոխական Դաշնակցությունն եր։**

Մինչև 1903 թ. այս կուսակցությունը իր գործունեության բացարձակապես ասպարեզ եր ընտրել միայն Տաճկահայաստանը։ Վոգևորված տաճկահայության «ազատագրման գաղափարով», հայ բուրժուազիայի տրամադրված միջոցներով մի կողմից զինված խմբերի, տերրորի, «աղմուկի» ճանապարհով ձգտում եր տապալել սուլթանի գահը—մյուս կողմից ապավինած յևրոպական դիպլոմատիայի «քաղաքակիրթ», «խոհուն», «ժողովրդասեր» (նամանավանդ՝ քրիստոնյա) վերաբերմունքին, քաշ եր տալիս «Հայոց հարցը» մի յերկրից մյուսը, սեղանից՝ սեղան, դամբյուղից՝ դամբյուղ։

903—5 թվ. ռուսական դեպքերը այդ կուսակցության տարել են քաշում։ Յարիզմի քաղաքականության հանդեպ նա չափազանց փափկանկատ ձևով դնում և առօրյա կուլտուրական գործունեության խնդիրը. այնպես վոր վոչ յարի ինքնակալության և վոչ էլ բուրժուազիայի դեմ մղվող դասակարգային կռվին նա պարզապես չի միանում։ Այլ ընդհակառակը, ամեն կերպ ձգտում է թուլացնել հայ մասսաների մարտունակությունը հօգուտ դեպի Տաճկահայաստան կազմակերպվող արշավանքների, ջարդերի։ Ի դեպս այդ քաջգործություններով վոչ միայն շոշափելի ոգնություն չհասցրեց Տաճկահայ ժողովրդին, այլ և բնաջնջման յենթարկեց նրա լեկտրները՝ առանց անգամ վրդովելու «քրիստոնյա» յևրոպայի «քաղացած» գութը։

Հայ-թուրքական ընդհարումների պերիոդում նա իր վրա է առնում առանձին յեռանդագործությամբ հայ բուրժուազիայի թիկնապահության «պատվերի» պաշտոնը, զոհելով հեղափոխության և աշխատավոր ժողովրդի բովանդակ շահերը «հայ» կապիտալին։ «Ազգը», «հայ լուսավորչական ժողովուրդը»՝ բուրժուա թե կղեր, գող թե ավազակ—ինչ կատեգորիայի էլ պատկաներ նա—միևնույն է՝ վայելում եր նրա «հեղափոխական» հովանավորությունը։ Ժամդամերների այդ շատ լավ գիտեր և գնահատում եր... «Հայ հեղափոխական ֆեդերացիան—«Դաշնակցությունը»—Բագվում, ինչպես և ամբողջ Կովկասում վերջին ժամանակներս **գլխից հեռացել է հեղափոխական շարժման ակտիվ մասնակցությունից յեվ զբաղված է բացառապես բուրժուների հետ կռվով»**, գրում եր Վորոնցով Դաշկովը՝ վիտտեին։ *)

Բաղաքական կենտրոններից հետո «հայկական» գյուղերը

*) Վ. գ. արխ. Дело Канц. Упр. по описи архива № 88. 1905 г. ст. 64 «Доклад В. Дашкова к Витте за февраль 1906 г.

մեռած ոգով շրջապատել էր Դաշնակցությունը. նրա գինվորները և «կոմիտեները» հետևում և բանտարկում էին այն ամենին, ով հանդգնում էր «խելքին դուռ տալ» և իրենց քիֆի ուզածի պես չմտածել։ *) Կալվածատիրության և բուրժուազիայի դեմ կռիվը զավաճանության էր հորջորջվում և ազգի ապագա սպասելիքների տեսակետից՝ սխալ։ Ջե՛ր ցարի դիվանապետությունը խոստացել էր «իրական ոգնություն» **) «Հայկական հարցը» լուծելու, իսկ բուրժուազիան՝ գրամական աջակցություն՝ Մայր Հայաստանը (Ցանկահայաստանը) «ազատագրելու» համար, ժողովրդի ֆիզիքական բնաջնջման ուրվականը խավար վերացնելու. . .

Ձերանի հավատացյալներին։

Ուռճացող հեղափոխության ալիքը չէր կարող իր գերկը չառնել նաև հայ բանվորական մասսան, հայ աշխատավորության։ Տնտեսական և քաղաքական գործադուլները, դասակարգային բորբոքվող կռիվը՝ սպառնում էին ազգայնական կուսակցությունների ազդեցությունից ազատագրելու բանվորական շարքերը... Դաշնակցությունը թափահարում է իր խունացած շապիկը. յերկրի «որևիկիվ պայմանները», վերջապես, դասավորվում են այնպես, որ այդ կուսակցությունը հնարավոր և գտնում «Անդրկովասում վարել դասակարգային պայքարը» ընդդեմ բուրժուազիայի և հանուն սոցիալիզմի... ***)

Դաշնակցության, ֆիդայիների այդ ճկուն կազմակերպության «սոցիալիստական, դասակարգային պայքար» յուրահատուկ բնույթ և ատանում։ Այն ժամանակ, յերբ գեկավար շրջանները սոցիալիզմին հարելը մերժում են բացատրել վորպես քաղաքական ընթացիկ ակակիկա, գավառական կենտրոններում այդ կուսակցության գեկավար «կոմիտեները» գինվորական ուժով միջամտում և ցրում են բանվորական գործադուլները՝ ընդդեմ խոզկիններին։ Այսպես որինակ 1904 թ. ապրիլի 30-ին Ալեքսանդրոպոլի տնային ծառայողների գործադուլը բռնի ուժով ցրվեց, նրա գեկավարները ձեռի յենթարկվեցին Դաշնակցական կոմիտեյի կողմից և բանտ նետվեցին։ Միևնույն վիճակին արժանացան նաև 1905 թ. Ղարսի բանվոր-ծառայող—արհեստա-

*) «Պրոլետարիատի կռիվ» № 6, 905 թ. թղթակցություն գավառից։

**) 1914 թ. Իմպերիալիստական պատերազմի նախօրյակին նմանապես այդ «իրական ոգնության» մասին խոսվեց գրա վրա կանգ կառնենք մի այլ տեղում.

***) Մինչ. Համազասպյան (Վարանդյան). Դաշնակցությունը և նրա հակառակորդները։

վորների մի քանի գործադուլները և սրանց գեկավարները նույնպես բանդարկվեցին։ *)

Հետևները չդնանք։

Ահա մի քանի որինակ Դաշնակցական սոցիալիզմի գաղափարային գինված կռվի (!) և հեղափոխական տենդագին (!!) տեսակետից։ Սրանք չե՞ն թե վերաբերում են մինչ հեղափոխական շրջանին, այլ 1905-6 թ., յերբ գեռ վոչ Անդրկովկասում շարունակվում էր մահացու պայքարը։

1. Մի թռուցիկ, հեկտոգրաֆի վրա տպած՝ ձեռագիր.

«Բոյկոտ.

Ամառյա 3-ին պատահած գեպքից հետո, վորի ժամանակ կարապետ Մալխասյանցը ցույց տվեց յուր անպատման հակակարապետ Մալխասյանցը ցույց տվեց յուր անպատման հակահեղափոխական-հակաժողովրդական բնույթ կրող վարմունքը, (Ձեր ժամանակությունից հրաժարվելը՝ Մ.), Հ. Հ. Դաշնակցությունը բոյկոտ և հրատարակում ողևորեցնում կարապետ Մալխասյանի դեմ յեվ հայտարարում և բոլորին չգնել հիշյալ ողևորյալի գեմ յեվ հայտարարում և բոլորին չգնել հիշյալ ողևորյալի դ

Հ. Հ. Դաշնակցության Թիֆլիսի Գործ. Միության Բյուրո» *)

3. Նորից թուղթ—հայերեն լեզվով՝ տպագիր.

«Բոյկոտ.

Եգոր Հովսեփովից Սամբեգովին

... Միությունը վճռեց խիստ բոյկոտի ենթարկել վաշխառու Սամբեգովին յեվ իրեն խանութին, վոր գտնվում է պ. պ. Թամամշյանների քարվանսարայում, շտաբի դիմաց, — մինչեվ վոր նա բավարարություն չտա (արձակված եր 1 գործակատար՝ Մ.)։ Ամեն վոր պետք է կարև իր կապը ու հարաբերությունը հայանի Սամբեգովից յեվ նրա խանութից, մինչեվ վոր չվերցվի խուլիգան, վաշխառու Սամբեգովից բոյկոտի խայտառակ դրոշմը...

Հ. Հ. Դաշնակց. Թիֆլիսի Գործ. Միության»։ **)

Հարկ կա արդյոք ապացուցելու, վոր ամենից առաջ այսպիսի բոյկոտը դասակարգային կռվի մեթոդ չե, վորքան էլ նա «խաղով» և «խայտառակ» լինի։ Վերջապես ոչ են դիմում այդ բուլկոտիստներն իրենց առաջարկով—թուղթիով, խանութպաններին, առևտրականներին թե փոխկատուն տիկիններին («գնողներին»). իսկ հետևանքը։

Բացատրություններ պետք չեն. որինակների թիվը կարելի յե տասնապատկել— գրությունը վոչնչով չի փոխվում. մանր բուրժուական հոխորտանքից անդին չի անցնում նրանց «պայքարը»։

Հ. Հ. Դաշնակցությունը ձգտում եր հարմարվել տիրող պայմաններին,—սակայն պարզապես դեմ եր ցարի ինքնակալության և բուրժուազիայի դեմ մղվող դասակարգային պայքարին՝ նամանավանդ՝ վրնված ապատամբության։ Նա կանգ չառավ անգամ բռնի միջոցներով ցրել Բագվի և Թիֆլիսի «հայ» բանվորության գործադուլները։ ***)

— Այն ժամանակ, յերբ Տաճկահայ ժողովրդի ֆիզիքական գոյության հարցն և հրապարակում դրված, Անդրկովկասի հայ բանվորների գործադուլները՝ իրենց անտեսական վիճակը բարվոքելու նպատակով—հանցանք և դավաճանություն պիտի նկատել թե դեպի Ռուսաց պետության, վոր ժառանգված և Տաճկահայաստանի գործով, և թե դեպի բուրժուազիան, վոր կյանք և տալիս «յերկրի» շարժումներին. ահա Դաշնակցության սեմի-

*) Այս և հաջորդ ծանոթությունը թվականներ չունեն, վերաբերում են, բուն յերկուսքին, 1905 թվի վերջերին։ Տես՝—Հայաստանի Կուսակցե արխիվում։

**) Ibid։

***) Հ. կուսակցում «Բուլետեն» №2 Ռ. Ս.—Դ. Բ.Կ. 22 վկտ. 1905 թ

նարհատական բարբաջանքները, նրա «սոցիալիստական-դասակարգային» գործունեության հեղափոխական պատվանդանը։ *)

Մեզ կառարկեն, գուցե, թե արդյոք շահագրգռված եր հայ բուրժուազիան (ինչպես և ռուս բուրժուազիան) Տաճկահայաստանի ազատագրական շարժումով. գուցե նրա ոգնությունը ազգային ինքնասերության թելադրանքով բացատրել.—այս խնդիրը պիտի պարզել նախապես՝ ցրելու մի անգամ ընդ միշտ զանազան յենթադրական մեկնաբանություններ։

Հայ բուրժուազիան՝ անկասկած խոշոր գրամատերերը՝ իրար և աննպատակ չեին շահագրգռում իրենց վոսկիները։ Դեռ վաղուց՝ յերբ արտասահմանյան կապիտալը հետզհետե կոնցենտրացիայի յենթարկում Անդրկովկասի շահագործվող արդյունաբերությունը—հայ բուրժուազիան ամեն հարստություններ շուկա յեր վճռարում։ Նրան շատ լավ հայտնի եր Արևելյան Անատոլիայի՝ Երզրումի, Խնուսի, Վանի շրջաններում ընկած նավթի, պղնձի, արծաթի, վոսկու, յերկաթի և այլ անսպառ հանքերի ոգտակարները՝ վորոնք ավելի մեծ ապագա եյին խոստանում քան՝ անգամ Բագվի շրջանը։ Այդ հարստությունների շահագործումը, կամ նրանց տիրանալը առավելապես զրաղեցրել և հայ բուրժուազիային։ Տաճկահայաստանի քաղաքական ազատությունը վոչ միայն պիտի դյուրացներ առևտրական ոպերացիանները, այլ և գծում եր նրանց առաջ նորանոր հեռանկարներ։ Հայ հրապարակախոսներից մեկը սրան խորքից մեկտում է՝ յերբ ականատես և, թե ինչ արագությամբ ռուսը յեվրոպական կապիտալը Պոլսի վրայով թևավոխում և Անատոլիայի խորքերը—սպառնում և զրավել հայկական շրջաններում ընկած նավթի անսպառ աղբյուրները։ **) Յեվ միայն այս հանգամանքն եր ստիպում հայ բուրժուազիային տանջվել Տաճկահայաստանի «ազատագրության» «Մայր Հայաստանի» կողոպուտը նրա համար ընդատակ եր, իսկ Հ. Հ. Դաշնակցությունը նրա ժամանակավոր հետախույզ սուրհանդակը։ Դաշնակցության արշավանքները հայ բուրժուազիայի ապագա հարստություններին հասնելու՝ միջոց եր իսկ իր հա-

*) «Պրոլետարյատի կռիվ» № 6. 905 թ.։

**) А. Каландар. Экономические перспективы Восточной Анатолии. Тефлис 1913 г. Այստեղ պ. Քալանթարը զարուզի համապարհնի՝ բով կոչ է անում հայ գրամատերերին մտածել այդ ուղղությամբ (միամիտ ձերունի! Մ.) և առևտրա-արդյունաբերության մինիստրության միջոցով կամ Պոլսի ռուսական դեսպանի ոգնությամբ կապիտալ մտցնել յերկիրը, աշխատանքները սկսել։ Զգուշորեն շարադրած այս զրույցը հայ բուրժուազիայի տարրերի յերազն է։

մար—վաճառված հայրենասիրության փառք և ինքնաթաքեյություն... Դաշնակցությունը մինչև վերջն էլ (1907 թ.) մնաց բուրժուազիայի գործադրը լիրող և ուրիշ ոչինչ. մինչդեռ Տաճկահայ աշխատավոր գյուղացիությունը բարձրացավ Գողգոթա՝ վորպես քավության նոխազ։

Սակայն և այնպես, Դաշնակցությունը կառչած հայ ազատավորության կոկորդին—քայլ առ քայլ հետևում եր նրան... իր ձուղակում առնելով նրա կամքն ու կորովը։ Այսպես 1904 թ. մայիսի 17-ին, լերը դեռ չեր չորացել Ալեքսանդրոպոլի «կոմիտեի» զոհաններով ջարդված բանվորների գլխից հոսող արյունը,—նա հայտնում եր «Սոցիալիստական Միջազգային Բյուրոյին» (2-րդ ինտերնացիոնալին),... «վոր, արդար և մենք հարած եմք Միջազգային սոցիալիզմի սկզբունքներից, վորոնք (?.?. Մ.) արժարծվել են 15 տարուց ի վեր մեր հրատարակությունների մեջ, մասնավորապես մեր կուսակցության օրգան «Դրոշակի» մեջ, մասնավորապես մեր կուսակցության օրգան «Դրոշակի» եջերում»։ *) Իսկ 905, 6 թ. թ. իր դավաճանական դերերը ընդդեմ հեղափոխության ու Հայաստանի բանվորական շարժման չեր խանգարում նրան մի տարի հետո Շաուտպարի կոնգրեսի ամբիոնից անամոթաբար հայտարարել՝ թե Հ. Հ. Դաշնակցությունը յեղել և սոցիալիստական կուսակցություն հենց իր ծագման որից և կազմակերպել և գործադրություններ (? !) դեռ ևս 1900-ական թվականներից»։ **)

Անպատկառ սուտ!

Դաշնակցությունը Հայաստանի բանվորական շարժման ընթացքին իր պրակտիկայով միշտ հանդես և յեկել վորպես հակադիր մի ուժ և ամեն կերպով ձգտել նրա դասակարգային գիտակցությունը մեռցնել, նա խարում եր հայ աշխատավորության, մեռցնում նրա յերկիտասարդության հեղափոխական էներգիան և «վճռական պահերին, հեղափոխական կռիվների ժամանակ... անցնում եր՝ և չեր կարող չանցնել—ռեակցիայի կողմը (1905. դեկտ. Թիֆլիսում, 906 թ. օգոստ. 25—26 Բագվում։ *)

* * *

Քաղաքական կազմակերպություններից մյուսը **Հայ Ս.-Դ. Հնչակյան** մասնությունն եր։ Այս կուսակցությունը Անդրկովկասում, մանավանդ Հայաստանի երկանության մեջ ձգտել և արժատանալ մանր արհեստավորության և ինտելիգենտական շրջաններում։ Նա զուրկ եր կազմակերպչական կայուն, միասնական ձևից, մի հանգամանք, վոր նրա շարքերում առաջ եր բերում հաճախ տարրալուծում, քայքայում։ Տարված բացարձակապես Տաճկահայաստանի ազատագրական շարժման գաղափարով՝ ընդգրկած ազգայնական իդեալոգիան—հնչակյան «խմբերը», «մանդատները», «վարչությունները» անդեկ ու անատագաստ խարխափել են ոտար հորիզոններում։

Հնչակյան կուսակցությունը չուներ **սոցիալական բազա.** յերե Դաշնակցությունը հենվում եր ազգային խոշոր ու մանր բուրժուական շրջանների վրա և անվում նրա քաղաքական իդեալներով, պաշտպանում նրա հասարակական դերերը,—ուժ, վոր դասակարգի մոնոպոլին եր Հնչակյան կազմակերպությունը։ Բանվոր դասակարգի.—բայց չե՞ վոր նա ամբողջովին դեմ եր սոցիալիստական պրոպագանդային, սոցիալիզմի կիրառման **) և

*) «Ծանուցումն» Անդրկովկասի Ս.-Դ. Բ. կ. 4-րդ համագումարի (արձանագրություն և վորոշումներ) էջ 17—18. Թիֆլիս 1906 թ.։

**) Շաուտպարից մի նամուշ. 1903 թ. մայիս-հունիս ամսում Ալեքսանդրոպոլում տեղի ունեցավ «Հնչակյան կուսակցության Ռուսաստանի և Նովկասի պատգամավորական ժողովը»՝ հետևանքով մի որդան, վոր քննության եր առնում կուսակցության տարաբնական և տեսական վարքագիծը՝ 4-րդ մագումարին լուծելիք խնդիրները։ 1902 թ. ռուսական դեպքերի ազդեցությամբ տակ արտասահմանում նստած հնչակյան «Գործադիր Հանձնախումբը» յուր առաջին շրջաբերականով կիրառել եր «սոցիալիզմի վերաբերյալ» մի կետ։ Սակայն պատգամավորական այս ժողովը քննության առնելով «1902 թ. Գործ. Հանձնախմբի № 1 շրջաբերականի սոցիալիզմի վերաբերյալ կետը ներքին (հարցը) – միանգամն ընդունվից առաջարկել 4-րդ ընդհանուր պատգամավորական ժողովին (1904 թ. Ս.) ներքին այդ շրջաբերականի հիշյալ կետը. Նախագահ՝ Հրանտ (նամսար (Գրիգոր Վարդանյան՝ Մ.), կ. վարչության լիազոր՝ Սարգսյան»։ Այս միևնույն պատգամավորական ժողովը քննության և առնում «վիրաբերմունք դնելի Ռ. Ս. Դ. Բ. կ.», վոր ի գնալ «հետաձգվում և հարցը անպատճառ» լինելու պատճառով։ Այնուհետև՝ «վիրաբերմունք դնելի Հ. Հ. Դաշնակցությունը» – վորոշվում և «յերե Հ. Հ. Դաշնակցությունը ապատամբություն բարձրացնի յերկրում, միանալ նրան և ամեն կերպ պաշտպանել այն և այլն» (Հայաստանի կուսպատի արխիվ՝ այդ ժողովի արձանագրություն)։

*) «Պրոլետարիատի կռիվ» № 6. 905 թ.

**) «Անդի» №9, 908 թ. Բազու.

Ծանոթ.—Շաուտպարի կոնգրեսում Դաշնակցությունը ներկայացրեց մի ֆանտաստիկական զեկուցում իր «սոցիալիստական գործունեության», ըստ վորի նա ուներ կովկասում (907 թ.) 23.000 կազմակերպված հայ բանվորներ, 67.000 գյուղացիներ, իսկ անդամների ընդհանուր թիվը (յերկրագնդի վրա) վորոշում եր 165.000։ Այսպիսի սուտը, վորից այժմ նրա հեղինակները պիտի վոր ամաչեն, ի հարկե ունեցավ իր ազդեցությունը։ Սոցիալիստ-հեղափոխական Բուրտանովիչը այնուամենայնիվ գրկվածանձից իր նոր դաշնակցի հետ պատից Ինտերնացիոնալ կուսակցության անկցության նախագահ՝ և իր ընկերների խորքը։

մահոզված եր չե թե բանվոր դասակարգի պայքարով—այլ **Տաճկահայ ժողովրդի** փրկութեան «սրբազան» գործով։ Պատմութեյունը յերկու դար եր ավել այս կուսակցութեյան գաղափարախոսներին—յեթե հեղափոխական (ազատամարտեյան) կռիվների, կոտորածների տատանող ճամբով ազատագրվեցին հելլեն և սլավեն ժողովուրդները, ինչու մինուչև ճանապարհով չկրկնել Տաճկահայաստանը Համիդյան լծից.—այս եժանագույն պատաիկան։ Զինք և դիվլոմատիա նշանարանը գրկախառնած—Հնչակյան խմբերը գնում եյին փրկելու «հայ ժողովրդին»։ Ո՞վ եր այս իղեալներով վոգեվորվողը՝ բանվորը թե խանութպանը, չքավոր գյուղացութեյունը թե հայկական լիբերալիգենցիան։

Եժանագին հայրենասերների այս «կուսակցութեյունը» հետևողութեյամբ սոցիալիզմին խորթ, զուրկ քաղաքական ամուր պատվանդանից, գաղափարական տարրեր թափթփուկների հավաքածու լինելով՝ բնականաբար հեղափոխական վճռական րոպեյին յերես պիտի թևքեր բանվորութեյան դասակարգային կռվից։

Դեռ ևս 1905 թ. սկզբներում ռուսական դեպքերի ազդեցութեյան տակ Անդրկովկասի (ինչպես և Սիմֆերոպոլի, Սևաստոպոլի և այլն) հնչակյան փոքրաթիվ բանվորական խմբերը կըրակոսպես պահանջում եյին կենտրոնից «ընդունել Ռ. Ս.-Դ. Բ. կուսակցութեյան «փոքրամասնութեյուն» կոչվող մասի տաքտիկան և կազմակերպչական յեղանակը» և... ձուլվել նրա հետ (այդ մասին մանրամասն տես՝ հավելվածում տեղավորած «Ծանուցումն»)։ Սակայն «ազգային ինքնուրույնութեյունը» չկորցնելու համար Հնչակյան 5-րդ համագումարը «ընդունելով Տաճկահայ դասը կուսակցութեյան ամենատասաջին գործը», մերժում և այդ, որ և պատճառ և դառնում բանվորական զանգվածների՝ նրա շարքերի խոպոր լքման, *) Ռուսական հեղափոխութեյան ազդեցութեյամբ իրականացած այդ պատմական գործով եր արտասահմանյան հնչակյան գեներալիտետին յերկու քայլով առաջադիմած հայ բանվորութեյունից, որը պաշտոնական հնչակյան

*) Ընկ. Դ. Ղարաջյանը իր «հիշողութեյուններում» (տպագրված 1918 թ. Թիֆլիս, եջ 46) այն միտքն և հայտնում, որ իբր թե 905 թ. հեղափոխութեյան ներգործութեյան շնորհիվ հնչակյան կենտրոնական գլխավոր մարմնից «(Ս Նազարբեգ, Ռան-Ազատ, Կաֆյան և այլն) անջատվեցին հնչակյան կուսակցութեյունից և միացան Սոցիալ-Դեմոկրատներին» Սա ճիշտ չե մանավանդ վերոհիշյալ «գլխավորների» վերաբերյալ, որոնք 5-րդ համաժողովում գրավում եյին «իսկական հնչակյանիզմի» աջակողմյան դիրքերը։

յանիզմի՝ «նացիոնալիստական և հակապրոլետարական թագնված ձգտումները» կիրառել այլևս անկարող եր։ *)

Գյուղի քաղաքական և վոչ մի կուսակցութեյուն իր գոյութեյան ընթացքում այնքան տրագիկ վարկյաններ ապրած չլինի, վորքան հնչակյան կուսակցութեյունը, վորը իր ամբողջութեյունը պահպանելու նկատառումներով մերթ հանգես և յեկել վորպես «պատարյուն Ս.-Դ.» մերթ սրբիենացիոնալ-դեմոկրատական և հաճախ առանց վորևե սոցիալիզմի կամ դեմոկրատիզմի։

«Թուրքաց Հայաստանում գործող հայ հեղափոխական մարմինները,—գրում եր հնչակյան պաշտոնաթերթը,—ամեն մեկը վորոշ հասկացողութեյամբ, կարծեք սպառում են իրենց ուժերը։ Դաշնակցականները իրենց ուղղութեյան և տաքտիկայի համաձայն, իսկ հնչակյանները թե այս վերջիններին (լավ լսեք՝ Մ.) միայնակ չթողնելու և թե ժանավանդ կոտորվող ժողովրդին ոգնութեյուն հասցնելու միտումով՝ խմբեր են անցկացնում Թուրքաց Հայաստան, կռիվներ մղելով այդ խմբերի միջոցով այլ և այլ պատահական դեպքերում։ Այդ կամ անայդ կռիվները այդ ուրիշ խնդիր և, հարցը նրանումն և, վոր այդ կռիվների անմիջական բարոյական (?!) վարձատրութեյունն և գործող հեղափոխականների մարմինների համար այն, վոր նրանք **հատուցել են իրանց գործունեության մեջ, վորպես չեն իրանց գործունեության վերաբերմամբ**։ Այսպես և դատում այդ «սոցիալ-դեմոկրատական» կոչվող կուսակցութեյան պաշտոնական որգանը. հարկ կա՞ արդյոք վերլուծելու հնչակյան ժամանակության այս քանքարը։

Հնչակյան կուսակցութեյունը իր յերկարամյա գոյութեյան ընթացքում միշտ խարխափել և տարբեր ըմբռնումների յերկընտրանքի մեջ, «անկարող լինելով թափ տալ իրենից հնութեյան փոշին, մերթ նացիոնալիզմին և մեկնում ձեռքը, մերթ էլ քավում

*) Տ. Հ. Կուսպաի Աբել. Աբրիմանի (Ս. Քալայանի) «Միշտ հառաջ» դեկլարացիան (905 թ.) և „Սիմֆերոպոլի Բանվորական Միութեյան նոյեմբերյան ծանուցումը»—հավելվածում։

Հնչակյան կուսակցութեյունից մասսայական «արտագաղթը» տեղի և ունեցել 1903 թ. վերջերից սկսած։ Գաղթողները կոդմնակից եյին en masse Ռ. Ս.-Դ. Բ. Կ «փոքրամասնութեյան» տակտիկային։ Սակայն թե 905-7 թ. թ. և թե հետագայում նրանք յերբեմն փարում են «փոքրամասնութեյան», յերբեմն «մեծամասնութեյան», չխորշելով անարխիզմից ու յերկար ինտերվալներից։ Այս վոլտապատյուր ուղին, քաղաքական անհաստատ վարքագիծը և մարքսիզմի տարբեր մեկնաբանութեյունը յուրահատուկ կերպարանք են տարուն հնչակյանիզմին, ցավ դրանից չազատագրվեց գրեթե հնչակյան ոչ վարդապետ։

**) «Հնչակ» N 8. 904 թ.

սոցիալ-դեմոկրատիային, բայց վոչ այս և վոչ այն դեպքում իր համար ուղիղ ճանապարհ չի գտնում և ճոճվում է»։ *)

Քաղաքական ճկունությունից միանգամայն զուրկ, ալբա-յուական տարրերից կազմված հնչակյան «վարչությունները ու մանդատյուղերը»՝ **) ինչ խոսք, վոր չէին կարող և չկարողացան Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները իրենց հետևից տանել։ Ազգայնական-բուրժուական պատկերի սոցիալ-դեմոկրատական ֆրազաբանության մեղմագին ժպիտն անգամ նպաստավոր ազդակ չհանդիսացավ հնչակյանիզմի ժողովրդականացման։

Յուր այս քաղաքական կշռով հնչակյան տարերքը առաջմղիչ ուժ չհանդիսացավ և հեղափոխական պրոլետարիատի բարձրացրած ապստամբության ճակատը լքեց։

* * *

Դաշնակ - հնչակյան՝ եյությամբ հարազատ, հայ մանր բուրժուական և դուքանչի տարրերի խմբավորումները վոչ միայն շուտով մոռացության ավին իրենց «սրբազան» միսիան—այլ և առաջնության դավինների փայլով շլացած, Հայաստանը գարձրին սպանությունների, տերրորի, մասնությունների ու պատերազմի թատերաբեմ... Լքելով հեղափոխական դիրքերը՝ փաստորեն անցան բուրժուազիայի կողմը՝ պնակալիզի ու հնամյա պրոտեիտուի դեր ստանձնելով բացին մի նոր ֆրոնտ—դաշնակ-հնչակյան զինված կռիվների մի նոր արար։

Շրջաններ, քաղաքներ, գյուղեր, առանձին թաղամասեր՝ մեկը—«դաշնակ», մյուսը—«հնչակ», իրար դեմ կռվի եյին դուրս գալիս, արյուն թափում, խզում ամեն տեսակի փոխհարաբերություններ։ «Հնչակյան» Համամուն—«դաշնակ» Ղարաքիլիսայի վրա տաճիներ են կրճատացնում, Ղարաբ՝ Ալեքսանդրոպոլի, Սարիղամիշը՝ Կաղզվանի, Խնձորեսկը՝ Գորիսի դեմ և այլն և այլն, և այս բոլորը հանուն... «սոցիալիզմի սիզրեներների» ու «հնչակյան մարքսիզմի» անվերապահ պաշտպանության!

Մի դեպք, մի օրինակ.

---

*) «Պրոլետարիատի կռիվ» № 5, 905 թ.

**) Տարածված մի լեգենդա կար... թե կովկասում հնչակյան „դիմոկրատների" թիվը հասնում եր (1905—7 թ.թ.) 40,000-ի. Զվեռք և զարմանալի—«այն ժամանակ» հայ «ժողովուրդը» ըստ լեգեությունն ամենից դեմոկրատ, իսկ հնչակյաններն ու պաշնակցականները՝ ամենից „հեղափոխական - սոցիալիստներ" եյին.—լեգենդի հավատացյալներին։

«Դաշնակցականների յեվ Հնչակյանների պատերազմը Խնձորեսկ գյուղում

...1906 թ. հունվարի 27-ին Հ. Հ. Դաշնակցության Սյունիքի կոմիտեյի ժամանակավոր բյուրո Մ.*) գնում է Խնձորեսկ յեվ պահանջում խնձորեսկցիներից 3500 ռ. զինի ֆոնդի համար։ Նրանք միանգամայն հրաժարվում են, պատճառաբանելով, վոր Խնձորեսկի հասարակության մեջ, բացի 30 անձից՝ հնչակյան և Մ. դառնում է ժողովրդին հետևյալ խոսքերով.—Ժողովուրդ, դուք գիտե՞ք ինչ է Դաշնակցությունը, դուք տեսե՞լ եք նրա ուժը... Ասում եմ ձեզ՝ մինչև փետրվարի 15-ը պատրաստեցեք այդ 3500 ռ. յեվ ձեր հոժար կամքով հանձնեցեք ինձ, հակառակ դեպքում ստիպված կլինեմ Դաշնակցության ուժը ցույց տալ ձեզ։ Կամ պիտի 3500-ը տաք յեվ ցության ուժը ցույց տալ ձեզ։ Կամ պիտի 3500-ը տաք յեվ պատկաներ մեր կազմակերպության, կամ պիտի թուրքանար յեվ կոտորվեր իմ ձեռքով։ Ժողովուրդը ականջ չդնելով՝ միաբերան հրաժարվում և կրկին, իսկ Մ. յուր զինվորների հետ սպառնալիքներով հետ անում և գյուղից։

Վերադառնալով Գորիս Մ. իսկույն յեվ յեթ հրահանգ և տալիս իրենց գյուղական ներկայացուցիչներին զինվորական կազմով ներկայանալ Ալդուլի հայաբնակ գյուղում։

Հրամանը կատարվում է. 8 գյուղից (անունները բաց են թողնվում. խմբ.) հավաքվում են Ալդուլի 300 ծիավորներից ավելի զինվորներ։ Նախաճաշիկից հետո «զինվորական բանակի» հրամանատարը բարձրացնելով կարմիր դրոշակ «մահ կամ ազատություն» մակագրով՝ շարժվում են դեպի Խնձորեսկ «Ցամման յեկավ ջանֆիդան» յեվ «Մենք անկեղծ զինվորներ ենք» յերգերը յերգելով... Բանակը կանգ և առնում ուղիղ Խնձորեսկի դիմացը՝ գերեզմանոցում։

Ձերը գյուղից նկատում են այդ բազմամարդ ամբոխին, մի րոպե կարծում են, թե պաշարված են թուրքերով։ Սակայն դրոշակից իմացվում է, վոր գյուղը պաշարված է հայ «Փիդրոշակից իմացվում է, վոր գյուղը պաշարված է հայ «Փիդայիներով»։ Մ.-ի սպառնալիքը բանի չեր... Հնչակյան ներկայացուցիչը նույնպես հրամայում է իր զինվորներին գինվել յեվ պատրաստ մնալ։ Միյեմնույն ժամանակ «բանակի» հրամանատարի մոտ ուղարկում է 8 հոգուց բաղկացած մի պատգամավորություն առաջարկելու դրոշակը իջեցնել յեվ մարդիկ ուղարկել գյուղը բանակցելու յեվ բացատրվելու։ Բայց հրա-

---

*) Դաշնակցության լիազոր Համբարձում Մելքումյան՝ իրավաբան՝ հայտնի քաղաքական մունդիրով։

մանատարը հրամայում և ծեծել պատգամավորներին չեվ թափվել գյուղի վրա։ Գյուղից հավաքված դագանակներով վրա են հասնում խլում դրոշակը չեվ պատռում։ Հանում են նայել կանայք չեվ միասին սկսում են ծեծել չեվ զինաթափ անել։ Յերբ դագանակի մի հարվածով ծիուց վայր են գլորում «հրամանատարին», մեր Ֆիդայիները սկսում են զալզ տալ դեպի գյուղը, որի ժամանակ սպանվում և 14 տարեկան պատանի չեվ վիրավորվում են 2 հոգի գյուղից։ Նրանց հրացանածգութեյանը գյուղից պատասխանում են նույնպես հրացանածգութեյամբ։ Դաշնակցականներից սպանվում և մեկը, վիրավորվում՝ յերկուսը չեվ սպանվում նույնպես 5 ձի։

Հնչակյանները... գերի չեն վերցնում 77 ձի չեվ 40-50 մարդ, որոնց այնքան են ծեծում, որ շատերը այժմ պառկած են անկողնում»*)։

Այս պատկերը համատարած եր հայկական գավառներում։

«—Այս տագնապալից րոպեներում,—կարդում ենք հնչակյան մի թռուցիկում,—Հ. Յ. Դաշնակ. տեղիս (Ալեքսանդրոպոլի՝ Մ.) կոմիտեն նույնպես կռվում և. բայց ո՞ւմ դեմ, կարծում եր միայն Թշնամո՞ւ, վոչ, քավ լիցի, ի ցավ ազգի՝ յուր յեղբայրների դեմ, հայերիս դեմ, Հնչակ. Ս.-Դ. կուսակցության դեմ, դնելով Հնչակյան կուսակցության լինել չլինելու խնդիրը»... Բայց լսեցեք դեռ շարունակությունը՝... «Հայերիս կորում և բարբարոս թուրքը չեվ միաժամանակ կոտորում և յուր յեղբայր հայը, սրով չեվ թրով (բառասեղծական և, չե՞. Մ.) սպառնալով, վոր հայը չպետք և ունենա սեփական հոգմունք, կամք, խոսքի չեվ խղճի ազատություն, անձի անձեռնմխելիություն»**)... և այսպես անվերջ։ Հնչակյան մասնաճյուղերի բաց թողած թռուցիկների 80%-ը վերաբերում են միջկուսակցական գժտություններին, սպանություններին։—Ահա թե ինչով եյին զբաղված «գործող հայ հեղափոխական մարմինները» («Հնչակ»)։

Մնում է պատմական իրողություն, վոր սնանկացած բռնակալ այդ յերկու ախոյանները չկամեցան իրենց գծած ճանապարհից այդ ճակատագրական հաշիվներից ազգին դիտել չեվ պատմական իրադարձությունների վայրկյանին ծավալվող հեղափոխության հեռ

*) «Բանվորի Ձայն» № 1, մարտ 19, 1906 թ. Գործի թղթակցություն։

**) «Զարթքը պետք և վերացնել» թռուցիկ Հնչ. Ս.-Դ. կ. Աբգադի (Ալեքսանդրոպոլի) Մանաճյուղի, 11 դեկտեմբերի 1905 թ. Տես Հայաստանի կուսգործի արխիվ (Վոնը չենք փոփոխել. Մ.)։

ընդհանուր մի Քրոնս կազմել։ Այս չպետք և մոռանալ և անկարելի և հաշվի չառնել այդ հանգամանքը, վորն ավելի խորացրեց Հայաստանի աշխատավորության մեկուսացումը, կղզիացումը։

Մենք բերենք մի գեղումնտա ևս, «Հայ հեղափոխության» (և վոչ թե՝ Հայաստանի կամ Ռուսական՝ Մ.) «ապիկար առաջնորդների» ձեռքով գրած, մի գոհար մանր-բուրժուական իդեոլոգիայի, վորը հեղափոխական շարժման հետագա ուրվագծողի աչքից չպիտի վրիպի։

«Հայց նամակ գաղթականներից.

Յեղբայրներ.

Այս նամակը մենք Ձեզ ուղղում ենք վոչ վորպես հեղափոխական կուսակցության, այլ վորպես անհատներ, հայ հասարակության, վոր֊ի միջոցով (!) չեվ վոր֊ի համար (!!) գոյություն ունի այսոր հեղափոխությունը ընդհանրապես։ Բայց այդ հեղափոխությունը այսոր ցավ ի սիրտ կորցրած յուր գիտակցությունը ու աչքից փախցրած յուր Սուրբ Նպատակի հետագնացները, շփոթելով նյութականը յերկրորդականի հետ, վաճառելով գործի մնայուն արժեքը ապիկար չեվ անարժան գժտությանց ու խարդավանքների կորստաբեր հետևանքի հետ, չտարբերելով գաղափարական մաքուր կռիվը յեղբայրասպան սորը դավերից, միշտ պատրաստ սորտամիտ հրապարակություններին, ամենից լրջմտության չեվ խոհեմության ականջ դնելու, խառնեվուռ հաճախ անհատի չեվ կուսակցության պատասխանատվության, կորստյան անդունդն և նետում հայ ժողովուրդը, վոր թյունը, փոխանակ ազատագրական ճգիրակաց ճգնության ուժի սեղմից գոհ բերելու յուր վաճառ ընդունակությունները ու հոգեկան կարողությունները, գլուխ պատցնող ջրաձգությամբ ապատում և յուր ձի համար։ Հայ (?!) հեղափոխությունը այդպիսով վարկաբեկ է անում վոչ միայն իրեն, այլ չեվ հայ ժողովրդի ամբողջությունը չրջապատող չեվ տիրապետող ազգերի մեջ։ Յեթե հայ (!?) հեղափոխությունը (իմա՝ փոխադարձ կոտորածը՝ Մ.) հանձին իր ապիկար առաջնորդների ի դերև և հանելու հայ ժողովրդական հուլյարը չեվ չե իրագործելու այն մեծ առաքելությունը, վոր ստանձնել է նա (ուշադրություն Մ.) ժողովրդից վերածծելու (իմա՝ վերաջնջելու՝ Մ.) նպատակով, ապա թող նա իրեն բարեխղճորեն սնանկ հռչատակե չեվ ժողովրդից թողնե իր ճակատագրին։ Այս դեպքում ժողովուրդն ինքը կկրե պատասխանատվության իր ապագայի հանդեպ չեվ կդարձնե ներ

կայում ինքնապաշտպանության անշեղ մետաղը (*)։ Յեթե հայ ժողովուրդը չի կարող գործել կազմակերպված, թող նա գործե անհատաբար։ Վորպես հայ անհատներ մենք կոչում ենք ձեզ այս մեծ ճգնաժամին, յերբ հայության առաջ կատաղվել են բազմաթիվ խնդիրներ, ազգային, բաղաքական, բաղաքացիական (?) յեվ տեղական, կանգնել ստանձնած գործի բարձրության վրա յեվ այդպիսով վերջ դնել այնպիսի գործերի, վորոնք կարող են կուսակցությունների մեջ գժտություններ առիթ դառնալ։ Նույնը կաշխատենք սրբությամբ յեվ բարեխղճությամբ նայել մենք կատարել Ձեր հանդեպ։

Հնչակյաններից։

23 հուլիսի 1905 թ. Յեղեսքա»։)

Այսպես ուրեմն, «հայ հեղափոխության ապիկար առաջնորդները, վոր ստանձնել եյին ժողովրդին վերածնելու գործը», պատրաստ եյին «անանկ հայտարարելու» ինք զինքը։ Սակայն մեթե պակաս անանկություն եր այն, վոր ցարի և բուրժվազիայի դեմ մղվող ազատարար կռիվը զոհաբերեցին «սուրբ նպատակին, նվիրական գործին, մեծ առաքելության», վորին ակնարկում են հնչակյան սրբասեր «յեղբայրները»։ Պատմությունը այդ չի մոռանա։

Քաղաքական այն վակխանալիան, վոր ստեղծել եյին «հայ ժողովրդի» մոնոպոլիստները—մթագնել եր՝ բանատեղծի խոսքով՝ «խավարով պատել մեր շուրջը բոլոր»։ Մի քայլ ևս՝ և... այդ կուսակցությունները պիտի խնկարկեյին ցարին, ծունր չոքեյին նահանգապետների սրունքների առաջ։

Առիթը չուշացավ։

Ծավալվող շարժումները քանդում եյին պետության հիմքերը. ինքնակալությունը մեկը մյուսի հետևից շնորհում եր նորանոր ռեֆորմներ։ Դեռ ևս 1898 թ. մարտի 26-ի և 1903 թ. հուլիսի 12-ին հարքունիս գրված յեկեղեցական կալվածքները և գումարները «գիտա» ցարը հետ շնորհեց հայ ժողովրդին 1905 թ. օգոստոսի 1-ին։

Այդ մեհենուն հայ ժողովրդի «հարազատ» զավակները խաչ ու խաչվառով կրոնական մաղթանքներ կազմակերպեցին ամենուրեք իրենց «հաղթանակը» տոնելով և... ցարին յերկարակյանություն ցանկանալով։ Բագվի, Գանձակի, Յերևանի, Շուշու

*) Այս նամակը հեկտոգրաֆի վրա տպած՝ ձեռագիր և. վոճը՝ ընդգծումները և նշանները իմը։ Յեղեսքա=Ղարս։ Հայաստանի կուսպատմ. Արխիվ։

վողոցներում ջարդ կազմակերպող իշխանությունը այսոր արդյունվա ժողովրդի «հարազատ ներկայացուցիչների» կողմից փառաբանվում եր։

Դեռ ավելին. ցարի հոկտեմբերյան մանիֆեստը, վոր բանվորական շրջաններում ընդունվեց վորպես թղթի անպետք մի կտոր ու ավելի հրահրեց փողոց դուրս յեկած մասսաներին—Հայաստանի հողի վրա, Հ. Հ. Դաշնակցության և Հնչակյան Ս.-Դ. կուսակցության ազդեցության շրջաններում փոխվեց հայրենական ցույցերի, հորջորջվեց վերպես նորին վեհափառության կողմից «վողորմագին նվիրարերություն»...

«Այսոր **Յերևանում** հավաքվեց հոծ բազմություն և հիմնարկության ներկայացուցիչներ. կատարվեց մաղթանք և զորահանդես։ Յերեկոյան քաղաքը զարդարվեց էլեյտրիականությով, տրամադրությունը առնական և, կարգը՝ սրինակելի։ **Եգդիրում** տրամադրությունը սովորական և՝ պակաս դիտակցական։ **Ջուլֆայում** տրամադրությունը խնդագին և... **Նոր Բայազետում** հազարավոր ժողովուրդը յեկեղեցիների հոգևորականության առաջնորդությամբ անցավ քաղաքի միջով, ծաղիկներով զարդարված ցարի նկարով՝ ուրախագին ուռռա կոչերով։ Ի հիշատակ դեպքերի (մանիֆեստի՝ Մ.) բացված և ժողովրդությունն Նիկոլայի անվան զրադարանի»։*)

Այլ եր տրամադրությունը **Ալեքսանդրոպոլում**։ Յերկաթուղային բանվորությունը զրկության տերն եր...**) «Հոկտեմբերի 19-ին յերեք զաղթականներ (?՝ Մ.) ուղևորվ անկարգությունն առաջացնել, կրակեցին հոգևոր զպրոցի մոտ հավաքված ամբոխի վրա, սպանելով մեկ կնոջ և մեկ յերեխայի։ Ամբոխը սպանեց յերեքին էլ։ Ելի 3 զաղթականներ վիրավորվելով ուրիշների զաշույնով՝ թաղվեցին խանութներում։ Ձերբակալվեցին. ի դեպ խանութները ամբոխը թալանեց։ 20-ին Ալեքսանդրոպոլում ամբոխը կրկին սպանեց մեկ զաղթականի։ Յերկու դեպքում էլ զորք պահանջվեց—բայց կարգը վերականգնվեց առանց զոհերի»։***) Դժվար չե այս պաշտոնական հաղորդագրության իսկությունը դիտել։ Դեմոնստրացիայի վրա «կրակ բացելը» փորձված պրովակացիոն միջոց եր վոստիկանության

*) Վրաստանի Պետ. Արխիվ—Дело по архиву № 16 стр. 5-9. Доклады—телеграммы Эриван. губернатора Коновалова, 1905 г.

**) Յերկաթուղային գործադուլների մասին՝ տես համապատասխան գլուխը։

***) Jbid (Վր. Պ. Արխ.) եջ 10—12։

կոմիտեից, վորպեսզի «անկարգություն առաջացնող զաղթականներին (իմա՝ յերկաթուղու գործադուլավոր բանվորներին՝ Մ.) ամբոխը և «ուբյացնիկի դաշույնը» պատժեին»։

Շուբին *և առնում ես...*

«Թիֆլիս, գեներալ Շերվաշիձեին.

«Հայոց յեկեղեցում կատարած յերեսփոխանական մանթանքից հետո, հասարակական ժողովրդական ճաշի ժամանակ նորին բարձրապատվությունը (թեմի առաջնորդը) առաջարկեց սիրված մոնարխի կենացը, վորը յերջանկացրեց առաջ ժողովրդին՝ շնորհելով նոր արտոնություններ։ Սրանից հետո առաջարկվեց Կովկասյան փոխարքայի և Ջեր կենացները, վոր ընդունվեց միահամուռ ուռռաձներով։

*Ռազաքագլուխ Քալանթարով, Համբարձումով, Աբիլեևով, Իշխանով, Բ. Մարդասով, Մելիք-Փաշայան»։ *)*

Հայ բուրժուզիան ու կղերն այլ կերպ չեյին կարող արտահայտել իրենց սրտի հարազատ զգացմունքը...

Հայոց աշխատավորությունը հեծում եր քաղաքական բողոքներ ներկայացնելու վոճով։ Հայ նացիոնալիստական յերկու կուսակցությունների քաղաքական տաքտիկան, հայ-թուրքական չարգելը, միջկուսակցական կռիվները, կամարիլլայի, ցարի պաշտոնեության, «ինքնապաշտպանության կոմիտեների» թալանը և այլն՝ հանգամանքներ, վոր թույլ եյին տալիս հայկական դավառների աշխատավորության լայն զանգվածներին առակա, անհապաղ հեղափոխության...

**) Վ. Պ. Ս. Կովկասյան Հանդեսների գործերը՝ дело по описи № 16—1905, էջ 51—53։*

Գլ. V

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

*1903 թ. գյուղացիական-մասսայական շարժումների իրականի վիճակը, վորքան էլ Ժողովրդի թշնամիները պարուրեյին այն կրոնական-ազգայնական տենդենցներով,—գալիս եր միանալի կրճատ

յերեն առաջին ս.-դեմոկրատական թերթը հրատարակվեց 1902 թ. «Պռոլետարիաս» անունով, վորը կարճ գոյութիւնից հետո միացավ Բագվում լույս տեսնող վրացական «Բրձոլա» (Կռիվ) շաբաթաթերթին՝ «Պռոլետարիաի կռիվ» ընդհանուր անունով (1903-1905 թ.), վորպես որգան Ռ. Ս.-Դ. Բ. կ. (բոլշևիկների)՝ հայերեն, վրացերեն և ռուսերեն մի տասնակ որինակներով։ Այս յերեսուն ժուրնալ-ամսագիրը իր «Պռոլետարիաի թերթիկով» դարձավ իրոք Անդրկովկասի բանվորության դաստիարակողը։ Հայաստանի գավառներում (Լոռի, Ալեքսանդրապոլ և այլն) դեռ մինչև այժմ էլ կարելի յե հանդիպել նրա առանձին համարներին, հրատարակած բրոշյուրներին, թռուցիկներին։

Այդ շրջանում Սոցիալ-Դեմոկրատական այսպես կոչված Հայ կազմակերպությունը (սպեցիֆիկների) *) նույնպես հրատարակեց՝ թեև ժնևում «Սոցիալիստական հանդես» (1902 թ.), վորը, սակայն, հանդես չեկավ հայ մասսայական շրջաններում. այնուհետև՝ 1903 թ. Բագվում լույս տեսավ նաև նրանց «Սոցիալիս» ամսատեսը, վոր շուտով վերածվեց ժնևի և ըստ ամենայնի՝ ակադեմիական բնույթ ստացավ։

Այնուհետև 1906 թ. մարտի 19-ին Հայ սպեցիֆիկները Բ. Իշխանյանի խմբագրությամբ հրատարակում են «Կյանք» շաբաթաթերթը, վորը ըստ ամենայնի խորթ մնաց բանվորական կյանքին և մեկ ապրիլի 1-ից Ռ. Ս.-Դ. Բ. կ. Թիֆլիսի կոմիտեն հիմք և դնում «Կայծ»՝ առաջին բանվորական որգանին (խմբ. ընկ. Շահումյանի և Ղարաջյանի), վորը շատ շուտով անցնում և ամբողջովին մենամասնականների ձեռքը։ Այսպիսով հայ բանվորական շրջանները շուտով կապվում են «Կայծի» հետ, վորի ազդեցությունը Հայաստանի գավառներում դառնում և իրողություն։ Նրան փոխարինում է «Նոր խոսք» (6 ոգոստ. 1906 թ.), «Ճավիդ», և այլն.—Բագվում՝ «Ռաճվորի Ձայն» (մարտի 19-ին 1906 թ.), «Որեր» և այլն, Յերևանում «Факты» (1907 թ.) և այսպես անվերջ. Ինչ և բանվորական մամուլի պատմության ուրվագծողին արձանագրել այդ հրատարակությունների դերն ու կատարած աշխատանքը հայ իրականության մեջ։

*) Ս.-Դ. Հայ կազմակերպությունը (հայկական Բունդը) 1905-6 թ. դեպքերից հետո բաժանվեց՝ մի մասը միացավ բոլշևիկներին, մյուսը՝ մենշևիկներին։ Նրա ղեկավարներն եյին՝ ինժ. Բազդասյան, Հովհ. Յուզբաշյան, Ջեռալեմ, Ն. յեվ Վ. Տեր-Վաղարյանները, Տ. Խաչանյան, Սլ. Ռուբենի, ապա Բ. Իշխանյան, Գ. Գինիկյան, Դ. Անանուն յեվ ուրիշները։

Գ. ՍԱԿԱԼՈՎՍԻ

ՇԱՆԹ (Մ. ՄԻՐԱՔՅԱՆ)

Միաժամանակ նախաձեռնված կազմակերպչական աշխատանքների շնորհիվ Հայաստանի գավառներում մեկը մյուսի հետևից կազմակերպվում են (1903-4 թ.) խմբակներ, կոմիտեներ՝ Ղարսում, Ջալալ-Ողլում, Լոռու շրջանի (Բորչալվի) մի քանի գյուղերում, Ալաշկերտում, Սահանոսում, Յերևանում, ապա (1905 թ.) եջմիածնում, Իղդիրում, Սարիղամիշում և վերջապես (1907 թ.) Նախիջևանում և Նոր-Բայազետում։ Իսկ Ալեքսանդրապոլում Ս.-Դ. կազմակերպությունը թե՛ յերկաթուղու բանվորության և թե՛ գորքի շրջանում քաղաքական պերակշռող ազդեցություն ուներ դեռ ևս 1902-3 թ.։

1905 թ. հոկտեմբերյան հեղափոխության ընթացքում այդ կազմակերպություննները դուրս են գալիս ինսուրրեկցիոնական կռվից և ընձեռում մասսայական կազմակերպչական աշխատանքի։ Կիսալեգալ դրությունը վերականգնում և նրանց փոխարձակ կապի և ինֆորմացիայի բացակայությունը և հիմք դնում կազմակերպչորեն միասնականության։

Այսպես որինակ Յերևանի կազմակերպությունը*) դեռ ևս 1904 թ. սկզբներին ուներ կազմակերպված յերեք խումբ (բջիջ), մեկը թեմական դպրոցի և գիմնազիայի սաներից, մյուսը կանոց գիմնազիայի ուսուցչական շրջանում, յերրորդը կայարանի յերկաթուղու բանվորներից (թվով 45 ը.)։ Սկսած 1905 թ. սկզբներից Յերևանի կազմակերպությունը ամրապնդվում և վում է բանվորական շարժման՝ դեկավարելով բանվորական առաջին գործադուլը Սարաջևի գործարանում։**) Սա խոշոր մի յերևույթ եր իր ժամանակին։

---

*) Յերևանի կազմակերպության ու գործադուլային շարժման մանրամասն տեղեկությունները և այլ կարևոր դեպքերի պարզաբանումը հայտնել է մեզ ընկ. **Գևորգի Նիկոլայևիչ Սակոլովսկին**, ովքը 1903 թ. մինչև 1909 թ. դեկավարել և այդ կազմակերպությունը, կազմակերպության աշքի ընկնող ընկերներից պետք հիշել՝ բացի ընկ. Սակոլովսկուց, նաև ընկ. **Ա. Մանուչարյանին**՝ Նարկոմի Տեխնոլոգիական Ինստիտուտի ուսանող, ովր դեկավարում եր աշխատանքները մինչև մեռավ 1906 թ. դեկտեմբերին կերական խմբակների աշխատանքները (նա մեռավ 1906 թ. դեկտեմբերին Յերևանում), յերկաթուղու վրայի մի բանվոր (ազգանունը անհայտ է), ովր միաժամանակ կոմիտեի անդամ եր, ապա **Ս. Ղևոնդյան, Տաճեր**, իսկ 1905 թ. վերջերից մինչև նաև հնչակյաններից բաժանված տեղական մի քանի ընկերներ։ Ի դեպ այս կազմակերպության հիմնադրման ժամանակը մի քանի ընկերներ դամաչն սխալմամբ համարում են 1905 թ. դեկտեմբերը, յերբ հնչակյան այդ ընկերները հեռանում են իրենց մայր կազմակերպության գրկից («Յերկրպագին Հայաստան» 1923 թ. № 51-ում ընկ. Մաղյանի և № 53-ում ընկ. Վ. Բաղդասարյանի հիշողությունները)։

**) Գործադուլների մասին տես հետևում՝ առանձին գլուխ։

*Ալեքսանդրոպոլի Ս.-Դեմ. կազմակերպութիւնը՝ քաղաքային, *) յերկաթուղային և զորական,—պատկառելի մի ուժ եր ներկայացնում իր համարձակութիւնով, խիզախութիւնով և հեղափոխական տեմպերամենտով։ Տարինների ընթացքում զորքի մեջ տարածուելիք պրոպագանդան (պրուկցներ, թռուցիկներ, կոչեր), իր փայլուն հետևանքներն եր ավել։ Այսպես՝ կայազորի զինվորներին ուղղած մի թռուցիկում՝ «Բավական է ծառայել ժողովրդի ճշնամիներին» միտքը պարզարանելուց հետո, Սոց.-Դեմ. կազմակերպութիւնը պահանջում է «...1) Ներումն՝ քաղաքական համոզմունքների պատճառով ընտված բոլոր զինվորներին, ինչպես յեվ զինվորական որինականութիւնը խախտողներին. 2) իսկական ծառայութիւնի ժամանակամիջոցի նվազեցումն՝ թողնելով պահեստի զինվոր. 3) քաղաքավարի վերաբերմունք. 4) ծառայութիւնի ժամերից դուրս՝ ազատ թողնել. 5) ավելացնել ռոճիկը, բարելավել կերակուրը յեվ հագուստը. 6) վերացնել զինվորների՝ վոստիկանական ծառայութիւնն ամեն. 7) պաշտոնավոր անձանց՝ ինչպես զինվորների, նույնպես յեվ ազանների համար բնարութիւն. 8) ընտրական դատարան՝ զինվորների յեվ ազանների մասնակցութիւնով. 9) խոսքի, միութիւնների, ժողովների յեվ մամուլի ազատութիւն նմանապես զինվորների համար. 10) զինվորներին հատկացնել ժողովրդական Հիմնադիր Ժողովին ընտրելու յեվ ընտրվելու իրավունք. 11) հետացնել ծառայութիւնից արտաժամյա պաշտոնյաներին։*

Կորչի ինքնակալութիւնը, ցարը յեվ մինիստրները...

*Ալեքսանդրոպոլի Զինվորական Ս.-Դ. Կազմակերպութիւն»։ **)*

*Նոյեմբերի 24-ին այդ պահանջներին ավելացնելով կուլտուրական և կենցաղային բնույթ կրող խնդիրներ՝ զինվորական Ս.-Դ. կազմակերպութիւնը ներկայացնում է 33 պահանջներ և առաջադրում գործադրելի խնդիրը։ ***) Սրա հետևանքով և առաջադրած գործադրելի խնդիրը։*

---

*) *Քաղաքային կազմակերպութիւն աչքի ընկնող ընկերներից (1906թ.) հիշվում է Թումանեան, Ադամ Տանիելյան, Վ. Նաչալարյան և ուրիշներ։*

**) К солдатам Александропольского гарнизона срока службы 1901-2 г.г. 3 ноября 1905 г. Алек-поль. *Տես՝ Հայաստանի Հեղափոխ. Թանգարան, գործ № 25։*

***) „Солдаты всех видов оружия, соединяйтесь! "Воззвание Алекс. Соц Дем. Орг. военных от 24 ноября 1905 г. *Տ. Հ. Հեղափոխ. Թանգ. գործ № 25։*

վանքի մասին՝ ժանդարմերիան արձանագրում է «... Ալեքսանդրոպոլում տեղական կայազորի մասերի զինվորները կազմակերպել են հավաքույթ մասնակցութիւնով գլխավորապես Բակինսկի 153-րդ հետևակային և կարաբինական գնդերի։ Հավաքույթին **ատատանվեցին հեղափոխական բովանդակութիւնով ճառեր, զորից գինված ապստամբութեան հրավիրելով յեվ վիրավորական կան գործածվեին ուղղելով ճորին կայսերական մեծութեան հասցեին...»։** *)

Ղարսի կազմակերպութիւնը հոկտեմբերյան մանիֆեստի ավետած «իսկական» ազատութեան մասին գրում է. «... Հրեյաներին, հայերին, վրացիներին, լեհերին և ուրիշներին վերաբերվում եր ոչ իբրև քաղաքացիների և «կատարած բոլոր պահված և իրավունք մեռնել գնդակների և «կատարած բոլորութեան» զազանների հարվածների տակ՝ ուղղած հրուշահարների, Մանմեդ-Բեգովների և «ցարի ու հայրենիքի» փառասիրների կողմից։ Այսպես և հասկացվում ազատութեան ծառաների կողմից։ Այսպես և հասկացվում ազատութեան ծառաների կողմից։ «Թող ձեր նը նորին մեծութեան բոլոր սրնակալների կողմից»։ «Թող ձեր հրացանները ուղղվեն ընդդեմ նրանց, որոնք Ձեզ կեղեքում են։ Ազատել Ձեզ կարող եք միայն դուք, Դուք ոչինչ չեք կորցնում, որովհետև ոչինչ չունեք, Դուք ազատ եք!...» **)

*Զորքը այսպես նմանապես «անհանգիստ» եր. «Պահեստի արձակման կենթակա Դերբենդսկի 154-րդ գնդի զինվորները կազմակերպեցին քաղաքում դեմոնստրատիվ շքերթ և պահանջեցին արձակել այն զինվորներին, որոնց ծառայութեան ժամանակը լրացած է՝ սակայն չեն արձակվում զինվորական դրութեան պատճառով»։** ***)

Հեղափոխութիւնը թղթի մանիֆեստով անհնար եր կանգնեցնել. Մասսայական շարժումները ալիքաձև վոստիկանական

---

*) *Վրաստ. Պետ. Արխիվ. ժանդարմերիայի գործերում՝ дело № 4. по архиву № 1 հ. 59-60 „О происшествиях политического характера," 1905 г.*

**) *Հ. Հեղափ. Թանգ. գրք № 25։ „Ко всем гражданам". Воззвание Кавказской группы Р.С.-Д.Р.П. от 26 октября 1905 г.. Քհոպիը, հետագրված վրա տպած։*

***) *Վ. Պ. Արխիվ. д. по описи № 11 ч. II б. հ. 123. 1905 թ.։*

Ծանոթ.— *Ղարսը այդ ժամանակ համարվում եր բանտարկյալների աքսորատեղի։*

Նկատի բռնի առանձին Ս.-Դ.-ից՝ աքսորված հյին (905 թ. աշնան) Բազվի բոլշեվիկական կազմակերպութիւնից մոտ 35 հոգի, ի թիվս վորոնց ընկ. Ս.Ալիլույեվ, Մ. Ռագրան (=Ալյոշա Ջափարիձե), Սեռո Խուդոյան յեվ ուրիշները։ Հոկտեմբերյան մանիֆեստից անմիջապես հետո, նրանք ազատեն արձակվում և մասնակցում տեղում կազմակերպվածդեմոնստրացիային։

Անդրկովկասի բոլոր անկյուններում բանվորական շրջաններում եկին գործադուլներով՝ փոստա-հեռագրական, ապահանական, առևտրա-արդյունաբերական ձեռնարկների բանվորությունը ազատում էր անվերջ Թուրքիան, Իմերեթիան, Մինգրելիան ու Քարթալինիան մեկնել էին Ս.-Դեմ.-ի դեկավարությամբ ապստամբության դրոշակ: Պետք էր շուտափույթ ոգնություն ցուցաբերել վտանգված դյուղացի չքավորությանն, պետք էր պաշտպանել յերկաթուղագիծը՝ եքսպեդիցիան բանակների փոխադրությունը ապահովելու... Մինչդեռ բովանդակ Հայաստանի աշխատավորությունը ձեագել էր անտարբեր, ականատես դերում—իսկ պետական զորքերը յերկաթյա սվիններով հետզհետե ողողում եյին Ռիոնի հովիտը, Ոզուրգետն ու ամբողջ արևմտյան վրաստանը:

Այդ ժամանակ «Հայ գյուղացիներից» ուղղած մի կոչում Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Կովկասյան Միությունը բացատրելով կատարվող իրադարձությունների իմաստը, առաջադրում է հետևյալ պահանջները.—

1. Դատակարգերի համահավասարացումն.
2. Ամեն տեսակի հարկերի վերնչացումն.
3. Բոլոր տուրքերի ու ապառիկների ջնջումն.
4. Աղքատական, յեկեղեցական յեվ
5. Սորկությունից ազատվելու ժամանակ հաշշատված կալվածքները բաժանել գյուղացիների մեջ.
6. Վերադարձնել սորկությունից ազատվելու ժամանակ վճարած բոլոր գումարները.
7. Գյուղական բնտրովի դատավորներ.
8. Ազատել 300 ռ. պակաս յեկամուտ ունեցողին բոլոր տուրքերից.
9. Վերացնել գինովառկությունը.
10. Պարտադիր ուսում.
11. Վերացնել անցագրերի սիստեմը.
12. Պրիստաֆների տեղ՝ գյուղական ինքնավարություններ.

«Յեվ յերբ բոլորի յեվ գյուղի աշխատավորները—շահագործում և կոչը,—մեկը մյուսին ձեռը տված յեղբայրությամբ, կհամերվեն յեվ բնդհանուր ուժով գրան կտան դեպի թագավորի գահը, իմացեք հայ գյուղացիք, վոր այն ժամանակ նրանց վոչ մի բան չի կարող արգելը լինել»: *)

*) „Հայ գյուղացիներին" Ռ.Ս.-Դ.Բ.Կ. Կովկ. Մ. կոչը 19 մարտի 1905 թ. Տես՝ Հայաստանի Ազգային արխիվ:

«Կովկասի բոլոր բանվորներին» ուղղած մի ուրիշ թռուցիկում Կովկասյան Միությունը հայտարարում է, վոր «**ապստամբությունը կազմակերպելը Ս.-Դեմոկրատական կուսակցության գլխավոր պատասխանատվությունն է**», *) և վորին նա ձեռնարկում է՝—բուրժուազիայի սրունքները լիզող ազգայնական գրուպպաների դավաճանության հանդեպ—մեեցակ, հենված հեղափոխական բանվորության ու չքավոր գյուղացիության ուժերին:

Ահա այն լոզունգը, վորի շուրջը կենտրոնանում էր աշխատավորական բանակը:

Հայաստանի Ս.-Դ. կազմակերպությունները չկարողացան ստեղծված օբյեկտիվ պայմաններում իսկապես հաղթահարել հեղափոխության ներքին կենտրոնախույս ուժերը և զսպել այն. սակայն բանվորական շրջանները (յերկաթուղու, Ալավերդու պղնձահանքերի ու գործարանների) այնուամենայնիվ անձնատուր չեղան հարձակողական նացիոնալիզմի տանքների շարունակվող քաղաքական ավանտյուրային.ավելին. նրանք կռվեցին Կովկասի մարտնչող պրոլետարիատի հետ մի ընդհանուր ճակատ, վորով և գնեցին Հայաստանի բանվորության դասակարգային պիտակից պայքարի ուղին...

Այլ կերպ էլ չէր կարող լինել:

*) „Կովկասի բոլոր բանվորներին" Ռ.Ս.-Դ.Բ. Կով. Մ. կոչը 26 մարտի 905 թ. Տես՝ Հայաստանի Ազգային արխիվ:

Գլ. VI

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԲԱՆՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԸ

Հոկտեմբերին բոլանդակ Ռուսաստանի արդյունաբերական բանվորությունը հեղափոխական ցույցեր էր կատարում։ Յերկրի հասարակական կյանքը նրա կողմն էր։ Վերջին և ուժեղ հարվածը հյուսիսային ժանդարմին «հանկարծակի» հասցրեց յերկրի ամեն ուղղությամբ ձգվող յերկաթուղային բանվորության հակա բանակը։ Այդ գործադուլը աղղանշան էր նոր և վճռական պայքարի։

*Ի՞նչ բնույթ էր կրում այդ գործադուլը։ *) «հասարակ քաղաքական դեմոնստրացիա էր, թե՞ խաղաղ գործադուլ, վորը «քաղցով» պիտի ստիպեր պետությանը անձնատուր լինել և շնորհել համաժողովրդական ներկայացուցչություն, թե՞ դա միայն «ուժերի պլոր» էր ապագայի ավելի վճռական գործողություններին, և կամ, վերջապես, առաջին քայլ, վորի զարգացման պրոցեսում նախատեսնվում էր և ապստամբություն». իլյուզիաներով չպետք էր տարվել։ «վորպես քաղաքական իրավունքներ ձեռք բերելու **անմիջական** գործիք՝ քաղաքական գործադուլի կարելի և ձեռնարկել այն հույսով, յեթե նա փոխվեր ապստամբության. վորպես հասարակ քաղաքական դեմոնստրացիա, նա զրկական հետևանք կունենա այն չափով, վոր չափով հնարավոր դառնա մեզ ոգտագործել նրա ստեղծած՝ թշնամու շարքերի դեզորգանիզացիայից և ժողովրդական ուժերի մոբիլիզացիայից—պատրաստվելու ապագա ավելի վճռական ժողովրդական շարժումներին։ Դա նշանակում է՝ կամ գործադուլը ծավալվելով ու բարդանալով անցնելու և մասնավոր ապստամբություններին,—այն ժամանակ հեղափոխականների նպատակը պետք է լինի համախմբել այդ մի ընդհանուր համառուսական ապստամբության,—կամ թե, վոր*

*) Ս*յստեղ և հետագայում* стачка *բառը թարգմանել ենք գործադուլ հասկացողությամբ։*

*այս դեպքում ամենից հավանականն է, գործադուլը պահպանելով հակայական դեմոնստրացիայի բնույթ՝ դադարելու է՝ վորպեսզի տեղ տա հետագա նախագծված հարձակումների պատրաստության, վորը հենվելու է գործադուլի ստեղծած ուժերի (որգանների) վրա»։ *) Այսպես էր գնահատում և նախատեսնում յերկաթուղու ընդհանուր գործադուլի ընթացքը՝ «Искра»-ի խմբագրությունը։*

Յերկաթուղագծի Համառուսական Միությունը հայտարարում է գործադուլ։ Անպրկովկասյան դիծը տարերային թափով միանում է ուռճացող շարժման։ **Անդրկովկասի յերկաթուղային ծառայողների** *(անկուսակցական)* **Միության Բյուրո** *մի խոր-թափով կոչով դիմում է բանվորության.—*

«Ընկերներ. լցվեց համբերության բաժակը։ Յերկաթուղու ծառայողների Համառուսական միությունը համոզված, վոր բյուրոկրատիայի հետ խոսելուց վոչ մի հետևվանքի չես հանգի, հայտարարեց ընդհանուր գործադուլ։ Յերկաթուղային աշխատավորների բազմաթիվ բանակը յերկար ժամանակ պոլիցիական-բյուրոկրատական ուժիմի ծանր լծի տակ բզկտված՝ ուրախությամբ ձայնակցեց այդ կոչին, գիտակցելով վերջապես, վոր միայն յեռանդուն պայքարի ճանապարհով նա կարող է հասնել մարդավայել պայմանների իրագործման։ Գործադուլին մինչեվ այսոր միացել է 21 ճանապարհ. բորբոքվում են բողոքի կայծերը յեվ ընդգրկում ավելի թվով նոր ուղիներ ու կամացկամաց մոտենում մեզ։ Համառուսական Միությունը հեռագրով խնդրում է գործադուլավոր ընկերների կողմն անցնելու։

Ընկերներ. ձայնակցենք այդ կոչին, պաշտպանենք մեր յեղբայրներին յեվ բոլոր յերկաթուղային ծառայողների ներկայացրած պահանջները. գիտակցենք վերջապես, վոր թեվակոխում և հսկա նշանակություն ունեցող մի մոմենտ. պատմական մոմենտ, մեր վտանգարված իրավունքների ակտիվ պայքարի ժամը, յեվ յեթե մենք այդքանող անենք այս մոմենտը, ապա ուրեմն յերկար ժամանակ չենք ստանա վոչ միայն քաղաքական ազատություն, այլ յեվ գոյության բիչ թե շատ տանելի պայմաններ։ Թող յուրաքանչյուրը ձեզնից լցվի այն գի-

*) Հ. *Կուսպատի Աքթիվ*.— Циркулярное письмо редакции «Искры», *1903 թ. յերկաթուղու գործադուլի սկսվելուն պես «Искра»-ի խմբագրությունը զբաղում է շրջանային կենտրոններին, սրանց թվում և Կովկասյան Միության,* «наметив только некоторые соображения». *Այս արժեքավոր դոկումենտը նախագծում է սոցիալդեմոկրատական այն բոլոր հնարավորությունները՝ վոր կարող էր հանդես գալ հեղափոխության ընթացքում։*

տակցութ յամբ, վոր այժմ ինչ եղ վոր լինի մենք պետք և գործադուլ անենք։ Մեր պետերի – ժանդարմների սպառնալիքները, նրանց վախեցնելը թե իբր ծառայողներից պահեստի զինվորացուներին կվերցնեն իսկական ծառայության չեվ նման հիմարութ յուններ—շինծու հնարքներ են, նման հիմար դայակի՝ իր սանիկին վախեցնելու բարբաջանքների, սանիկի, վոր արդեն մեծացել և մանկական հասակից չեվ այլևս նրա «բաջքերից» չի վախենում. չեվ իսկապես, չի՞ վոր անհնարին և մի բանի հարյուր հազար մարդկանց զինվոր վերցնել...

Աչապես ուրմն, մենք գործադուլ ենք անում: Այսոր մենք կաշխատենք սովորականի պես, իսկ վաղը մեզնից վոչ վոք աշխատանքի չպիտի գա մինչեվ հոկտեմբերի 20-ը։ Ձերի վորեվե մեկը կառավարիչների արբանյակից մեզ չի միացավ չեվ կներկայացա գործատերը—ապա թող հայտնի լինի մեր ընդհանուր սուրբ գործի այդ զգվելի մատնիչներին չեվ դավաճաններին, վոր այսորվանից ետանք մեր վոխերիմ բռնամիներն ենք չեվ թող ընկերների անեծքը ետանց արժանի լինի՝ այդ հուդա–մատնիչներին...

Հառաջ ընկերներ, համարձակ, համերաշխ, հառաջ, պարզենք միմյանց հատատ մեր ձեռքը չեվ համարձակ, անվախ դիմենք պայքարի ընդդեմ կամայականութ յան։ Մոռ և չերկարատև ստրկութ յունից մեր ազատութ յան ժամը, մոռ և ժամը, չերբ չերկաթուղային բազմամիլիոն աշխատավորները կհանգըստանան կամայականութ յուններից, ճնշումներից չեվ բռնաբարութ յուններից...

Հառաջ ընկերներ, միութ յան մեջ և ուժը։

*Անդրկովկասի չերկաթուղային ծառայողների Միութ յան Բյուրո։ *)*

14 հոկտեմբերի 1905 թ.»

Դադարեցին գծի աշխատանքները, սահմանափակվեց չերթեվեկութ յունը։ Շնորհիվ Ս.-Դ. չեռանդուն ջանքերի չերկաթուղու տեղական կազմակերպութ յունները (Ս.-Դ.) իրենց վրա չեն առնում գործադուլի կազմակերպման ու ղեկավարման ծանրութ յունը։

Հնդրյա այս «ուժերի պլորը» հանդիսացավ Սոցիալ-Դեմոկրատիայի համար այն «առաջին քայլը, վորի զարգացման պրոցեսում նախատեսվում եր և ապատամբութ յուն»։ Նա ամրապնդեց ղեկ ղեկավար որգաններ քաղաքական տաքտիկան և հետագա վարքագիծը։

Հոկտեմբերյան դեպքերի ընթացքում Կովկասյան Միութ յան կից կազմակերպված «գործադուլային կոմիտեն» *) իր վրա առանձնաց թե հեղափոխութ յան և թե քաղաքական կյանքի ղեկավարութ յունը։

Սակայն ցարիզմը դյուրութ յամբ չդիջնց իր դիրքը. չերկաթուղային աշխատավորութ յան այս գործադուլը թեև խոշոր մի հարված եր, վոր նախատեսում եր ինքնակալութ յան հիմքերի քայքայումը, սակայն բավանդակապես իր բարձունքին չհասավ։

Առանձին շրջաններում ու գծերում ճնշվեց այն, վորպեսզի կրկին ու վճռական թափով վերակավեր։ Իշխանութ յունը իր ուժերը կենտրոնացրեց առանձնապես այս գործադուլը ճնշելու շուրջը։ Նրա պաշտոնական հաղորդագրութ յունը ձևակերպում եր ժանդարմերիայի բռնի վոտնձգութ յունները. «ի նկատի ունենալով այն, վոր վերջերս ծայրահեղ հեղափոխական կազմակերպութ յունները դիմել են ակտիվ գործողութ յունների, վորը արտահայտվում է չերկաթուղագծի բռնի տիրանալուն՝ գործադուլ հայտարարելով և Թիֆլիսի առևտրա-արդյունաբերական ձեռնարկութ յունների փակման, փոստա-հեռագրատան գործողութ յունների արգելման և այ-

---

*) Գործադուլային կոմիտեն, վորը փաստորեն ղեկավարեց 905-6 թ հեղափոխութ յունը բավանդակ Անդրկովկասում, բաղկացած եր Ս.-Դ.-ի չերկու ֆրակցիաների (մենշևիկ և բոլշևիկ) գերակշռող անդամներից՝ թվով 26.

1)	Ռամիշվիլի Իո.	14)	Դոմբրովսկի Վալերիան „
2)	Ժորդանիա Ն.	15)	Գոլիձե Սոլոմոն, մաշինիստ
3)	Ռամիշվիլի Ն.	16)	Բուռնատրի Վասիլի „
4)	Ջափարիձե Արչիլ	17)	Գալստյան Հակոբ „
5)	Ջիբլաձե Սիլվեստր	18)	Մատաշվիլի Ստեփան „
6)	Կորաթ (կեղծանուն)	19)	Սեմյոնով Ալեքսեյ „
7)	Ելիավա Ն.	20)	Կորիձե Սոլոմոն „
8)	Մախարաձե Փ.	21)	Գոլիձե Կալիստրատ „
9)	Վարտջյան Գ.	22)	Վոդոչկորիա Սոլոմոն, տպագրական բանվոր
10)	Վացաձե Եվգենիա		
11)	Դավիդովսկի Նիկոլայ, չերկաթ. ծառայող	23)	Ուրուշաձե Վասիլի „ „
		24)	Վոդոչկորիա Ուխտին „ „
12)	Դոբրովոլսկի Վլադիմիր „	25)	Ջոլիձե Դավիթ „ „
13)	Սամոյլով Ալեքսանդր „	26)	Տարատաձե Երիստո „ „

Այս ցանկը յուրաքանչյուրի առանձին բնութագրով կազմել և իր ժամանակին Թիֆլիսի охранка-ն՝ Տ. Վր. Գ. Արխ. Дело по описи №63 ч. II, 1905

*) Բոլոր ընդգծումները բնագրինն են։ Իսկականը Տես – Հայաստանի Կուսպատի Արխիվ։

լըն... հայտարարում եմ Անդրկովկասի յերկաթուղագիծը զինվորական դրության մեջ»։ *)

Ի՞նչպես ընթացան այդ գործադուլները մասնավորապես Հայաստանում։

Հայաստանի յերկաթուղագիծը հոկտեմբերի 15-ից «անցնում է Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Կուսակցության Գործադիը (?) Կոմիտեի ձեռքը, որը վերցրել է իր իշխանության տակ Անդրկովկասյան Յերկաթուղու Ալեքսանդրոպոլ-Դարա-Յերեվան ուչաստոկը»՝ արձանագրում է Ալեքսանդրոպոլի ժանդարմերիայի պետը։ Ալեքսանդրոպոլը հանդիսանում էր դեպի Դարա, Յերեվան-Ջուլֆա գծերի քաղաքական կենտրոնը, այս հաշվով նրա դիրքը՝ խոշոր արժեք էր ստանում։

Հոկտեմբերի 16-ի առավոտյան տարածվում է տարագրության յերկաթուղու բանվորության քաղաքական պահանջներին նվիրված Ալեքսանդրոպոլի կազմակերպության թռուցիկը, որ մեծ վոգևորության տակի է հանդիսանում։

«Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Ընկերներ.

Մենք դեպոյի յեվ Ալեքսանդրոպոլ կայարանի ծառայողներս միանալով ռուսական յերկաթուղիների ընդհանուր գործադուլին, հայտարարում ենք, որ մենք ընդունել ենք բոլոր գործադուլավորների ընդհանուր վորոշումը՝ գործի չանցնել մինչեվ չբավարարեն ներքո հիշյալ մեր այն պահանջները, վորոնք գրավական են հանդիսանում Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովրդների բարեկեցության.

Դրանք են. **)

1) Հրավիրել հիմնադիր ժողով, ընտրված ընդհանուր, հավասար, գաղտնի յեվ ուղղակի ձայնատվությամբ։ Այդ ժողովը անհրաժեշտ է ամբողջ ժողովրդին նրա համար, վորպեսզի բոլոր որենքները համապատասխանեն ժողովրդի իրական պետերին, վորպեսզի որենքները կազմեն վոչ միայն ազնվականները յեվ ֆաբրիկանտները, այլ յեվ ամբողջ ժողովուրդը։

2) Ընտրողական իրավունք հատկացնել 20 տարեկան յերկսեռ բոլոր հպատակներին։

*) Վր. Գ. Աբխ. դело №5 էջ 23-24 1905 թ.

**) Այս վորոշումները առաջադրված էին Համառուսական Միության (յերկաթուղու բանվորների) կողմից վոր միաժամանակ վողջ հեղափոխական պրոլետարիատի պահանջներն էր։

3) Ազատել բաղաքական յեվ կրոնական համոզմունքների համար բոլոր տուժողներին, քանի վոր այդ մարդիկ ներքին թշնամիներ չեն—այլ ժողովրդի իսկական բարեկամներ։

4) Հավասարություն որենքի հանդեպ առանց ազգությունների յեվ դասերի խտրության, այսինքն, վորպեսզի բոլորը՝ նայեվ պետական ծառայության մեջ գտնվողները դատվեն միեվնույն յերդվյալների դատարանով։

5) Խոսքի, մամուլի, ժողովների, միությունների յեվ հավատի ազատություն։

6) Մահվան պատժի վերացումն։

7) Վերացնել մշտական յեվ կանոնավոր զորքը յեվ փոխարինել ժողովրդական միլիցիայով՝ առանց դասի խտրության, վորպեսզի չկերակրել յերկու միլիոնանոց պարապ մարդկանց բանակ, վորն ավելորդ բեռ է ժողովրդի համար. իսկ հարկ յեղած դեպքում՝ ուստր պետությանց հարձակման պարագայում կպաշտպանի ամբողջ ժողովուրդը։

8) Վոտիկանության հանձնել բաղաքների իրավասության, այսինքն՝ վորպեսզի բաղաքների միջոցով պահպանվող վոտիկանությունը բոլոր բաներում յենթարկվի բաղաքի ինքնավարության։

9) Ամբողջ ազգաբնակության պարտադիր ուսում պետության հաշվով։

10) Կանանց յեվ յերեխաների աշխատանքի վերացումն։

11) Վերացնել ամբողջ Ռուսաստանում զինվորական դրությունը, ուժեղացրած պահակները յեվ նկզնկուցչները։

12) Վերացնել անցագրերի սիստեմը։

13) Ութ ժամյա բանվորական որ,իսկ մեքենավարների, կոնդուկտորների յեվ սրանց նման ծառայողների համար հաստատել շաբաթվա ընթացքում բանվորական ժամերի մաքսիմումը։

14) Հաստատել խիստ վորոշակի ռոճիկ յեվ վոչնչացնել բոլոր այլ տեսակի վարձատրությունները։

15) Վերացնել յերկոյան աշխատանքները (այն հաշվով, վոր ամսական աշխատավարձը չնվազի) յեվ բարձրացնել որավարձը։

16) Մտահոգվել ապահովելու բոլոր ծառայողներին անդամալուծության յեվ ծերության դեպքերում։

17) Բոլոր ծառայողների համար հաստատված աշխատավարձը չպետք է փոփոխվի պետերի կամայականությամբ, այլ միայն ծառայողների կոմից ընտրվածների մասնակցությամբ։

18) Բավարարել բոլոր այն պահանջները, որոնք ներկայացված են ծառայողների կողմից անցյալ գործադուլների ընթացքում։

*Ռուս. Սոց.-Դեմ. Բ. Կ. Ալեքսանդրոպոլի կազմակերպության»։ *)*

16 հոկտեմբերի 1905 թ.

Ալեքսանդրոպոլում դեպքերը ընթանում են լարվածությամբ։ Առաջին իսկ օրից կազմակերպված «Գործադուլային կոմիտեն» **) ցույց է տալիս, որ չի թուլ տա մութ ուժերին պահպանել բանվորության շարքերում։ Հրավիրված միտինգում լրջությամբ խոսում են հեղափոխության պերսպեկտիվների, «ընդհանուր ֆրոնտի», վաղվա անելիքների մասին։ Դեպոյի բանվորներից՝ վականակագործ **Աբրոսիմով**ը վերջացնում է իր ճառը «կորչեն բռնակալությունը, ժանդարմերիան, կառավարությունը». մեկ ուրիշը՝ «գործադուլը շարունակել մինչև վերջին կատարյալ հաղթանակ» և այսպես անվերջ։

Գործադուլը շարունակում է իր դիրքն առնել նաև քաղաքի աշխատավորության։ Հաճախակի կրկնվող միտինգները ու demonstrացիաները վերջանում են վոստիկանության պասիվ դիմադրությամբ. տարածվում են բազմաթիվ թռուցիկներ, ***) գաղտնի գրականություն։

Ցարի մանիֆեստի առթիվ վոստիկանության կազմակերպած demonխային demonstrացիան վերջանում է բանվորական ծեծով, սպանություններով և սպառնալիքով «վերկաթուղու գործադուլավոր բանվորության դեմ»։ Զորքի միջամտությունը և ընդհանրա-

*) Տ. Հ. Հեղափոխ. Թանգարան. Գործ. № 25.

**) Գործադուլային կոմիտեն բաղկացած էր հետևյալ ընկերներից.
1. Պլեմկին Գեորգի—դեպոյի տարեկրչիկ.
2. Տոպուրիձե Վիկտոր—14-րդ ուշատոկի վարպետ.
3. Աբրոսիմով Վասիլի—դեպոյի վականակագործ.
4. Բրանդիշվիլի » » ոգնական.
5. Բրեգիձե Դավիթ-կայարանի հետագրի աշակերտ.

Առաջին 4-ը «անդամ են Ս.-Դ. Բ. կուսակցության Գործադիր կոմիտեին, որը վերցրել և իր իշխանության տակ... վերկաթուղու Ալեքսանդրոպոլ-Ղարս-Ձերվան ուշատոկը՝ գրում է ժանդարմերիայի պետը, իսկ Բրեգիձեն «մեկն է ամենագլխավոր ագիտատորներից, որը կազմակերպել և այդ գործադուլը»։ Սրանց բնութագրում ժանդարմերիայի պետը միաժամանակ հիշատակում է գործադուլի ընթացքի մասին, որից և քաղվածքներ ենք անում։ Սրանք բոլորը ձերբակալվում են դեկտեմբերի 24—28 ին՝ առաջին հերթին։ Տես — Վր. Պ. Արխ. Дело № 28 ч. I, лл 94, 187,206, 1905 - 6 թ. թ.

***) Տես—վերջում՝ մատենագրություն։

պես «ռուս» մարդկանց յեռանդուն ջանքերը թեքվում են մի ուղղությամբ՝ մեկուսացնել վորքան հնարավոր և յերկաթուղու գործադուլավոր բանվորության և քաղաքի աշխատավորության իր հերթին գրգռել ընդդեմ «հայրենիքի դավաճանների», վորոնք ուզում են «քաղցից» սովամահ անել ժողովրդին։

Յեվե իշխանության նման փորձերը համեմատաբար հազ են գտնում Թիֆլիսում չնորհիվ պրովակատոր-խուլիգան **Գոլովաչեվսկու** «հայրենասերների» կուսակցության (sic!), մինչդեռ այդ մեթոդը Ալեքսանդրոպոլում տխուր հետևանքներ և տալիս նրա նախաձեռնողներին։

Այսպես մի քանի օրվա ընթացքում (20-25 X.) «զինված քաղաքացիներից և բանվորներից»՝ փոստատան охранка-ի լրտեսներից ու չինովնիկներից—կազմակերպվում և «հայրենասիրական կուսակցություն». հենց այդպես էլ նա կոչվում է՝ **Ալեքսանդրոպոլի հայրենասիրական կուսակցություն** (Александропольская Патриотическая партия)։ Այս «կուսակցությունը» հանդես էր գալիս պաշտպանելու «թագավորի գահը», «Սուրբ Ռուսիան»... և ամենից առաջ գրավելու գործադուլավորների տեղերը, ստիպելու բանվորության լքել գործադուլը, վերսկսել մեխանիկական բաժանմունքների, դեպոյի, փոստ-հեռագրատան դադարած աշխատանքները...

«Գայթակղած ռուս և հայրենիքին հավատարիմ» բանվորներին «խելքի» բերելու և աշխատանքները վերսկսելու նպատակով, այդ «կուսակցությունը» հոկտեմբերի 28-ին հոգևորականության գլխավորությամբ, խաչով, խաչվառով, թագավորի և կայսերական տան անդամների նկարներով կազմակերպում է թափոր դեպի կայարան։

Մի խումբ բանվորների գլուխ անցած ընկ. Դ. Բրեգիձեն դարան է մտնում դեպի քաղաք ձգվող խանութներում. «Թափորը»՝ շրջապատված «ժողովրդով և ռուս բանվորներով (իմա՝ ժանդարմների և չինովնիկների շղթայով՝ Մ.)» մոտենում է Բեհրության փողոցի վերջին, յերբ Բրեգիձեն դուրս գալով թագստոցից մի ակնթարթում բարձրացնում է հատարակ փայտի վրա ամրացրած կարմիր դրոշակը և ճառ արտասանում»... *) Սկսվում է չտեսնված իրարանցում. հոգևոր հայրերը և մարմնավոր տերերը անհայտանում են՝ թափորը փոխվում է բանվորական միտինգի, «լսվում են հեղափոխական յերգեր»... **)

*) Jbid. (մեկնուն послужной список-ից)։

**) Այս դեպքը դեռևս հիշում են Ալեքսանդրոպոլի հին բանվորները։

Ալեքսանդրոպոլի «պատրիոտների» գործունեությունը չի սահմանափակվում այդ թռուցիկով. մամուռ են հերթական մի նոր պրովոկացիա՝ մասսայական ձերբակալությունների միջոցով հեռացնել աչքի ընկնող բանվորներին և թաղել գործադուլը։

«Պատրիոտների կուսակցությունը» դեկտեմբերի 19-ին կազմում է «հանցավոր ու հայրենիքի դավաճան» յերկաթուղային 28 բանվորների ցանկը *) և ներկայացնում է կայազորի պետ, 8-րդ կարաբղինակի գնդի հրամանատար՝ ու հարյուրակային գնդապետ Լևվիցկուն հետևյալ դրությամբ։

«Ստորագրած խնդրում ենք Ձերդ բարձրապատվության վորպես պաշտպան մեզ, մեր գահին, պետության և Սուրբ Ռուսիայի,—ոգնեցեք և ազատեցեք մեզ, մեր գահը, թագավորին ,վորովհետև նրանք (իմա՝ բանվորները՝ Մ.) հերքում են գահը, վոտնահարում և ասում են՝ «կեցցե մեր վրացական թագավոր Իրակլի 2-րդը». նախապես թախանձագին խնդրում ենք չհավատալ նրանց սրդարանալուն, այլ մաքրել նրանց յերկրի յերեսից, վորպեսզի այլևս չծաղրեն մեր գահը և ռուս ժողովրդին։

Ալեքսանդրոպոլ քաղաքի հայրենասիրական կուսակցություն»։ **)

Այս շինծու պրովոկացիան բավական եր, վորպեսզի պարոն Լևվիցկին իր հերթին ավելացներ՝ «այդ անձինք վորոշել են սպանել ինձ, վորպես իբրև բոլոր ծրագրերի քայքայման մեղավորի։ Յերկաթուղու բոլոր ռուս ծառայողները չեն կարողա-

*) Գրանք էին.—

1. Բևբեզովսկի
2. Ոշերով Ա.
3. Եվանիձե Ս.
4. Վաղամով Դ.
5. » Վ.
6. Վիշնյակով Գ.
7. » Պ.
8. Բևբելուրի Ա.
9. Գիրգեժվիլի Ս.
10. Բրանդեյվիլի Վ.
11. Ջումբախձե
12. Մանդակալաձե
13. Ռուխաձե
14. Կատրիկաձե
15. Գրիբենբերգ
16. Մաքսարաշվիլի
17. » (մեխանիկ)
18. Պրոխորով Գ.
19. » Ի.
20. Աբրոսիմով Վ.
21. Գիրշին Ա.
22. Շարլիմանով
23. Պուրով Ի.
24. Պորշկով
25. Ժուրուլի
26. Պատրգեձիձե
27. Մելկուրյան
28. Կոխրեիդզե (Սանահինից)

Տես— Վր. Ա. ժանդար. վարչ. գործերը՝ дело № 28 ч. I, лл 102-104, 1906 թ.

**) Jbid.—Ընագիրը կազմված և անգլերեն. թարգմանությամբ (ձեռագիրը՝

նում աշխատել այդ մարդկանց սպառնալիքի պատճառով և խնդրում են ամբողջ Թիֆլիս-Ղարս գիծը, վորպես ստրատեգիական տեսակետից կարևոր՝ կամ ոգտագործվի միայն ռուս բանվորներով և կամ սրանց տեղափոխել Ռուսաստան, վորովհետև հետագայում էլ նրանց կյանքին սպառնալու և վոտնդ՝ յեթե այդ գծի բանվորության շարքերում թողնվի անգամ մի ոտար բանվոր «туземец»։ *)

Այդ միևնույն Լևվիցկին ձգտում եր թունավորել զորքի և գործադուլավոր բանվորության փոխհարաբերությունները։ Այդ առթիվ Ալեքսանդրոպոլի գինվորական Սոց.-Դեմ. կազմակերպությունը իր մի թռուցիկում գրում է.—«Գնդապետ Լևվիցկին, փոխգնդապետ Սկովը, կապիտան Պաուլին և կորնետներին հանձնարարում են գինվորներին ձեծել նրանց, ովքեր կհամարձակվեն բացատրել գինվորներին թե պետք է և անհրաժեշտ է լավ ապրել։ Այդ նպատակով նրանք չեն խորշում գիմելու ամեն տեսակի կեղտոտ և պիղծ միջոցների, վորպես բամբասանք՝ լուր տարածելով, վոր իբր թե յերկաթուղագծի բանվորությունը ուզում է հարձակվել բեռդի վրա, ծեծել գինվորներից... և ամենատանջատակ ձևով գրգռում են ազգը-ազգի դեմ»... **)

Սակայն Լևվիցկու և կոմպանիայի նման պրովոկացիոն տեղեկությունները անհնարին են թվում և անհետևանք են թողնվում անգամ Կովկասյան բանվորության յերգվյալ գահիճ գնդապետ-մայոր Փ. Դրյագինովի ***) կողմից։

Դեկտեմբերի 21-ին յերկաթուղու գինվորական վարչությունը փորձում է «ռազվեդկա» կատարել դեպի Սանահին-Ալեքսանդրոպոլ՝ ծանոթանալու հեղափոխության ուժերի և քաղաքական դրության հետ։ Այդ գնացքը հազիվ հասնում է մինչև Սանահին. ծպտյալ ագենտ-ռեվիզորը զեկուցում է, վոր «յերթեվեկության վերսկսել հնարավոր կլինի, յեթե մեջտեղից վերացնել ապիտատորների ու տերրորիստների(? Մ.) բները, վո-

*) Jbid.—Ընթերցողը ուշադրության պետք դարձնի՝ թե ինչպես վերևում «ռուս» բանվորները (28-ից 13-ը ռուս են) դեմ են իրենց «գահին» և ուզում են (!!)«վրաց թագավոր», իսկ ատաեղ խնդրվում և ոգտագործել գիծը վորպես «գահին և թագավորին» հավատարիմ ռուս բանվորներով... Վերջեղ և թագնված շան գլուխը։

**) Հ. Հ. Թանգ Գործ. №25. «Солдаты всех видов оружия, соединяйтесь!» Воззвание Алек. Соц.-Дем. Орг. военных, от 20 дек. 1905 г.

***) Գնդապետ Գրյագինովը գնդակահարվեց Թիֆլիսում 1906 թ. հունվարի 16-ին բանվորների ձեռքով։

րոնք գտնվում են ոչ միայն մատակարարողական Սանահին*) կայարանում, այլ և միջանկյալ մի քանի պունկտերում»։ **)

Կենտրոնական իշխանությունը պատրաստվում էր վճռական գրոհով արյունաների անել հեղափոխության հաղթանակը։ Ժանդարմերիայի շեֆը՝ գնդապետ Շերբինկինը կարուկ միջոցների էր դիմել. «միջոցներ են ձեռք առնված գործադուլային բյուրոների և նրանց դեկավարների դեմ... Հեղափոխական պրոպագանդը լիկվիդացիայի կենթարկվեն այս քանի որս», հայտնում էր ծածկագրով ներքին գործերի նախարար Տրեպովին։ ***) Սև նազայական կրկին շարժվում էր. ժանդարմերիան ականատեսի դերից հարձակողականի է անցնում. նրա և նկղեկուցիան մասերի կազմակերպության չափը անցնում էր. գնդակահարվում են «կասկածելի» հավաքույթները, բանտերն են լցվում հազարավոր բանվորներ ու գյուղացիք. հետին «ոհոլոդոչնի նազդիրատել»-ը ու սարաժնիկը խուզարկում, թալանում՝ կամ առանց քննության բանտ էին ուղեկցում «կասկածելի» գոհին։

Դեկտեմբերի 23-ին Անդրկովկասի երկաթուղագիծը ամբողջովին անցնում է (բացի Բաթումիի ուչաստոկից) զինվորական վարչության իրավասության տակ։ Հարբած ժանդարմերիան ու կոզակների 100-ականները կատարում են «եքսկուրսիաներ» ամեն ուղղությամբ. կայարաններում՝ ձեռ, հայհոյանք, ահեղանգում, սպանություններ - մասնություններ՝ ամենուրեք զրվանք ու հառաչանք, արատասուք ու զայրույթ...

30 հազարի չափ Անդրկովկասյան երկաթուղագծի բանվորությունը կենթարկվում է բանության և բանտ ու աքսորի։ Դեկտեմբերի 23-24-ին ձերբակալվում են գործադուլը դեկավարող «քաղաքական հանցավորները», որոնց թիվը՝ դեռ չիվ ներառյալ — արատահայտվում էր՝

Թիֆլիսի	բանտերում	224 հոգի
Գանձակի	»	44 »
Երևանի	»	47 »
Ալեքսանդրոպոլի	»	35 »

*) Սանահին կայարանում կար ուժեղ Ս.—Դ. կազմակերպություն, որը կապված էր թե շրջակա գյուղական բջիջների հետ և թե Ալլահվերդու կազմակերպության և գործադուլային կոմիտեի հետ (այդ մասին խոսք կլինի հետագայում։ Այսուհետ աշխատում էին **Նալբա Ռժանիկիձե և ուսանող-մեխանիկ Փգենդի**.

**) Jbid. „Памятная записка о военном управлении Закавказской жел. дороги, от 16—го до 23—го декабря 1905 г.

***) վ. գ. ա. Дело № 11 ч. II լ 220, 1905 թ. (Шифрованная телеграмма Департаменту Полиции)

իսկ ձերբակալված շարքային՝ գործադուլին ակտիվ մասնակցող բանվորների թիվը՝ 1041 հոգի։ Այնուհետև մինչև հունվարի սկզբները Հայաստանում կրկին ձերբակալվում և տեղավորվում են՝

Երևանի բանտում	221 հոգի
» Նահանգի բանտերում	288 »

Հետապնդում են յերկաթուղու աշխատանքներից հետ չընդունվելու իրավունքով 318 բանվոր, իսկ Անդրկովկասի առանձնություններից արտաքսվում են մոտ 300։*) Սրանք են նախնական ավյալները, իսկ թե այնուհետև վիրչական լրացվեց այդ ցուցակը և կամ ընդհանրապես վիրքան մարդ ձերբակալվեց պետք է մեզ հնարավոր չեղավ վերականգնել։ Անկասկած և, որ ձերբակալվածների թիվը դրանով չեր սահմանափակվում, նամանավանդ, որ զինվորական վարչությունը շուտով ձեռնարկում և բանվորության շարքերը մաքրելու «անբարեհույս» տարրերից։ Այն բանվորը, որ նշանակած ժամին չեր ներկայանա գործատեղ՝ համարվում էր ընդմիշտ արձակված և պարտավորվում էր անմիջապես հեռանալ։ Քիչ չեր այն հեղափոխական բանվորների թիվը, որոնք մերժեցին յենթարկվել այդ պրոպոնական կարգերին և չստորագրելով «պարտավորաթուղթի» տակ,**) իրապես դուրս մնացին։

Այսպիսով բանտերը լցվեց ամբողջ գծի բանվորության մոտ 15 տոկոսը, սրանց թվում և գործադուլի դեկավար օրգանները in corpore՝ Սոցիալ-Դեմոկրատիայի կարող ուժերը։

1906 թ. հունվարի սկզբներին վերսկսվեց յերկաթուղու աշխատանքները։

Ճնշված էր և նվաճված հեղափոխության կարևոր դիրքերը։ Սակայն չեր ընկճված բանվոր դասակարգի կամքը, պարզվել էր նրա քաղաքական մատնորիզոնը, մարզվել նրա պայքարի անհրաժեշտության ու անխուսափելիության գիտակցությունը։

Սկսեց նա իր պայքարը դեմոնստրացիայով, գրավեց մի շարք նվաճումներ, անցավ բացորոշ ապստամբության և... միայն

*) Թվերը հավաքել ենք՝ 1) վ. գ. ա. Дело № 28 ч. I и III լլ 36—145, և 2) „Кавказ“ պաշտոնաթերթի 1906 թվի I—II ամսվա № № —ներից։

**) Ահա այդ թղթի՝ «անկեսայի» բովանդակությունը .— «Ես... պարտավորում եմ՝ աշխատել օրական 9 ժամ, չմասնակցել գործադուլին, չշահատել միությունների մեջ, կոմիտեներում, անդամագրվել ժողովներում և խոսիվ կատարել յերկաթուղագծի վարչության ամեն և այսուհետև տրվելիք հրամանները, կանոնները և կարգադրություններ... որ յես ստորագրում եմ...“ Jbid.

նահանջից բնակալության վիճվորական ուժերի հարվածների տակ։)

*) 1906 թ. հունիսի սկզբներին Անդրկովկասի յերկաթուղու գլխավոր արհեստանոցների և քիչ հետո գնդային բանվորության կողմից ներկայացվեց 15 կետերից բաղկացած տնտեսական պահանջներ և հայտարարվեց գործադուլ։ Սա մի սկզբնալ եր, վորպեսզի մի քանի շրջաններում կրկին վտաքի կանգներ յերկաթուղու հաղարավոր աշխատավորությունը, սակայն այդ դեպքերի վրա մենք կանգ չենք առնում, վորովհետև նրանց արձագանքը չհասավ Հայաստանի գծին, ուր դեռ յերկու ամիս քանի շրջաններում բանվորությունը հեղափոխական ճանապարհներով աշխատանքի ժամերը հասցրել եր նորմալ վիճակի», իսկ մյուս մասերում նրան «ստիպում եյին աշխատել որական 12 ժամ» («Նոր խոսք», 15 սեպտեմբերի 1906 թ.)։

Գլ. VII

ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԸ

*1755 թ. Ախտալա անդավոխված Գյումրիլխանակի արծաթարճիճային գործարաններին հուն լեռնարդյունաբերող բանվորները հայտնագործելով Ալահվերդու ռայոնի հարուստ պղնձահանքերը, իրենց ուժերով՝ հնադարյան մեթոդներով կառուցում են «շախտեր» և արտահանության համար պատրաստում տարեկան մի քանի հարյուր փութ պղինձ։ Չնայած նրանց կրքոտ յեռանդի՝ բացակայում եր համերաշխ գործակցություն և խոշոր կապիտալ, վորը անդրադառնում եր թե արդյունաբերության դանդաղ զարգացման վրա և թե, նամանավանդ, չդիմանալով Գետաբեկի պղնձի մրցության --հետդհետե սահմանափակվում եր նրա արտադրությունը։ Այս պայմաններում նա իր խղճուկ գոյությունը քարշ տվեց մինչև ֆրանսիական կոմպանիայի կազմակերպվելը (1887 թ.)։ *) Միևնույն, թերևս ավելի վատթար դրության մեջ եր նաև Ղաֆարի պղնձահանքային շրջանը, վոր ընկած եր Զանգեզուրի հետամնաց անկյունում՝ կտրված անանցանելի ճանապարհներով։ Շահագործողները այստեղ առավելապես հայ և հուն սեփականատերերն եյին։*

Այսպիսով մինչև 1890-ական թվականները Հայաստանի լեռնարդյունաբերության շուրջը կենտրոնացած եր մի քանի տասնյակ «բանվոր»՝ հուն և հայ, վորոնք դեռ բոլորովին իրենց կապերը գյուղի հետ չեյին կտրել և զբաղվում եյին նաև հողագործությամբ։

Ֆրանսիական կոմպանիայի մուտքը խոշորապես փոխ տվեց պղնձարդյունագործության։ Ամենից առաջ կառուցվում են այստեղ նոր ձևի՝ բնականները, ձգվում ռելսի տասնյակ ուղիներ դեպի գործարանները ու մալաքանները. նորոգվում են բոլոր շախ-

*) Арг. Долгоруков. Борчалинский уезд, էջ 47-48—կապալավարձը հավասար եր տարեկան 9000 ռ. (30 տ. ժամանակով)։

տերը, դրվում նոր վենաելիատորներ, կառուցվում են «շլեյդոֆեն» վառարաններ, վորտեղ հալվում և մաքրվում և վառելիքանիերում պատրաստած «սև պղինձը» (կուպերշտեյն), և վերջապես կանգնեցնում են ախնիկայի վերջին խոսքով «Պիրիտեկ» և «Մանես» ձուլարանական և մեխանիքական գործարանները, երկաթուղայարդանը և այլն։ Ընկերությունը 1894 թ. առանալով խոշոր դրամական սղնություն (նրան միանում և Լիոնի գրուպպան՝ խոշոր կապիտալիստ Բոնարդելի գլխավորությամբ, գրամագլուխը՝ = 6.000.000 ֆրանկ) *) և իրախուսված յերկաթուղու կառուցման պրոյեկտով՝ լայնացնում և նախաձեռնություններին շրջանակը։ Կարճ ժամանակամիջոցում կենտրոնացնում և իր ձեռքում հանքային ամբողջ ռայոնը իր գործարաններով— **Ախթալա, Շամլուղ, Ալահվերդի, Շահալի-Ելիար** (Աչիքենդ), **Սիսի-Մադան, Ջիբուխլի** և այլն։

Պղնձի արդյունաբերությունը այդ ժամանակներում նկատվում եր վորպես խոշոր շահի աղբյուր. այսպես, որինակ, Ղաթարլի հանքերում՝

«Արտադրած 100 փ. հանքը նստում եր 89 ռ.
իսկ 100 փ. հանքի հալելը » 35 ռ.

100 փ. հանքի բոլոր ծախսերը » 135 ռ.

100 փ. հանքից Ղաթարլի գործարաններում ստացվում և միջին թվով 15-20 առկա, կամ 16 փութ մաքուր պղինձ, վորը ներկայումս (1906 թ.) գոյություն ունեցող գներով՝ փութը 19 ռ., հավասար և 304 ռ.։ Այսպիսով 100 փ. հանքի մեջ մաքուր վաստակ և մնում (304—135 =) 169 ռ.։ Սրա $^1/_{10}$ մասը հողատերերին վճարելով—գործարանատիրոջ մնում եր 152 ռ. կամ 1 ռ. 52 կ. ամեն մի փութ հանքից»։**) Յեվ սրանով եվ պիտի բացատրվի 90-ական թվականներին կապիտալիստների արշավանքը դեպի Հայաստանի հանքային ռայոնները (Զանգեզուր, Լոռի, Դարալագյազ) «պղինձ վորոնելու»։

Սակայն ինչ բանվորական ուժ եր կենտրոնացած այս շրջաններում և վերջիսի պայմաններում եր նա աշխատում ու պայքարում։

Հայաստանի պղնձարդյունագործության (հանքափոր և գործարանային) բանվորության թիվը, կարծեք, մեզ և պատկերացնում առատիճանի կամ լուրջյամբ և անցնում և կամ ի

*) Ibid. էջ 105—155.

**) С. Завариян. Экономические условия Карабаха, էջ 48.



Ալավերդի.—Մանկա գործարանը 1900 թ.

պաշտոնն շարված պատահական թվերից հնարավոր չե խոհուեթյունը վերականգնել։ Մամուլում այս հարցը քննութեյան առարկա չի յեղել. հասարակական լայն խավերում յենթադրութեյունների շրջանում և մնացել անգամ մինչև այժմս։

Գրավոր տեղեկութեյուններից մեզ հայտնի յե, վոր Ալահվերդու գրուպայում 1894 թ. աշխատում եր ընդամենը 325 բ., *) վորից՝

Գործարաններում՝	100 բանվոր
Շախտերում՝	60 »
Ժամանակով աշխատանքներում	165 »

Այնուհետև հայտնի յե նաև, վոր Դաթարի գրուպայում 1898 թ. աշխատում եյին 639 բ.,**) վորից՝

Մելիք-Ազարյանի	հանքերում և գործ.	126 բ.
Կունդուրովի	» »	153 »
Մելիք-Փարսադանյանի	» »	55 »
Յեղբ. Լազարեվների	» »	131 »
Մելիք Ղարագյոզյանի	» »	54 »
Կովկասյան ընկ. և ուրիշների	»	120 »

Այսքանը և ուրիշ վոչինչ։ Ինչ վերաբերում և «պաշտոնական» ստատիստիկային, ապա պիտի ասել, վոր նա այդ թվերը բոնագրոսիկ կրճատում և, այնպես վոր հետագայում, յերբ արտադրութեյունը տատնապատկվում և, բանվորների թիվը մնում և անփոփոխ կամ աննշան աճում։ Ըստ այդ ստատիստիկայի պղնձաձուլարանական բանվորութեյան թիվը յեղել և.

Թիֆլիսի նահանգում***)	1894 թ.	1897 թ,	1899 թ.	1907 թ.	1908 թ.
	325 բ.	65 բ.	300 բ.	4000 բ.	4012 բ.
Գանձակի նահանգ.****)	1897 թ.		1900 թ.		1908 թ.
	1670 բ.		1960 բ.		2950 բ.

Համեմատելով այս թվերը, դժվար չե առաջին իսկ հայացքից համոզվել նրանց բոնագրոսիկ լինելուն մեջ. և իսկապես, 1894 թ. Ալահվերդու գրուպայում աշխատում եր 325 բ., հայտնի

---

*) Арг. Долгоруков. Борчалинский уезд.

**) Кавк. Горн. упр. дело № 394, Доклад Окр. Инсп. III Кавк. горн. округа г. Шавчкина.

) և *) Кавказский Календарь за 1899, 1903, 1909, 1910 гг.- Թիֆլիսի նահանգում բացի Ալահվերդու գրուպայից—ուրիշ պղնձահանքեր չկան, իսկ Գանձակի նահանգում Գետաբեկի և Դաթարի հանքերն ու գործարաններն եյին, վորտեղ բանվորութեյան առանձին թիվը մոտավորապես հարաբերում եր՝ ինչպես 3 : 2-ին։

յն, վոր այդ թվականից գործարանատերերը ընդարձակում են իրենց գործունեության շրջանակները, մինչդեռ կապկոնի ստատիստիկան մեզ տրամգնում է (1897—1899 թ.թ.) փոխանակ բանվորության թվի բնական զարդացումը՝ նրա հնդապատիկ նվազումն։

Մլենույնը և Գանձակի՝ Գեաբեկի և Ղաթաբի բանվորության մասին. չեմն համեմատելու լինենք այս երկու շրջանների արտադրության քանակը Ալանվերդու գրուպայի արտադրության գումարի հետ, հարաբերությունը կստացվի 1901 թ.՝ $3^1/_2 : 1$, 1906 թ. $1^3/_4 : 1$ և 1908 թ. $1^1/_4 : 1$։ Սրանից հետևում է, վոր չեմն արդեն 1908 թ. Ալանվերդում աշխատում եր 4012 բ., ապա Գեաբեկ-Ղաթաբում հաշվի առնելով և աշխատանքի մեխանիզացիան, միատեղ պիտի հաշվել համենայն դեպս վոչ քիչ, քան 4012, այլ ընդհակառակը՝ գեռ ավելի։ Մինչդեռ կապկոնի ստատիստիկան հաշվում է 2950 բ.։

Յեվնելով այս տեսակետից պիտի ընդունել, վոր չեմն դեպքում ե. ադմինիստրատիվ ճանապարհով կազմած այդ «տեղեկությունները, թվերը» բոլորովին չեն համապատասխանում իրականության. և իսկապես, վոր գործարանատերը (նամանավանդ հեռավոր Ղաթաբի հայ և հույն ձեռնարկատերը) չեր թագցնի «իր» բանվորների թիվը և առանձնապես՝ արտադրության գումարը։

Այսպիսով թե հեղափոխության նախորյակին և թե 1905-6 թ.թ. Ալանվերդու գործադուլների ժամանակ բանվորության ընդհանուր թիվը պիտի ընդունել առնվազն 4000 և առավելն 4500,*) վորն ըստ ազգության բաժանվում եր.—

Պարսիկներ . . . . . 60 տոկոս
Հույն . . . . . 15 »
Հայ . . . . . 10 »
Ռահին, վրացի . . . . . 7 »
Իտալացի, Ռուս, Հրեյա և այլն . . . . . 8 »

Ղաթաբի պղնձարդյունագործական բանվորության թիվը նույնպես պիտի ընդունել առնվազն 1500 և առավելն 2000, վորը ըստ ազգության տարաբաժանվում եր՝

Պարսիկ (տեղացի և պարսկահպատակ) 60 տոկոս. Հայ . . . 32 »
Հույն . . . 5 տոկոս
Մյուս ազգերը 3 »

Յերկու այդ գրուպաներում քանակով առաջին տեղը գրավում են պարսիկները, իսկ յերկրորդ տեղը Ալանվերդում՝ հույները, Ղաթաբում՝ հայերը։ Հույն «բանվորները» մեծ մասամբ նախկին «լեռնադրյունաբերողների ընկերության» աշխատիներն եյին (մի ժամանակ հողատերերը), և շահագրգռված ֆրանսիական կոմպանիայի հաջողություններով։ Իսկ Ղաթաբի հայ «բանվորների» մի խոշոր մասը նամանավանդ հողատերերն եյին և աշխատում եյին միաժամանակ գործարանատիրոջ մոտ առանձնատեղում շնորհումներով ու առանում ընդհանուր շահի $^1/_{10}$ մասը։ Թե ֆրանսիացիք և թե հույն ու հայ գործարանատերերը խոշորապես օգտագործում եյին այդ տարբերին վոչ միայն ձգելով աշխատավարձը, այլ և գործադուլի կամ կոնֆլիկտի դեպքում հենվում նրանց վրա։ Այս վերջիններս իրենց շուրջը կենտրոնացնելով «բարեկամների» մի վտարիճ՝ քանում եյին կապիտալիստների հանդեպ և հակադրության տակ առնում մեզ ծանոթ՝ «ռուս» բանվորության։ Այսպիսով այդ կատեգորիայի «բանվորները» անհարազատ, պասիվ և վտանգավոր մասն եյին կազմում բանվորական կորպորացիայի։

Գործարանատերերը առանձին սեր եյին տածում դեպի պարսիկ (ճիշտը՝ պարսկահպատակ) բանվորությունը, սակայն վոչ թե խնամակալության կամ նրանց դրության բարելավման իմաստով, այլ վորովհետև սրանք «իսկական» բանվորի արժանիքներով եյին օժտված, հետևապես և «ժուան» ու «շահավետ»։ Սրանց խոշոր առավելությունը, համեմատած տեղացի՝ ռուս, հայ, վրացի, թուրք բանվորության հետ այն եր, վոր սրանք

*) «Նորք հանդեսի II—րդ գրքում հնդ. **Բանվար Ախչան** իր հիշողություններում 1906 թ. գործադուլի մասնակից և գրգռիչ «հանքերում աշխատող թուրք, հայ, վրացի, հույն՝ շուրջ 6000 բանվորների»։ Սա հիմնովին սխալ է. առաջինը՝ 1906 թ. «գործադուլին մասնակցում եյին 3600 բանվար՝ թուրք, հայ, վրացի և հույներ առանց ազգի խտրության», գրում է «**Նար Նամֆի**» թղթակից Բանվոր Ախչան 1906 թ. 25 ոգոստ. . **յերկրորդ**՝ այդ մինչ նույն գործադուլին մասնակցել եյին **բոլոր պարսիկները. վարպետ մասին** ընկ. **Ս. Շահումյանն** իր ժամանակին (31 ոգոստ. 1906 թ.) «**Նար Նամֆի**»-ում գրում եր՝ «գործադուլավորների պլեխավոր կազրը թե **բանակով** և թե վորակով 2500—ի չափ»։ Արդ՝ յեթե 2500 ը մեծամասնությունն է, ել ինչպես կարող է գործադուլավորների (ինչպես և բանվորների) թիվը 6000 լինել։ Մենք միանգամայն համաձայն ենք «**Նար Նամֆի**» թղթակցի թվական տեղեկությունների հետ և ավելորդ յերեսակայության ենք համարում Բանվոր Ախչյան «հիշողությունը»։ Դրանում մեզ համոզում են նաև **Քրանվերդու բանվորների ինժդուրյունները**։

հրու համակատար էին իրենց մինըաշինների ձեռքին և տիրող պայմանների դեմ չդժգոհելով հանդերձ՝ աշխատում էին «պայլի» պես։ Սակայն այդ հանգամանքը բոլորովին էլ չէր մղում գործարանատերերին ավելի մարդավայել պայմաններ առնղծել նրանց համար։

Աշխատել սրն է բուն՝ 12 ժամ անընդհատ, ցամաք հայի կտորը անվերջ կրծելով, տասնյակ հարյուրավոր սաժեններ ձգվող տորյերկրյա մազարաններում, «յերկինք» փչելու վառնի հանդեպ—հատուկ եր միայն պարսիկ հանքափորին։ Մինչդեռ նրա որավարձը սահմանափակվում եր 35 կոպ.-ից մինչև 1 ռ. կամ 1 ռ. 20 կոպեկով, իսկ արհեստանոցների և գործարանային բանվորության՝ 45 կ. մինչև 1 ռ. 20 կ. կամ 1 ռ. 60 կ.—յերկու դեպքում էլ մի գումար, վոր հազիվ բավարարվը բանվորի հերթական պետքերը, քանի վոր միայն սնունդն, ապրուստի, բնակարանի և այլ մանր ծախսերը խլում էին նրա աշխատավարձի 2/3 մասը։

Ո՞վ կհամարձակվեր ձայն բարձրացնել.—փոքրիկ դժգոհությունը կամ ավելորդ շուկը նկատվում եր վոլոկս բողոք, անհնազանդություն և ադմինիստրացիան նման դեպքերում ամենայն ձեվականությամբ նախ անդատիսում եր «խոռվարար», «հեղափոխական» բանվորին։ Ի գործարանից այսաբը, շահատից—շահատ, իսկ քիչ անց՝ այլ և այլ պատրվակով «ռաշչոտ» տալիս։ Կամայականությունները սահման չկար. աշխարհից կարված այս անկյունները ունեին իրենց հատուկ կարգն ու կանոնները։

Առօրյան ընթանում եր անփոփոխ. լեռների ու ձորերի վոլորապտույտ ուղիներով հոսում եր հանքային հարստությունը դեպի գործարանները. փշեր ու յերեկ յեկացող շլակը, պատրաստվող թթվուտները, ադմիկող մեքենաները, ելեքտրոլայտրանի լուսով լուսավորված... գործարանատերերը շարունակում էին պիղել ըրնդուն վոսկին և խեղդող պայմանների ծանրության տակ սիտվող բանվորության հավիտյան գայրույթը։

Կարված ընտանեկան հարկից, որն է բուն կեղտն ու փոշու, ջրի ու ցեխի մեջ «յերկինք» հասող հանքափորը և կամ գործարանի ծխի ու մրի, յուղի ու կրակի շլակի առաջ սեվացած բանվորը զուրկ եր տարրական **բաղնիքից**, մինչդեռ պետական որենքը տասնյակ տարիներ առաջ հրահանգել ու պարտավորություն եր դործարանատերերին «բաղնիաններ (!) շինել, հոգ տանել բանվորության մաքրության (!) վրա»...*

*) „О мерах к охранению жизни, здоровья и нравственности рабочих на горных заводах и промыслах и о врачебной помощи рабочим на горных заводах и промыслах". Тифлис. 1897 г. Марг. Изд. Кавказск. Горн. Управ.

Միևնույն այդ (բարոյական !!) կանոնները պարտավորություն եին ունենալ բժիշկներ, ֆելդշերներ և հիվանդանոց բացառապես բանվորների և նրանց ընտանիքների համար. սակայն թե ֆրանսիական կոմպանիայի «որինակելի» գործարաններում և թե Ղաթարի հատափոր խոզկլինների արխայիկ շըրջանում **բժշկական ոգնության** գործը իր մտավոր բարձրության վրա չեր դրված։ Դեռևի տակ ձգվող վոլորապտույտ մազարաթյան վրա չեր դրված։ Դեռևի տակ ձգվող վոլորապտույտ մազարաները, գործարաններն ու աշխատավայրերը վոչ միայն հակասանիտարական և հակառողջապահական պայմաններում եին, այլ ամ այնպիսի վիճակում, վորտեղ առողջ որգանիզմը՝ յեթե ոչ շրջապատի պայմանների ներգործության կորցնում եր իր հաղվադեպ վառարակչությունը, աշխատունակությունը։ Շնորհիվ անկանոն վնասակար վենտիլյատորների՝ թարմ ոդի բացակայության, տորյերկրյա անցքերը լցված եր մշտապես պայթուցիկ նյութերի, վառոդի թանձր ծխով։

Աշխատանքի պրոցեսում տրավմատիզմը տալիս եր հրեական թվով զոհեր, հաշմանդամներ. նրա անվտանգության առաջ միջոցներ չեր առնվում։ Բժշկական ոգնությունը նման պարագաներում կայանում եր չե թե անդամալույծին բժշկել ի հարկե գործարանի,—այլ փրկել գործարանատիրոջ ավելորդ ծախսերից և ազատվել արդեն իսկ աշխատունակությունը կորցրած բանվորից։—«Գնա գյուղ, քիչ լավացիր, կվերադառնաս»—ահա ամենաեժան ուեցեպտը, վոր թելադրում եր ադմինիստրացիան, ունենալով նախապես բանվորի առորագրությունը, վոր «հիվանդության կամ դժբախտ դեպքի ժամանակ վոչ մի պահանջ ներկայացնելու իրավունք չունի...» Բժիշկը և նրա փոքրաթիվ պետական ծառայում եր ադմինիստրացիայի պետքերին և միայն հազվադեպ դեպքերում՝ բանվորության կարիքներին։

Թե վորպիսի աղաղակող անառարկելության ու անուշադրության եր մատնված բանվորության բժշկական ոգնության գործը՝ դա յերևում է թեկուզ հետևյալ թվերից, վոր վերաբերում են միայն 905—6 թ. այլ 1010—12 թ.։

Շահալի-Ելիար հանքերի հիվանդ բանվորների բժշկության համար կատարած ծախսերը *)

Վոր տարում	Ծախսվածն է		Հիվանդների թիվը	Հիվանդ որեների թիվը
	ռ.	կ.		
1910	27	45	2	61
1911	119	25	6	224
1912	80	55	8	238

Տարեկան միջին հաշվով 75 ռ., որական 20 կ. 125 բանվորների (ու նրանց ընտանիքների) բժշկական ոգնության !!

1905—6. Նախահաշվով Ղաթարի լեռնարդյունաբերողների համագումարը պահեստի մի գումար է հատկացնում «Ղաթարում ամբուլատորիա, բժիշկ, ֆելդշերներ, պրիտավ, փոստ և այլն պահելու համար—35.465 ռ.», սակայն ամբողջ տարվա ընթացքում «հարմար» բժիշկ չի գտնվում. մինչդեռ այդ միևնույն գումարով կրկնապատկվում են բանվորների «ապահովության» համար պրիտավի և առաջնեկների թիվը։**)

Ահա թե ինչու գործադուլների ընթացքում բանվորության մարտական պահանջներից մեկը՝ բժշկականոգնության խընդիրն էր։

Ապա ինչ էր անում **աշխատանքի տեսչությունը** (инспекция труда), մի ինստիտուտ, որ կոչված էր թեթևացնելու աշխատանքի ծանր, մղձավանջային պայմանները, պահպանելու բանվորների աշխատունակությունը և այլն։

«Յերկու տարին մեկ անգամ (Ղաթարի՝ Մ.) հանքերն են հաճախում ինչ որ չինովնիկներ, վորոնք կատարելով մի պատյա գործարանում, հիացած գեղեցիկ տեսարաններով... կուշտ ճաշում են վորևե գործարանատերի մոտ—և շտապում են հեռանալ այս վայրենի տեղերից»։***) Յեթե հեռավոր Ղաթարի հանքային շրջանում տեսչության «աշխատանքը» սահմանափակվում էր «պատյով ու ճաշով», ապա Թիֆլիսից 90 վերստի վրա գտվող՝ յերկաթուղով 5 ժամվա ճանապարհ—Ալահվերդու հանքային բա-

*) Շահալի—Ելիարում բանվորների թիվը հասնում էր մոտ 125։ Աղյուսակը կազմել ենք համանուն հաշվեմատյանից։ Տես—Հայաստանի Կուսպատի Արխիվ. Ալահվերդու գործարանի գրությունները։

**) Протоколы с'езда Зангезурских горнопромышленников 1905 г. Տես՝ Дело Кавказского Горн. управления № 368 ст. 1—4, (Հ. Ժ. Տ.).

***) С. Заварян. Эконом. усл. Карабаха, стр. 46.

յոնում նա ավելի անմխիթար ու տխուր պատկեր էր ներկայացնում։

Շրջանային ինժեներ պարոն **Ցեյտլինը**, վոր կատարում էր տեսչության գերը, հաճախում էր գործարան 2-3, հաճախ 4 ամիսը մեկ անգամ *) և այն էլ այն ժամանակ, յերբ նրան կհրավիրեր գործարանի և հանքերի ադմինիստրացիան. իսկ դա նշանակում էր, վոր դժբախտ դեպքերի ժամանակ տուժող կողմը կամ չի համաձայնում չնչին վարձատրությամբ «գործը փակել» և կամ՝ այս կամ այն պատճառով բանվորության շրջանում առաջացած դժգոհությունը սպառնում է գործադուլի անցնել.—այդ յերկու դեպքում էլ ինժեներ պ. Ցեյտլինը անփոխարինելի հյուր էր ադմինիստրացիայի համար։ Նա կատարում էր իր գերը ճարպկությամբ... закон-ի մարդ է, «տերության» կողմից յեկել է և առաջարկում է կողմերին հաշտվել, քանի վոր միևնույն է, ջանջալ գործ է, բան չի դուրս գալ—խորհրդավոր կրկնում էր նա և գործարանատիրոջ վոնը՝ վոտքից կամ ձեռքից, աչքից թե լսողությունից զրկված հաշմանդամ բանվորը հաշտվում էր իրեն շպրտած մի քանի կոպեկներով ու «կոնֆլիկտը» հարթվում։ Իսկ մասնավորական դժգոհությունները—այդ մասին պարոն ինժեները «խոսում» էր—նա մրոտում էր անվերջ իր գիրքը, «արձանագրում» էր այս կամ այն յերևույթը... սակայն և վոչ վոքի հայտնի չէր, թե ինչ պայմաններում էր աշխատում և ինչ էր ցանկանում Ալահվերդու բանվորությունը։

Միամիտներից չէր պ. Ցեյտլինը. նա իր տիրոջ հավատարիմ ծառան էր. նկատում էր սխալը—բայց չէր հետաքրքրվում նրա վերացմամբ։ Յուրաքանչյուր տարի, անգամ յուրաքանչյուր հաճախման ժամանակ, սկսած 1905 թվից նա միատեսակ շեշտով արձանագրում էր՝ «չինել ամենաշատ կերպով բաղնիքներ և բանվորության բժշկական ոգնություն ցույց տալու համար ֆելդշերական պունկտեր, ինչպես պահանջում է որենքը... Այս պահանջները ի կատար ածելու համար նշանակում եմ յերեք ամիս ժամանակամիջոց». **) ի դեպ՝ այսպես գրում էր նա իր հիշատակած որենքի հրատարակությունից 16 տարի հետո (1913 թ.). և դեռ շատ անգամներ այդ վաճառված տեսչությունը պիտի շարունակեր հեգնել բանվորության համբերությունը, յեթե հասու-

*) Այդ «բարեխիղճ» չինովնիկի պատկերը կարելի է տեսնել իր «Книга замечаний Окружного инспектора Цейтлина за время 1905—13 г. г. Տ. Հայաստանի Կուսպատի Արխիվ.

**) Выпись из замечаний и указаний Окруж. Инж. в Инспекторской книге Ахтальских рудников от 14 июня 1913 г. Հ. Կ. Արխ.

նացած արհվածագը չլուսավորեր անհամեմատ ծանրացած թանձրը մթնոլորտը։

«Մի քանի դժբախտ դեպքերից հետո՝—գրում է ականատես բանվորներից մեկը—շախտերի փլատակների տակ հղմված, չախջախված պարսիկ բանվորների պահանջմամբ և մեր խնդրանքով՝ որ դիմել էինք Լեոնային վարչության շրջանային տեսուչ Ցեյտլինին,—վերջինս բարեհաճեց գալ հանքերը իբրև թե շախտերը դիտելու և ընդհանուր դրությունը պարզելու։ Սակայն փոխանակ մտնելու իրերի դրության մեջ, ինժ. Ցեյտլինը առանձնասենյակում զրուցելով գործարանի դիրեկտորի հետ՝ կաշառվելով, ուրախ ժամանակ անցկացնելուց հետո, գործարանատիրոջ կողմից պատվով ճանապարհ ձգվեց, որովհետև վոչ մի միջոց ձեռք չառավ ներքին կարգերի վերաբերյալ և այդպիսով մեր աշխատանքի դժոխային պայմանները մնացին այնպես, ինչպես կային»։ *)

Բոլորովին իզուր է խոսել նաև **պրոցի** մասին, որ մոգության եր տրված համալսարանական յուպիտերների կողմից. ինչպես և բանվորների կյանքի՝ դժբախտ դեպքերից **ապահովագրության** խնդիրը, որը դրական լուծումն ստացավ պետության կողմից շատ տարիներ հետո (1912 թ.)։

Զկային բանվորության համար **բնակարաններ**, իսկ յեղած մի քանի հանրակացարաններում կանգնելու կամ շարժվելու տեղ չկար՝ թափված բազմության ձեռքից։ Նոր բնակարանների կառուցելու անվերջ խոստումները ադմինիստրացիան ամեն անգամ հետաձգում եր անհայտ ժամանակով։

Դիզած վոակինների փայլով հղփացած գործարանատերերը հաշվի չեյին առնում աշխատանքի բանակի պոտենցյալ ուժը։ Անմարդավայել վերաբերմունքը, ծեծը, հայհոյանքը, բռնի արձակումը աշխատանքից, աշխատավարձի պակասեցումն, արձակուրդների խափան կրճատումը, դիրեկտորից սկսած մինչև դեսյատնիկի (տասնապետի) կամայականությունները, լրտեսությունը—մի կողմից և լարված աշխատանքի ծանրությունը, հաճախակի բնույթ ստացող դժբախտ դեպքերը, քաղցն ու անտանելի վիճակը՝ մյուս կողմից—հանքափոր և գործարանային բանվորության դուրս են բերում արևելյան համբերատարության կաթսրդական շրջանակից և հարկադրում յերբեմն ձայն բարձրացնել։

Արդյունագործության արագ զարգացումը և բանվորական ուժի նման բարբարոս շահագործումը ստեղծել եր ընդհանուր առմամբ

*) А. Девдориан. Воспоминание. Հ. Կուսպատի Արխիվ։

լարված դրություն։ Այդ պայմաններում անհետևանք դործադուլը պիտակից բանվորության համար նկատվում եր անխուսափելի քայլ՝ անհետևանք վիճակը թեթևացնելու։ Յեվ վորքան եվ աշխատելին «կրթված» գործարանատերերը իրենց պետության շրջանակում պահել առանձնապես պարսիկ բանվորության, շոյել, փայփայել նրան, մխիթարել և, այդ պայմանով մինչդեռ մերկանային իրենց այլանդակությամբ։ *)

Ու այդպես եվ յեղավ։

Մեր քննության ենթակա ժամանակաշրջանում Ալահվերդու բանվորությունը գործադուլի առաջին փորձ և անում 1903 թ. աշնան։ Մորամանկ դիրեկտորը կարողանում է անմիջապես մեկուսացնել պարսիկ բանվորներին վոմն Ալաունդովի միջոցով, վորն այդ ժամանակ մեծ հեղինակություն եր վայելում իր հայրենակիցների շրջանում։ Նա խոստանում է ավելացնել նրանց աշխատավարձը և աշխատանքի պայմանները թեթևացնել։ Հույն բանվորները թշնամական գերբ են բռնում գործադուլ պատրաստող «Մանանա» գործարանի բանվորների դեմ։

Գործադուլի յերկրորդ փորձը վերաբերում է 1904 թ., սա-

*) Ֆրանսիական կոմպանիայի ղեկավարները բանվորության «շաների» տեսակետից «կուլտուրական» յուրահատուկ աշխատանք են տարել, վորի մի մասը կազմում եր տարեց—տարի ավելի մեծ չափանիշով յեվ խնդրապատկերը, վոր կրկնվում եր տարեց—տարի ավելի մեծ չափանիշով յեվ խնդրապատկերը, վոր կրկնվում եր ականատեսների պատմածից։ —**Դա սուտ** վառությամբ, արձանագրում ենք ականատեսների պատմածից։ —**Դա սուտ** է,—գրում է Մ.) շրխկոց **Մակարի** ատրճանակի, վոր ամառային օրերից մեկում (ինարկե կրկնակի **Մ.**

կան այս անգամ մինչև նրա հայտարարելը՝ զեկավարները ձերբակալվում ու հեռացվում են Ալահվերդու շրջանից ու ամեն ինչ «խաղաղվում» է։

Ձերկու այս զեպքերը խրատական դասեր էին, որ առաջան շարժման գլուխ անցած Մանեա ու Պիրիտիկ ձուլարանական գործարանների բանվորների ներկայացուցիչները։ Բոլորի համար պարզ եր, որ Ալահվերդում գործադուլ հնարավոր պիտի դառնար պարսիկ բանվորների անվերապահ մասնակցությամբ։ Այս ուղղությամբ էլ վերսկսում են իրենց աշխատանքները տեղի Ս.-Դ. բանվորական կազմակերպությունը*) ու գիտակից անհուսահատական բանվորները։ «Շնորհիվ մեր ուժեղացրած աշխատանքների, բացատրելով հանքափոր բանվորներին այն առավել եքսպլոատացիան, որին իրենք էին ենթակա, — հաջողվեց վորոշ չափով առաջ բերել նրանց համոզմունքների մեջ անհատական և իրավական դրության հոգեբանական ըմբռնումներ։ Առաջին միջոցով մենք ձգտեցինք այնուհետև նրանց պահել մեր ազդեցության ներքո՝ ուժեղացնելով նրանց դասակարգային գիտակցությունը», գրում է ընկ. Դևդորյանին։**) Շուտով փոխա-

*) Ալահվերդու բանվորները չեն մոռանում ընկ. ընկ. **Ս. Շահումյանին, Պիտարին** (Ռ. Քաջոյան), **Տիմաճևին** (Ս. Սպանդարյան), **Դևդորյանին, Վիրաբին** (Մելիք Մելիքյան), **Ա. Թախյանին** և ուրիշներին։

**) Հ. Կուսպատի Երև. Ալահվերդու Դարձ. գրութ.։ Գոլմարի ֆրանսերեն նամակը Թիֆլիսի կոնսուլին, 20 նոյեմբ. 1905 թ.։ Ընդգծումները ամեն տեղ իմն են։ Մ.։

դարձ մերձեցումը և գաղտնի թե հայտնի հավաքույթները պրովոմ են հանքափոր բանվորների շարքերը. հետզհետե նրանք ընկնում են ընդհանուր բանվորական շարժման գիրկը։ Այստեղ հաճախակի այցելող պրոպագանդիստների*) գաղտնի աշխատանքները վոսահկանությունը չտանելու և տալիս։ Ադմինիստրացիան մեղմում է իր տոնը, նամանավանդ՝ հուզում են նրան Ռուսաստանում ուռճացող հեղափոխության հորձանքները։

Հոկտեմբերին յերկաթուղին կանգ է առնում. Սանահնի գործադուլային կոմիտեն սերտ կապ է պահպանում գործարանի Ս.-Դեմոկրատական կազմակերպության հետ. կրկին անգամ գործադուլի ուրվականը բարձրանում է։ Նա խոովում է ամեկան Մանեա՝ գործարանի աշխատանքները գաղարեցնելու նպատակով... Այդ մարդիկ զգուշացրին, որ նրանք կանգնեցնելու են մեր բոլոր աշխատանքները և ցերկայացնելու **8** ժամյա **բանվորական որվա, որավարձի հավելման** եվ այլ պահանջներ։ Ցես անկարող եմ փոփոխել այդ պայմանները, որոնց մեջ աշխատում է մեր **բանվորության մեծ մասը. սակայն, ի դեպս, միանգամայն բավարարված են** չեվ չեն ել մտածում գործադուլ **անել մեր բնակության համար, քանի որ մեզանում են** եվ **մեր գործարանները...** և վերջապես մեր գործադուլ **ցերի աշխատանքների դադարումը կարող է ճակատագրական լինել մեր բնակության համար, քանի որ մեզանում են** եվ **մեր գործին քաղաքական գրուպաներ և առաջ բանվորներ...»։**)

Հաջորդ որը նա արձանագրում է՝ «պարոն հյուպատոսը, ինչպես յերեկ չես ձեզ գրեցի, մեր բանվորների գործադուլը,

---

տավարձը, թեթևացնել նրանց գրության չեվ այլն. սակայն... կամաց-կամաց, հետզհետե...

...Աչքերյան զուռնան ու դհոլը, պարն ու խնդությունը ավելի եվ բորբոքում, յերբ հանդիսավորությամբ իր սվիտայով մտնենում է դիրեկտորը։ Բոլորին բաժանում են ձրի հաց, չամիչ և կանֆետ թափվում է ամբոխի գլխին... իարանցում, հրը—հրրոց, ձայներ, վորոնք փոխվում են ուռայի՝ յերբ դիրեկտորը ամբոխից կոչում է „Կեցցե ֆրանսիական Ընկերությունը“ և այլն ու շուտ տալիս վերեվից 5 և 10 կոպեկանոց արծաթյա դրամ... Իրարանցում, հաճախ փոխվում է թեթեվ կռվի. բայց ահա հաղթանդամ **Խարիտոն Իվանովը** դիրեկտորի թիկնապահը, բարձրացնում է ձեռքերի վրա առաջատեռն դիրեկտորին՝ ընդհանուր ծափահարությամբ, ուռա, ուռա՝ իսկ ինքնահավան ինժեներները վերից վար տեղում և կոպեկները...

Հանդիսը վերջանում է ժամը 2-3-ին պարով ու զուռնայով։

Ձերեկոյան դիրեկտորի բնակարանում շարունակվում է խրախճանքը. Ներկա յեն բարձր ադմինիստրացիան, ազդեցիկ հույները, վաղրաքչիք, պարսիկ մոլան, մի վոսից կաղ պրնսաալ **Ուրբան Իվանովիչը**, մինբաշիները ու բյուզ ազահակները և այլն։ Գինի, շամպանսկի, կոնյակ, կվաս, յերգ, սազանդար, պար ու համբույրներ...

Ձեվ այսպես ամեն տարի։

Այժմ առանձին զզվանքով են հիշում այս տոնը՝ Ալահվերդու բանվորները։

*) Ս – Դ. կազմակերպության ականավոր բանվորներից պիտի հիշել Պետերբուրգից տեղափոխված յերկու ռուս մետաղագործների, ապա հայ-վրացի մի շարք ընկերների, վորոնց կհանդիպենք քիչ հետո։

**) А. Девдориани Воспоминание. Հ. Կ. Արխ.

վոր ընդունել և վճռական ընթացք՝ հայտարարվից յերկաթուղու բանվորների կողմից, վորոնց պաշտպանում եր շրջանի հայկական 4 գյուղերի զինված ուժերը, **մարդիկ, վորոնք բացարձակապես յեվ վոչ մի առքնչություն չունեն մեր քնկերության հետ**։ *Այս գործադուլը սպառնում է ձեռնարկությունների վերջնական փակման...»։ *)*

Պարոն Պոլմարը դիտավորյալ ձևով ուռճացնում է փաստերը։ **Նա նպատակ ունի ապացուցելու, վոր այդ գործադուլը բոլորովին էլ տնտեսական բնույթ չի կրում** *և հայտարարված է «միջնադարյան բավարարված բանվորության մեծամասնության» կամքին հակառակ՝ ոտար ձեռնարկությունների բանվորների բռնի ուժի տակ։ Այս գնահատումը ապիտության հետևանք չե. վորպեսզի ֆրանսիական ընկերության գործունեության շուրջը նպաստավոր հասարակական կարծիքը ստեղծելու և միաժամանակ գործադուլը ցրելու համար ցարական իշխանությունից անհիմնական ոգնություն ստանալու նկատառումներով, անհրաժեշտ եր գործարանատիրոջ կիրառած աշխատանքի անհանդուրժելի պայմանների դեմ բանվորության առաջադրած անհետաձգելի պահանջների մերժման հետևող գործադուլը՝ նկատել վորպես «ոտար քաղաքական գրուպանների միջամտում»։ Մինչդեռ, ինչպես քիչ հետո կտեսնենք, նոյեմբերյան գործադուլը բացարձակապես տնտեսական հողի վրա եր և հետևանք բանվորական ուժի, աշխատանքի արհեստակապիտալիստական եքսպլոատացիայի, անհանդուրժելի պայմանների, վոր սիստեմ եր դարձել։ Քաղաքական դեպքերը միայն, դուքս, արագացրին այն։ Իսկ թե տնտեսական այդ գործադուլը ինչ ընթացք կստանար և հետագայում ինչ նոր պահանջներ կառաջադրեր՝ դա պ. Պոլմարի համար անյերևակայելի յերազ չեր։*

Սակայն շարունակենք։

*Նոյեմբերի 21-ին բանվորներից ընտրվում է գործադուլային կոմիտե, **) վորը տեղի Ս.-Դեմոկրատական կազմակեր-*

Մելիք Մելիքյան (Դեդուշկա)

**) Ibid. II—րդ Նամակը՝ 21. XI. 905 թ. Ընդգծումները իմն են։ Մ.*

***) Գործադուլային կոմիտեի անդամներից և աչքի ընկնող բանվորներից հիշվում են—1) **Զելինն** վլադիմիրը—դարբին. 2) **Զալ բանվոր.**— հայտնի և վորպես խիզախ և համարձակ պրոպագանդիստ. ինքը Ղարաբաղցի հայ է, ազգանունը անհայտ։ Կոչվում եր այդպես բերդի և հոնքի մի մասը սպիտակ լինելու պատճառով։ 3) **Դևիդբեկյանի** Ալեքսանդր.—մեխանիկ. 4) **Ս.-դայան** Մեխակ.—փականակագործ (ղարաբաղցի). 5) **Զիսելիան**—տաբելշչիկ. 6) **Մաուդյան** Միքայել—բանվոր 7) **Զաճարով** Նիկոլա—փականակագործ—1906 թ. հեռացվում է Բագու, ուր ձերբակալվում և սպանվում է բանտում։ 8) **Խաչիյով** Ալեքսի—մեքենավար և ուրիշները։*

պութեան դեկավարութեամբ կազմում և պահանջների հետևյալ ցուցակը և ներկայացնում պրեսիդիումին՝ առանց աշխատանքը դադարեցնելու։

«Հանվորների պահանջները.

1. Ութ ժամյա բանվորական որ.
2. Ռոճիկի ավելացումն 20 տոկոսով.
3. Որավարձ բանվորներին՝ 1 ռ.
4. Բանվորական տեսչութեյուն, որի պարտականութեյունը պիտի լինի ընդունել յեվ արձակել, ավելացնել կամ նշանակել բանվորների յեվ արհեստավորների ռոճիկը.
5. Տուգանքների վերացումն.
6. Շելյագոֆենի վրա ավելացնել բանվորների թիվը 4 մարդով, այնպես որ բոլորի թիվը լինի 8, յեվ տալ նրանց զոգնոցներ ու ձեռնոցներ ի հաշիվ ընկերութեյան։
7. Հիվանդացող բանվորներին բժշկել ի հաշիվ ընկերութեյան յեվ տալ լրիվ ռոճիկ մինչեվ առողջանալը։
8. Բոլոր բանվորներին թույլատրել տարվա ընթացքում մեկ ամիս արձակուրդ։
9. Վառարանի վրայի ոգնականներին յեվ կոնվերտորին նշանակել նախկին ռոճիկը՝ յերկուական ռուբլի։
10. Բարձր պաշտոնները առորինով փոխարինելու դեպքում տարբերութեյունը վճարել ռոճիկից դուրս։
11. Վերականգնել պղնձի նախկին պրեմիան վառարանի վրա կանգնող արհեստավորներին յեվ վճարել անցյալ յերկու ամսվա հաշանելիքը՝ վորը, չգիտենք ինչո՞ւ, վերացրել են։
12 Մեխանիկական բաժնում ավելացնել ծառայողների շտատը.
13. Գործարանում ավելացնել լուսավորութեյունը՝ հոգուտ նրանց, ընկերութեյան շահերին, վորովհետև ադամ լույսը կանխրեն, ընկերութեյան շահերին, վորովհետև ադամ լույսը կանգրկնում և աշխատանքները յեվ զայթակղեցնում և պատերին՝ լրիվ թե մենք անբարեխիղճ ենք կատարել մեր պարտականութեյունները.
14. Տոն որերին դադարեցնել աշխատանքները, իսկ յեթե դա հնարավոր չե՝ հաշվել մի ժամը՝ յերկու.
15. Տրամադրել յուրաքանչյուր 4 բանվորին մի սենյակ յեվ տալ լուսավորութեյան յեվ վառելիք.
16. Վերացնել հաշվեհատորների (заборная книжка) 20 կ. արժողութեյունը.
17. Կատուցել յերեք բաղնիս՝ մեկը պարսիկների, մյուսը ընտանիքավորների յեվ յերրորդը՝ ամուրիների համար։

18. Ռոճիկը կանոնավորապես վճարել ամիսը յերկու անգամ.

19. Գործարանի ոևէոևէ յեվ գործադուլի ժամանակ բոլոր բանվորներին վճարել ամբողջ վարձը յեվ չարձակել բանվորներին գործադուլի համար.

20. Գիշերային պահապաններին տալ տաք հագուստ ի հաշիվ գործարանի.

21. Ամեն որ գրասենյակում կախ տալ տաբելը.

22. Հեռացնել՝ 1) Նիկոլա Աբաջևին, 2) Ախմեդ Ստեփանովին, 3) Սավինո Զիլերանիին, 4) Յեմելյանովին, 5) Սալեյ Սրդուլային յեվ 6) Աղա Մամեդ-Ազային։

Մինչեվ բավարարելը աշխատանքի չանցնել.

Կեցցե Ռ. Ս.-Դ. Բ. Կ.»։*)

Պարոն Պոլմարը սարսափում է այս պահանջներից և ժըժժում բավարարել. հաջորդ որը հայտարարվում է գործադուլ։

Սահանին կայարանի և գծի բանվորությունը զբաղեցված շոգեմեքենաներով գալիս և վողջունելու այդ գործադուլը։ Մահնեին և մոտենում գնացքը կարմիր դրոշակներով «կորչի բանակալությունը, ժանդարմերիան» և այլն մակագրություններով։ Կազմակերպվում է միտինգ. խոսում են յերկու կողմից շատ բանվորներ. «միևնույն այդ միտինգին—պատմում է ականատեսը—խոսեցին նաև, ի միջի այլոց, «պատահարար» ներկա գտնվող Շուլավերի գավառապետի ոգնական Բագրատեն և Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոսը, վորոնք հորդորում էին մեզ չխանգարել կարգը, խոստանալով խնդրել համապատասխան հիմնարկություններին՝ բավարարելու մեր բոլոր պահանջները»։**) Գալիս և նաև պարսկական կոնսուլը, վորպեսզի հորդորի ըմբոստ պարսկահպատակ բանվորներին—սակայն նրան այդ աղթիվ կազմակերպած միտինգում շվացնում են և թույլ չեն տալիս շարունակել իր «նախապես սերտած ճառը»։***)

Այդ «փորձված» ճանապարհով գործադուլի ընթացքի վրա ներգործել հնարավոր չեր. մինչդեռ քաղաքական հորիզոնը որեցոր մթագնում եր, բանվորական շարժումները ծավալվում։ Գործարանատերը բան յերևույթին ճարահատված բանակցում և գործադուլային կոմիտեի հետ։ Գալիս են ընդհանուր համաձայնության և կազմում մի նոր «աշխատանքի կարգ»։

*) Հ. կ. Ա. Ալահվերդու գործ. գրություններում, բնագիրը սուսերեն է։

**) A. Левдориани. Воспоминание.

***) Ibid.

Ինժիներ Պոլմարը իր մի նամակում այդ մասին խոստովանում է՝ «ինձ սոխպեցին այնպիսի պիջումներով վերակալ աշխատանքները, վոր սոխում են ինձ զգաբերեցնել մեր շահագործությունները ամենակարճ ժամանակամիջոցում»։*) Սակայն պ. Պոլմարի պիջումները քան յերևույթին նպաստակ ունեին ձգձգելու՝ մինչև ընդհանուր քաղաքական հորիզոնի պարզելը. մանավանդ նրան շատ լավ հայտնի յեր բանվորության նյութական անմխիթար վիճակը և գիտեր, վոր գործադուլը իր սնիկական ուժերով յերկար չեր կարող դիմանալ։

Ֆրանսիական կոմպանիան նոյեմբերի 25-ին վերջնակատնում է բոլոր պահանջները, բացի 8 ժամյա աշխատանքի օրվանից։ Նոյեմբերի 26-ին գործադուլը վերջանում է։ Բանվորները ոգևորված ուրախությամբ ընդունում են իրենց հաղթանակը։ Ամեն կողմից ուղարկվում են հեռագրեր, շնորհավորագրեր։ Ամենքը ուրախ են, վոր գործադուլը վերջացավ հաղթական կերպով։ Ամենքը հավատում են, վոր այդ հաղթանակը կտա նոր ուժ և կոչ կանի նոր պայքարի

վերացվում և դիրեկցիայի կողմից բանվորների հանցանքների համար ինքնագլուխ տուգանք նշանակելու սովորությունը։

4. Շելյզգոմինի վրա աշխատող բանվորներին ընկերությունը իր հաշվին պարտավոր և աշխատանքի ծեռնոցներ յուր գոգնոցներ տալ։

5. Ընկերության ծառայելու ժամանակ հիվանդացող բանվորները ստանալու են ծրի բժշկական ոգնություն յուր դեղարար. հիվանդության ժամանակ ստանալու են իրենց աշխատավարձի կեսը։

6. Արհեստավորներից յուրաքանչյուրին՝ ընկերությանը առնվազն մեկ տարի ծառայելուց հետո դիրեկցիայի թույլտվությամբ տրվում և յերկու շաբաթվա արձակուրդ՝ աշխատավարձը պահպանելով ամբողջությամբ յուր կամ մի ամիս արձակուրդ՝ աշխատավարձի կեսով։

7. Ավազ վարպետի կամ բանվորի հիվանդության կամ բացակայության դեպքում դիրեկցիայի ցուցմունքով յուր մանով նրանց փոխարինող սորտաղրյալը մեծավորի պաշտոնը կատարելու ժամանակ ստանում և վերջինիս ռոճիկը (փոխանակ՝ «վերջինիս ռոճիկի չափ» Մ.)։

8. Գործարաններում թե բանվորության յուր թե ընկերության շահերը նկատի առնելով՝ ուժեղացվելու յուր լուսավորությունը, վորպեսզի յուրաքանչյուր բանվոր կարողանա հետևվել իր ընկերոջ բարեխիղճ աշխատանքին։

9. Կիրակի յուր տոն որերին **Պիւիսիկ** յուր **Սահեա** գործարաններում, ինչպիսի վտանգ գործելիս լինի՝ աշխատանքը չպետք և դադարեցվի յուր մի դեպքում։ Իսկ յեթե դիրեկցիան պահանջի նայիվ մյուս գործատեղերում աշխատել—այդպիսիները (բանվորները Մ.) իրավունք չունեն դադարեցնել իրենց աշխատանքները, այլ պիտի կատարեն իրենց վրա դրված պարտականությունները։

Հիշյալ տոն որերին բոլոր աշխատող բանվորները անխորտիր ստանում են իրենց աշխատավարձը մեկ ու կես անգամով ավելի։

10. 1906 թ. հունվարի 1-ից ընկերությունը պարտավորվում և ծեռնարկել բանվորական բնակարանների շինության, այն հաշվով, վոր բոլոր բանվորները տեղավորվեն յուրաքանչյուր սենյակում 4-ական մարդ. իսկ նոյեմբերի 25-ից բոլոր բանվորները ընկերությունից ստանալու են վտեղիք՝ յուրաքանչյուր սենյակին ամսական 1/8 խոր. սաժ. վառելափայտ յուր 10 գրվ. նավթ։

11. Հաշվետետրերը (заборная книжка) տրվում են ծրի։

12. Ընկերությունը պարտավորվում և շինել 3 բաղնիս՝ մեկը ընտանեբավորներին, մյուսը՝ պարսիկների, յերրորդը՝ ամուրիների համար։

13. Արհեստավորներին յուր բանվորներին ռոճիկ տրվում և ամիսը մեկ անգամ։

14. Գործարանի նորոգման ժամանակ, յերբ այդ պատճառով աշխատավորները անգործ են մնում՝ դիրեկցիայի պահանջով աշխատավոր են այդ հարմար աշխատանք կատարել յուր մամբ պարտավոր են այդ հարմար աշխատանք կատարել յուր այս դեպքում ստանում են իրենց սովորական աշխատավարձը։

15. Գիշերապահներին ընկերությունը ծրիաքար տալիս և տաք հագուստ։

16. Համապատասխան գրասենյակներում ամեն որ կախվելու յեն տաբելները։

17. Արհեստավորներն ու բանվորները գործադուլ անելու համար չեն արձակվում պաշտոնից։

18. Արհեստավորների յուր բանվորների հետ վերաբերմունքը լինելու և բաղաքավարի։

Ծանոթ.—Հետևյալ 6,9 յուր 12 պահանջները (բանվորների ներկայացրած) պետք և լուծեն դիրեկցիան յուր վ

ղացած բանվորական շարժումը վտանգ է սպառնում իրենց կյանքին»։ *) Հաճախակի ինքնաբերաբար կազմակերպվող միտինգներում բանվորական բազմութիւնը պահանջում է դրամական ոգնութիւն, գործարանատիրոջ կողմից պայմանների անվերապահ իրագործում։ Մինչդեռ ծայր առնող պրովակացիան՝ թե չհաշատող, գործադուլավոր բանվորներին պիտի ազատ արձակեն իր գործը տեսնում է՝ հանքափոր բանվորութիւնը հետզհետե վերսկսում է ընդհատած աշխատանքները։ Վերջին հաշվով միայն Մանեսի գործարանային բանվորներն իրենց հաղթանակի թուղթը ձեռքերին...

Զկար զեկավարող սրպան, ընդհանուր քաղաքական իրադարձութիւնները անուշադրութեան ելին մատնել Ալահվերդու բանվորութիւնը։

Յերկաթուղու գործադուլի լիկվիդացիայի հետ (25. XII) ռեակցիայի հզորացման որերին, ինքնաբացքայման է յենթարկվում նաև Ալահվերդու բանվորութիւնն առաջին—մասսայական գործադուլը։ **)

* * *

Նոյեմբերեան յերեսնորյա գործադուլը չհասավ իր նպատակին. Ալահվերդու բանվորութիւնը միայ անտեսական և իրական միևնույն անմխիթար վիճակում։ Աշխատանքի առորյա պայմանները շնորհիվ հաղթանակող ռեակցիայի՝ ավելի ծանրացան։ Ժրպտաց գործարանատերերի բախտը։ Հանքային ադմինիստրացիան չեր մոռանում նոյեմբերը. նրա կամայականութիւններն ու կոպտութիւնը, հեգնանքը անցնում եր ամեն սահմանից։

---

*) Է. կ Ա. Ալահ. գործ. դրութիւնները՝ «Խնդրագիր» 5. XII 1905 թ.

**) Այս գործադուլի մասին ընկ. Կախյանը բառացի գրում է. «Դեղուշկայի (Մելիք Մելիքյան) հետ միասին գնում ենք Լոռի—այդ ժամանակ ապատ մանում ենք Ալահվերդիի գործարանը. հավաքելով բանվորներին, իրենց դրութիւնը իրենց առաջ պատկերացնելուց հետո, կազմակերպում ենք մի դեկավար մարմին և այդ մարմնի հետ մի շարք խորհրդակցութիւններ ունենալուց հետո մշակում ենք պահանջագրի մի ցուցակ և ասա՝ գործադուլը պատրաստ է («Տնորք» № 2. 1923 թ)։ Տնտեսում էք, Ալահավերդու մի լանի նազար բանվորները շնոց սպասում ելին ընկ. Կախյանի յեկ Դեղուշկայի մուտք գործելուն... Տարորինակ հիշողութիւնների տեր է ընկ. Կախյանը։—Այնուհետև ընկ. Կախյանը հիշելով վերեվ բերած պահանջացուցակի 1,2,19 և 22 կետերը, ավելացնում է՝ «և մի քանի մանր պահանջներ» (ընդգծ. իմն են։ Մ.)։ Դուրս է գալիս, վոր ցուցակ մշակողը հետացած 18 պահանջները համարում է մանր և չկարդական։ Պետք է նկատել, վոր ընկ. Կախյանը քերեվս անգիտակցաբար, ձգտում է նսեմացնել Ալահվերդու բանվորութիւնի հեղափոխական նախաձեռնութիւնը, վոր հետևվանք եր յերկար տարիների անընդհատ աշխատանքների։

Սթափված ռեակցիայի հասցրած հարվածներից, Կովկասյան Սոցիալ-Դեմոկրատիան և նրա տեղական կազմակերպութիւնները հաշվի առնելով յերեկվա փորձը, նոր թափով վերսկսում են կազմակերպչական աշխատանքները բանվորական շերջանակներում։

Ալահվերդու Ս.-Դ. կազմակերպութիւնը կրկին նախաձեռնում է բանվորութեան կազմակերպման գործին իր սեփական ուժերով։

Դեռ յեվս հին վերքերը չամոքած, Զիաթուրի, (8. VI 06 թ.) Թիֆլիսի գլխավոր դեպոյի (10. VI. 06 թ.) և Անդրկովկասյան Թիֆլիսի գլխավոր արհեստանոցների (16. VI. 06 թ.) բանյերկաթուղու գլխավոր արհեստանոցների (16. VI. 06 թ.) բանվորութիւնը մեկը մյուսի հետևից կրկին դիմում են գործադուլի՝ իրենց տնտեսական դրութիւնը բարելավելու և հեղափոխութեան քաղաքական նվաճումներն ամրապնդելու։

Ալահվերդին հետ չի մնում նրանցից, նամանավանդ վոր գործարանատիրոջ խարեբայութիւնը և ադմինիստրացիայի «քաջագործութիւնները» պարսիկ բանվորութեան միանգամայն հեղափոխել ելին։ Նախաձեռնութիւնը վերցնում են «պարտված» նները»։ Գործադուլային կոմիտեի մեջ մտնում են նոյեմբերեան դեպքերին աչքի ընկած բանվորները և Ս.—Դ. կազմակերպութեան անդամները։ *) Մշակվում և մի պահանջացուցակ **) և ոգոստոսի 1-ին ներկայացվում գերեկատորին։ Սրա հիմնական կետերը միևնույնն ելր, ինչ նոյեմբերյանը. ավելացված ելր

---

*) Գրանցից հիշենք.

1. Սեմյոնով.—մեխանիկ, Դանի ավազանի նախկին բանվոր.
2. Զանջուղազվիլի.—խիմիկ. (Ավելացի «գործարանին» գլխամբա և վարող մասակարարն ելր. Մ.)
3. Փերոզյան Սերգո—կաչեգար, այժմ մեռած.
4. Իսմայիլ-Սամեդ-ողլի.—հասարակ բանվոր.
5. Աղայան Մելյակ—փականակագործ.
6. Զանթուրիա (Միխա Նուսլրաձե ? Մ.)բանվոր.
7. Վերմիշյան Սողոմոն (սպանված է 1907 թ.)
8. Զիլիծե Վլասիմիր, դարբին.
9. Պոլոնդոպուլո Նիկոլ (ինտելիգենտ, Ոփրելիա քահանայի վորդին).
10 Խաչիկով Իլիա—փականակագործ, ներկայումս՝ Ալահվերդու բանվոր։
11. Զալ բանվոր.

Գործադուլային կոմիտեի անդամների թիվը վոմանք հասցնում են 15. 17, 19-ի։ Սակայն ամեն դեպքում կրկ վում են առավելապես այս բանվորների անունները։

**) Այդ պահանջացուցակը մեր ձեռքը չի ընկել. Նա բաղկացած է յերեսից՝ վոմանց կարծիքով՝ 30—32։ Հիշողութիւններով վերականգնել 28 կետերից՝ վոմանց կարծիքով՝ 30—32։ Հիշողութիւններով վերականգնել հնարավոր չգտանք՝ թյուրըմացութիւններից խուսափելու համար։

հանքերի (շախտերի) հակաանհատապական պայմանների վերացման և զբոսցի, հիվանդանոցի, դրադարան—ընթերցարանի բացման վերաբերյալ կետեր։

Գործարանատերը չի ուզում անգամ լսել այդ պահանջների մասին. իմանալով, որ գործադուլը նախապատրաստող անդր Ա.-Դեմակրատական կազմակերպությունը անմիջական կապ ունի Թիֆլիսի կոմիտեի հետ, դիմում է վերջինիս իր ներկայացուցիչ պարոն Դյուհանի միջոցով և խնդրում «բանվորների դրության և հնարավոր գործադուլի մասին» խորհրդակցելու համար ուղարկել ներկայացուցիչ։ *) Սակայն մինչև այդ՝ օգոստոսի 2-ին հայտարարվում է ընդհանուր գործադուլ։ «Մանանա» գործարանի շչակը հավաստարապես իր շուրջն և կենտրոնացնում թե հեռավոր շախտերում աշխատող բանվորության և թե մյուս գործարանների ու արհեստանոցների բազմության՝ թվով 4000-ի չափ։

Պարսիկ բանվորներն այս անգամ գործադուլավորների ամենից առաջն և համառ մասն էլին կազմում։ Հենց բանվորների խոշոր մասը նեմանապես միացել էր գործադուլին։ Անգամ այս պայմաններում գործարանատերերը քիչ չանք չեն թափում՝ բանվորության մի մասին գործի կանգնեցնել։ Հենց հողատերերը, փողաթղթները յեվ կաղ պրեսատավ Արշակ Իվանիչը իրենց գաղտնի աշխատանքը—պրովակացիայի ճանապարհով գործադուլը վիժեցնել—պսակում են մի պրոեկտով, վորը չենք կարող աչքաթող անել։ Դա Հայաստանի բանվորական շարժման ճշտիբրեհներեի անփառունակ հպատակն և, վոր գալիս էր բանվորության անունից խաչ քաշելու իր պատակարպային պայքարի վրա։ Տարբերող 175 «բանվորները»՝ Ալահվերդու բանվորության ատկանքներն էլին, վորոնք չհամարձակվեցին վերսկսել աշխատանքները մինչև պինվորական բանի ուժի հանդես գալը։

Ահա այդ պրոեկտն ամբողջովին.

«Նորին Բարձրապատվության յեվ այլն յեվ այլն դիրեկտորի փոխանորդ ինժեներ պ. Գրոյին.

Բորչալու գավառի Ալահվերդու պղնձաձուլարանի յեվ գործարանի գյուղի բնակիչ՝ բանվորներից յեվ հանքափորներից

Խնդիր

Մենք Ալահվերդու պղնձաձուլարանական գործարանի յեվ հանքերի բանվորներս պատիվ ունենք խոնարհաբար յեվ ակնա-

*) Հ. Պատպատի Արխիվ. Ալահվերդու գործ. պրոեկտ. «Письмо к директору Гро» от 3 августа 1906 г. За № 10315.

Ալահվերդու գործարանի բանվորները

Ա. ԴԵՎԴՈՐԻԱՆԻ

Ի. ԽԱՉԻԵՎ

Ս. ՓԵՐՈՋՅԱՆ

ծութեամբ խնդրելու Ձերդ բարձրապատուութեան, միջնորդութեան հարուցել՝ ինչպես Թիֆլիսի գերապատիվ նահանգապետի, նմանապես յեվ Կովկասյան Լեռնային Վարչութեան յեվ Փարիզի Կովկասյան արդյունաբերական-մեսրոպածուլարանական Ընկերութեան առաջ՝ կրկին վերսկսելու հանքերում յեվ Պիրիտիկ ու Մանես գործարաններում ոգոստոսի 2-ի գործադուլի պատճառով դադարեցրած աշխատանքները։ Մենք, վերոյիշյալ գյուղացի բանվորներս ընկել ենք ծայր աստիճան կարիքի անելանելի դրության մեջ, շնորհիվ այն հանգամանքի, վոր ապրուստի կոպեկների աղբյուրները, բացի հանքերի յեվ գործարանների աշխատանքից՝ չունենք, զուրկ ենք, այնպես վոր մեր նյութական վիճակը կախված և ամբողջովին այդ գործարաններից։ Այլ միջավայրի յեվ այլ արհեստի աշխատանքը յերբեք չի կարող նյութական այնպիսի ապահովություն տալ մեզ, ինչպես Ալավերդու գործարանը, վորը կերակրել սնուցել ու մեծացրել և մեզ մեր ծնված օրից։ Սակայն այլ գործարաններից, հանքերից յեկած ոտար բանվորությունը բերից իր հետ Ալավերդու գործարան թշնամություն, անտանելի վերաբերմունք, նամանավանդ այնպիսի մարդկանց կողմից, վորոնք վոչ մի առընչություն չունեն գործարանների բանվորության շահերի յեվ սրանց ընտանեկան դրության հետ։ *)

Մենք, գործարանի բոլոր (?! Մ.) բանվորներս այժմ խընդրում ենք Ձերդ Բարձրապատվության՝ բարձր իշխանությունից իրավունք տանալուն պես՝ թույլատրել մեզ կրկին աշխատել նախկին պայմաններով, վոր կային մինչեվ ոգոստոսի 2-ի գործադուլը. իսկ վորպես գարանտիա յեվ պարտավորություն գործարանի յեվ նրա ադմինիստրացիայի անվտանգության՝ առաջարկում ենք հետեվյալը յեվ պատրաստանք.—

1) Ձսպահանջել գործարանից վոչ մի հավելումն կամ լրացումն յեվ մեր կյանքի բարելավումն յեվ այլն, յեթե ինքն ադմինիստրացիան յեվ կամ կառավարությունը անհրաժեշտ չգտնի բանվորների դրությունը բարելավել։

2) Ձմասնակցել մյուս գործարանների ու յեկվոր բանվորների հետ վոչ մի գործադուլի, չցանկ այլ գործարանների բանվորության յեկվոր ելեմենտին, վորը գժտության սերմ և ցանում մեր յեվ ադմինիստրացիայի միջեվ։

3) Մեր բարեկեցության դեմ գնացողները յեթե հանդես

*) Դերևկաոր Պալմարը նոյեմբերի 21 և 20-ի նամակներում այդ մասին մեկնություն և գրում (տես. եջ 107—108). Թվում և, վոր այս գրությունը կազմել և նրա ոգնական պարոն Գրոն։

գան, մենք խոստանում ենք միհամուռ ուժերով ձեռք-ձեռքի տված գործարանի ադմինիստրացիայի հետ՝ հեռացնել այդպիսիներին մեր միջավայրից՝ խուսափելու համար անկարգություններից։

4) Պաշտպանել յեվ պահպանել բոլոր տեսակի գործարանային շահերը։

5) Առանց ադմինիստրացիայի թույլտվության չգումարել գործարանային շահերին վերաբերող հավարույթներ, որոնք կարող են սպառնալ գործարանի բարեկեցության. յեթե ինքը ադմինիստրացիան անհրաժեշտ չգտնի գումարել այն՝ բանվորների վիճակը յեվ այլ կարիքները բարելավելու նպատակով։

6) Աշխատանքից դուրս գալ իր ժամանակին յեվ կատարել այն՝ ամենայն բարեխղճությամբ՝ վորպեսզի գործարանը չտուժի դրանից յեվ այլ վնասներ չկրի.—քսան վորում ստորագրում ենք՝ ընդհարանվորներս, վոդրաթներս յեվ ծառայողներս». հետևում է 175 ստորագրություն հունարեն և ռուսերեն լեզուներով։ *)

Այս խայտառակ վարմունքը և այս պրոթյան գոյությունը հայտնի չեր գործադուլավոր բանվորության. դիրեկցիայի ձեռքին սա մի փաստաթուղթ եր՝ հաստատելու իշխանության՝ և ուժ տարին եր, վոր «բանվորությունը գոհ է իր վիճակից» և վոր, գործադուլը «ոտար անհարազատ տարրերի սպառնալիքի հետևանք է»։

Այս «գրությունը» անկարող եր կանգնեցնել տարերային շարժումը. հազարավոր բանվորությունը անվերադարձ վճռականությամբ իր պահանջներն եր առաջադրել։

Դադարում են գործարանները, դատարկվում՝ ստորերկրյա մազարանները՝ մեռնում և աշխատանքի ատոյա յեռն ու զեռը։

Մի քանի որից Ալավերդի և գալիս գործարանատիրոջ կողմից հրավիրված Թիֆլիսի կոմիտեյի (իմա՝ «Կայծի» խմբագրատան **) ներկայացուցիչ ընկ. **Սուրեն Սպանդարյանը**. հնարավոր բանակցությունների ընթացքում դիրեկցիան համաձայնվում է բավարարել պահանջագրի 22 կետերն աննշան փոփոխություններով։ Սակայն նոյեմբերյան գործադուլի հետևանքներից, բանվորությունը չի զիջում և վոչ մի բառ. ու

*) Հ. կ. Արխ. Ալավերդու գործերը։ Այս խնդրագիրը գրված է չափազանց անգրագետ թարգմանությունը կատարել ենք համեմատաբար ազատ՝ դուրս չգալով բնագրի սահմաններից։

**) Այս թերթի խմբագրության հետ սերտ կապված եր Բորչալվի կազմակերպությունը և ընդհանրապես Հայաստանի առանձին շրջանների կուսակցական որգանները։

մերժում է գործի անցնել՝ մինչև չբավարարեն նրա բոլոր պահանջները։ Իզուր են անցնում թե ընկ. Սպանդարյանի և թե Ս. Շահումյանի հորդորները՝ վերսկսել աշխատանքները այդ հաղթությունների։

Ստեղծվում է լարված դրություն. դիրեկցիան մատնոգված իր վիճակով՝ սպասում է հնարավոր եքսցեսների, սակայն գործադուլային կոմիտեն իր պահպանության տակ է առնում պահեստների հարստությունը։ Այսպես միայն մեկ պահեստում կար՝

Պղնձահանք ջրկած. . .	225.585	փութ.
» լվացած . .	147.047	»
» չջրկած . .	387.589	»
Կուլֆերշտեյին	847	»
Մազութ	12.509	»
Կոք	157.648	»
Հանքային սյուներ . . .	25.142	հատ։ *)

Բանվորությունը պահում է իրեն ավելի քան զսպված. գործադուլը ընթանում է նորմալ, խաղաղ ճանապարհով։ Սակայն գործարանատերերը ծրագրում են գործադուլի սպառնալիքից ազատվելու համար՝ բանի ուժով հեռացնել (և արձակել) բանվորության հանքային ռայոնից։ Ոգոստոսի վերջերին, մի գեղեցիկ որ Ջալալ-Ողլուց՝ 100 կոզակով, 4 թնդանոթով և պուլեմյոտանոթով, Շուլավերից՝ գավառապետը 60 կոզակով և ստրաժնիկներով,—շրջապատում են Ալավերդու հանքերը և Մանեսի բարձունքները։

Մի վերջին անգամ պարսկական կոնսուլը առանձին հորդորում և ազա սպառնում է իր հպատակ հանքափոր բանվորներին, սակայն վոչ այդ, և վոչ էլ գինված կոզակների և թնդանոթների ներկայությունը չեն ընկճում նրանց կամքը՝ մերժում են գործի անցնել մինչև չբավարարեն տրված բոլոր պահանջները։

Սակայն գործադուլի յելքը նախորոշված եր. շրջապատված կոզակների գինված շարքերով և թնդանոթ-հրետանիի առաջ՝ անզեն բանվորական մասսան ոգոստոսի 29-ին ստացավ «ռաշչոտ»։ Հայ, ռուս, վրացի՝ Զոլատարյովի մարտկի տակ հեռացվեցին գործարանային շրջանից. իսկ կիսաքաղց պարսիկ բանվորները, մերկ ու բոկոտն, ապրանքատար վագոններով, վորոնք

*) Հ. կ. Ա. Ալավ. գրություններ։ «Записи руд и материалов на 3 окт. 1906 г.»

պես վտանգավոր, պայթուցիկ իր—դուրս վռնդվեցին Անդրկովկասի «խաղաղ» տեղամասերից։

...«Ամեն ինչ վերջացած եր,—գրում եր «Նոր Խոսքի» թղթակիցը*)—2500-ի չափ պարակահպատակ թուրքեր (իմա՝ պարսիկներ Մ.), որ կազմում էին գործադուլավորների գլխավոր կադրը՝ թե քանակով և թե վարակով, բոնի կերպով հեռացրված էին և ապրանքատար գնացքներով՝ անասունների նման լցրված վագոններում՝ ուղարկված դեպի պարակական սահմանը։ Գործարանի ադմինիստրացիան նրանց հետ վարվեց առևտրականի կերպով. տարիների ընթացքում իրենց արյուն քրտինքով, տասերեկրյա դժոխային աշխատանքով, գործարանատիրոջ համար միլիոններ ստեղծող բանվորներին՝ նա ճանապարհ դրեց բառի բուն նշանակությամբ մերկ ու քաղցած, զուրկ մինչև անգամ ճանապարհածախից։ Եվ այդ դեռ բավական չէ. թուրք բանվորները, որոնց ադմինիստրացիան տուն չեր տալիս բնակության համար, իրենց սեփական հաշվով մոտ 60 հատ խրճիթներ էին շինել իրենց համար, որտեղ ապրում էին ընտանիքով։ Ա. տներից յուրաքանչյուրը նրանց նստել է—ադմինիստրացիան այդ հաշիվները լավ գիտե, - տասնավոր 200-250 ռ.։ Այդ տների համար, որ պետք է մնային գործարանին, նա խոստացել եր 50-ական ռուբլի վճարել թուրքերին, բայց հետո չվճարեց և ոչ մի կոպեկ։ Այդպիսով՝ ձրի կերպով նա սեփականացրեց արտաքսված աղքատ բանվորների անակները։ Արտակարգ համերաշխություն ու կռվի պատրաստականություն ցույց տված թուրք բանվորները հարկադրված էին լռությամբ տանել այդ բոլոր բարբարոսություններըվորովհետև նրանց տասը կանգնած եր կառավարության զինված վայրենի ուժը, որ ամենաթույլ դիմադրության դեպքում պետք է ուղղեր նրանց դեմ հրացաններն ու թնդանոթները։

Թուրք բանվորներին հեռացնելու և տեղահանական բոլոր բանվորներին «ռաշչոտ» տալու ժամանակ ադմինիստրացիան հայտարարում եր, որ գործարանը փակվում է վեց ամսով։ Բայց դեռ թուրքերի վերջին պարտիան (մոտ 100 հոգի) չհեռացած՝ գործարանի ծխնելույզով բերվեց ծուխը և աշխատանքները վերսկսվեցին։**) Յերևի և այսոր (ոգոստ. 29-30-ին՝ Մ.) թե

*) «Նոր Խոսք», № 6, 31 ոգոստ. 906 թ. Հոդվածը տարագրած է «Աշտոռով,— պատկանում է ընկ. Ս. Շահումյանին գրչին։

) Հետագնելով ամբողջ բանվորության ադմինիստրացիան իրեն հավատարիմ մնացած՝ հայ պայշչիկներին և մեզ հայտնի խնդրագիր ներկայացնողներին անմիջապես աշխատանքի դրեց։ Սակայն փաստորեն թե գործարանների և թե մազարանների **աշխատանքները վերսկսվեցին հոկտեմբերի 2-3-ից, այսպիսով գործադուլը տևեց ուղիղ յերկու ամիս։ Տ. Отношение Горн.управ. от 9/x 906 г.за № 5536 Հ. կ. Ս.։ Ամենվերջում գործերը

ներքև Մանեասում և թե մազարաններում սկսել են աշխատել մոտ 400 բանվորներ։ Տեղացի հայ բանվորները, որ ավելի խուլիգանական տարր են ներկայացնում և խաղալիք են դարձած բազմաթիվ հայ պայշչիկների ձեռքին, առաջինը սկսեցին աշխատել։ Նրանց հետևում են հայերը, որ լսելով աշխատանքների սկսվելը և կանչվելով ադմինիստրացիայի կողմից, կամաց-կամաց գալիս են իրենց գյուղերից։

Բանվորների տրամադրությունը չափազանց ընկճված է։ Նրանք չեյին սպասում այս տեսակ պարտության»։

Այդ պարտությունը սակայն անխուսափելի յեր նախ՝ «բանվորական մասսայի գիտակցության պակասության շնորհիվ..., որ չկարողացավ կշռել իր պահանջները և չափել իր ուժերը» և յերկրորդ՝ գործադուլային կոմիտեն իր տրամադրության տակ չուներ բոլորովին «նյութական միջոցներ»։*)

Յերկու ամիս ձգձգվող գործադուլը այս անգամ ևս պարտվեց առանց վորևե ձևական (նյութական) հաղթության։ Սակայն բազմաչեղուռ բանվորական մասսաները թե՛ թանգ գնով, բայց և այնպես ձեռք բերին **համեմատաբար գործակցության հարուստ փորձ, դասակարգային պայքարի անհրաժեշտ գիտակցություն յեվ ամբարված զայրույթ ու վրեժ մի բուռն շահագործողների յեվ ցարական իշխանության դեմ։**

Իսկ դա՝

խոշո՛ր հաղթություն եր...)

---

*) Ibid. —Գործադուլի ընթացքում Ալեքսեյևում Ս. Դ. կազմակերպությունը բաց թողեց առանձին թղթեր՝ գործադուլավոր բանվորների նյութական աջակցության համար—դրամ հավաքելու նպատակով։ Շրջաններից միայն Վասիլևսկի ընկերները, շնորհիվ ընկ. **Հայկ Ազատյանի** նախաձեռնության, հավաքեցին 42 ր. 85 կոպեկ և ուղարկեցին վերջինիս միջոցով գործադուլային բյուրոյին. Տ. «**Նոր խոսք**» 25 ոգոստոսի 1906 թ.։

**) Դժբախտ բանվորությունը մնաց մենակուսացած, հեղափոխության անհաղորդ։ Հետևյալը այս անկյունում ասենք ոչ ընթանում էր նախախնամության գլխավորությամբ... Տաքինները հետո միայն նա սթափվեց-սակայն այդ մասին՝ իր տեղում։

Գլ. VIII.

ԳՈՐԾԱԴՈՒԼԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Հայաստանի քաղաքային աշխատավորության գործադուլային շարժման պիտներ հանդիսացավ Ալեքսանդրոպոլի բանվորությունը։

1904 թ. ապրիլին տեղական Սոցիալ-Դեմոկրատական կազմակերպությունը ծրագրում է նախապես Մայիսի 1-ը տոնել առանձին շուքով և տալ նրան քաղաքական դեմոնստրացիայի բնույթ։ Սակայն շուտով պարզվում է, վոր հնարավոր է նաև կազմակերպել **տցային, սեղանատների յեվ հյուրանոցների ծառայող բանվորների գործադուլը** *այն հաշվով, վոր յեթե մինչև ապրիլի 29-ը տերերը չբավարարեին նրանց ներկայացրած տնտեսական պահանջները՝ հաջորդ որվանից պիտի հայտարարվեր գործադուլ, մի հանգամանք, վոր մայիսի 1-ի տոնին պիտի ատր ավելի մարտական բնույթ. նամանավանդ, վոր այդ պրոֆեսիայի բանվորության տնտեսական դրությունը անհանդուրժելի պայմաններում եր գտնվում։ Ներանցից շատերը բոլորովին չեյին վարձատրվում, այլ աշխատում եյին «մի փոր հացով», իսկ վոմանք եյ ամսական ամենաշատը 5-10 ռ. աշխատավարձ ստանում։ Մինչդեռ աշխատաժամերի սահմանափակման քանիցս անգամ բարձրացրած հարցը ազա-գյումբրեցիների և չինովնիկության կողմից ծիծաղի յեր արժանացել։—Խոհարարը միաժամանակ «մի տան» մարդ է, ուրեմն և պիտի աշխատի վորքան գործ կա, քանի քնի ժամանակը չի—գալուց եր ստվորական մհշչանը,—իսկ բնակարան, մարդավայել վերաբերմունք, բժշկական ոգնություն՝ սրանք բոլորը նկատվում եր վորպես ոտնական խոսակցություն, հեռավոր յերազներ։*

Միևնույն վիճակում եր գտնվում նաև քաղաքի միակ՝ **Զիրողյանցի գործարանի բանվորությունը,** *վոր աշխատում եր 11-12 ժամ՝ 15 ռ. վոչ ավել աշխատավարձով—առանց վորևե այլ բարիքի։*

Ոտկիններների հետ բանակցություններ վարելու համար նախապես ընտրվում է մի բյուրո 11 հոգուց բաղկացած։)

Պահանջները միանգամայն համեստ եյին.—

1) *Սահմանափակել աշխատանքի ժամերը,*
2) *Ավելացնել ռոճիկները,*
3) *Հաստատել գիշերային հերթապահություն,*
4) *Հատկացնել բնակարան,*
5) *Բժշկական ծրի ոգնություն,*
5) *Արձակուրդի ժամանակ պահպանել ռոճիկը,*
7) *Քաղաքավարի վերաբերմունք, մաքրություն յեվ այլն։*

Ուշադրության անգամ չեն արժանանում այդ պահանջները. Ալեքսանդրոպոլի վոր մեշչանի գլխից կանցներ այն միտքը, թե այդ «մուֆթա հաց ուտողները» մի որ «զարատովկա» կանեն և ազա-խոզեյին մարդկանց ու զինվորական կլուբի սիրահարներին՝ անճաշ, քաղցած կթողնեն։

Գործադուլը հայտարարվեց. նրան միացան և Զիրողյանի գործարանի բանվորները միևնույն պահանջներով։

Ապրիլի 30-ի առավոտյան գործադուլավոր բանվորները հավաքվում են **ծագկենց գաբորում** *միանգի (Զիրողյանի գործարանի դիմաց)։ Ներկա եյին բացի գործադուլավորներից (թվով 100-120) նաև յերկաթուղու այլոնից և քաղաքից, վոր յեկել եյին «թամաշի», մոտ 1000 հոգի։*

«Առաջին հոտառը դեռ չվերջացրած իր ճառը, պատմում է ականատեսը—միանգատեղին մոտեցան կառքով «Դաշնակցության» տեղական կոմիտեի անդամ **Ջալլաթը, Վանցոց Մելիքը, Ովակը՝** *իրենց զինվորներով.*

— Ձեզ ով է իրավունք ավել քաղաքը խառնել էրար և մարդկանց քաղցած թողնել»—գոռում է Ջալլաթը և ոդի մեջ շարժում խլիսառ։ Սրան հետևում են «զինվորները»՝ իրենց գանակներով ու հրացանների դոնդաղներով... Սկսվում է ձեռ, գանակներով ու հրացանների դոնդաղներով... Սկսվում է ձեռ, հայհոյանք, փախեփախ. Ջարդվում է 5-6 հոգու գլուխ, արնակալում շատերի գլխքերը... Դեպքի ականատես պրիստավ **Խերխելիձեն** *չի կարողանում թագցնել իր հրճվանքը՝—*Молодец Джаллат, своими козаками разбил митинг".*)

*) Այսպես եյին՝ վրացի **Թումանն**, ռուս **Ա.Եսենինը**, ազա **Սիմոնը**, **Ա.Կարոն**, **վ.Կաճարը** և ուրիշները. **Տ. Հ. Կոստանյան Արխիվամերկ. Հայի Կաֆարի «հիշողություններ»։**

*) Ibid.

Ջերքակալվում են գործադուլի պարագլուխները. յերևկոյան քաղաքի պատերին փակցվում են հայտարարություններ այն մասին, վոր հաջորդ որը՝ մայիսի 1-ին արդելվում է բանվորներին և ծառայողներին վորևե հավաքույթ կազմակերպել. դաշնակցական զինվորները «զգուշացնում են» ում հարկն է։

Չկար մամուլ, վոր արձագանքեր. սակայն յեզակի չեյին նման դեպքերը, «յերբ չարչի խոզեյինների մոտ քերթվող վոքրաթիվ բանվորները զինում էին գործադուլի իրենց դրությունը մի քիչ լավացնելու...Դաշնակցական կոմիտեն իր ֆիզկալներով շրջապատում էր նրանց և զգալանակների ուժով սոխում՝ աշխատել կամ արդելում գործադուլը»։ *) Միջանկյալ հիշենք նաև 1905 թ. Ղարսի **կոշկակար բանվորների** ընդհանուր գործադուլը, վորը վիժեց Դաշնակցության Զրարերդի (Ղարսի) կոմիտեի շնորհիվ։ Ապա նաև Ղարսի դաշնակցական **հացթուխ բանվորների** գործադուլը, վոր նույնպես ճնշվեց Դաշնակցության կոմիտեի կողմից այդ միության վարչության նախաձեռնող անդամների ձերբակալությամբ. և այսպես անվերջ։ Ի՞նչպես կարելի յի հայ խոզեյինների դեմ գործադուլ անել.—ահա «սոցիալիստական» մտածելակերպը այն կուսակցության, վորի բոլոր ոգեորությունը ծախսված եր հայ աշխատավորության գլխին ու խեղդում եր նրա համարձակ ու հեղափոխական խոսքը։ Այդ արդեն հասկանում եր քաղաքի աշխատավորությունը. և այդ առաջին մեծ հաղթանակն եր Սոցիալ-Դեմոկրատիայի։

Ալեքսանդրոպոլի քաղաքային կազմակերպությունը այնուհետև խոշոր յեռանդով անցնում է պրոֆեսիոնալ միությունների կազմակերպման. 905 և 906 թ.թ. դեպքերը նրան էլ ավելի համոզում են կազմակերպված, դասակարգային կոիվ մղելու համար՝ արհեստակցական միությունների խոշոր դերը։ Նա սիստեմատիկ վարում է քաղաքական-պրոպագանդիստական աշխատանքներ բանվորական միություններում, ձայնակցում քաղաքական յուրաքանչյուր դեպքի, վոր կարող եր հուզել հասարակական կարծիքը. կայազորի Սոց.-Դեմ. կազմակերպությունը շնորհիվ պատրաստի ընկերների՝ ամեն կերպ՝ ագիտացիոն ուժերով ու անլեգալ գրականությամբ ոգնում եր նրան։

1906 թ. տարեմուտին հեղափոխական Ռուսաստանը կանգնած եր վերից շնորհած **Պեռական Դումայի** առաջ։ Դուման զինված հեղափոխությունը խաղցնու միջոց եր, ամենից քիչը՝ նրա քայքայողը, գերեզմանափորը։ Զգեստ և գնալ

*) „Կայծ“ 1906 թ. № 9 Ագելիանովի գործարանի մի խումբ բանվորների նամակը։

Դումա, լսում եր ամեն կողմից հեղափոխական բանվորության կոչը։ Դեպի փողոց, զինված ապստամբության միջոցով դեպի իշխանություն. Դուման բոյկոտի պիտի յենթարկել—ահա Սոց.-Դեմոկրատ բոլշևիկների լոզունգները։ Յեվ Ալեքսանդրոպոլի կազմակերպության գրավոր առաջին խոսքը, նրա առաջին հեղաոգրաֆի վրա տպած թռուցիկը գալիս եր կլերաներու այդ սկզբունքները քաղաքացիներին և զորքին ուղղած «**բոյկոտի յենթարկեք Պեռական Դումաս**» վերտառությամբ։ *)

Յերկրորդ թռուցիկը, վոր գրված և մարտի 27-ին, ուղղած և «գրասենյակային և վաճառատների ծառայողներին», ուր ի և «գրասենյակային և վաճառատների ծառայողներին», ուր ի միջի այլոց մերկացված և «Դաշնակցության» բուրժուական կյանքյանը և բանվորական շարժման նրա վտանգավորությունը։**)

Այնուհետև իրար հետևից գործադուլ են հայտարարում **Ջիգեր կարի մեքենայի ընկերության ծառայողները՝** ներկայանալով հինգ կետերից բաղկացած մի պահանջագիրը, գիներ **գործատացների յեվ պահեստների բանվորները՝** 9-ը կետերից (սպտեմբ. 11-ին, 906 թ.), **խոհարարները յեվ տնային ծառայողները՝** 14 կետերից (սպտեմբ. 11-ին, 906 թ.), **հացթուխ բանվորները** և այլն։ Այս գործադուլները տեղի եյին ունենում «խաղաղ ապստամբության մթնոլորտում»։ Սրանց ուղեկցում էին մեծ ներկայացրած անհետաձգելի պահանջները կլերաում եյին մեծ մասամբ հետևյալ պլսավոր կետերը.

1. Ռոճիկի ավելացումն 20-25 տոկոս.
2. Աշխատաժամերի կրճատում մինչև 8 կամ 9 ժամ.
3. Ծառայողներին տարվա ընթացքում 1 ամիս արձակուրդ, վերապահելով ամսավճարը.
4. Զրի բժշկական ոգնություն.
5. Արձակել յեվ նոր բանվորներ ընդունել բանվորական վարչության համաձայնությամբ.
6. Բանվորին արձակելու դեպքում տալ ½ կամ 1 տարվա ռոճիկը.
7. Սանիտարական պայմանների բարելավումն, բաղարավարի վերաբերմունք յեվ այլն։ ***)

*) Տես հավելվածում գրկ. № 2. Յերևանի կազմակերպությունը չնայած բոլշևիկական եր, բայց մասնակցեց Դումայի ընտրություններին՝ տեղական պայմանները նկատի ունենալով. գրված եր այստեղ Սոց—Դեմ. յերկու ֆրակցիայի կողմից բոլշևիկ ընկ. Սահակովսկու ներկայությամբ։

**) Տես հավելվածում գրկ. № 3

***) «Զանգ» 1906 թ. սպտեմբ.

Այս գործադուլները «ընթանում են խաղաղ, առանց հասարակական կարգը և հանգիստը խանգարելու։ Ղեկավարներին գտնելու համար ձեռք են առնվում խիստ միջոցներ»։ *) Ժանդարմերիայի այդ «միջոցների» շնորհիվ «կարգը խանգարելու» մեջ մեղադրվող «քաղաքական հանցավորները» բանտ էին լցվում և խոշոր գումարներով ազատ արձակվում՝ վերադարձի հետանկարով։ **)

Ամենից շատ արյուն պղտորեց **Փոխադարձ վարկի Ընկերության ծառայողների** գործադուլը (3 հուլիս, 906 թ.)։ Այս առթիվ հրատարակած թռուցիկում ***) Ս.-Դ. կազմակերպությունը յեզրակացնում է՝ «խոզեխինների դեմ տարած ամեն մի հաղթանակ մեր կողմից՝ մի քայլ է դեպի ազատագրական շարժումը։ Աստիճանաբար կովի ճանապարհով միայն մենք կկլանք բանվոր դասակարգի ազատությունը նեղկա տիրող ռեժիմի ձեռքից, ուր մի շարք պարագիաներ յուրացնելով արդյունագործությունը, մեզ բանվորներիս ստիպում են դիմել իրենց և մեր բանվորական ուժերը դնել նրանց տրամադրության տակ, որ նոքա ոգավեն այդ ուժից և շահագործելով մեզ՝ իրենց անտակ դրպանները լցնեն մեր աշխատանքով, մեր յերեսին միայն կոպեկներ շպրտելով»։

Այսպես եր դատախարակում Հայաստանի աշխատավորության Ս.-Դ. կուսակցությունը, և կովի այդ ճանապարհը նրա հարատած ուղին եր ու մնաց այնուհետև։

Յերևանում գործադուլային շարժումները սկսվում են 1905 թ., բայց շուտով խեղդվում են հայ-թուրքական ընդհարումների տարափների տակ մինչև 1906 թ։ յերկրորդ կեսը։

Առաջինը (1905 թ. ապրիլին) գործադուլ է հայտարարում **Սարաջեվի անիֆիճիկացիոն յեվ կոնյակի գործարանների** բանվորությունը, տեղական Ս.-Դ. կազմակերպության ղեկավարությամբ։

Ներկայացնում են հետևյալ պահանջները.

1. Աշխատավարձի հավելումն մինչև 30 տոկոս.

2. Բանվորների ընդունել յեվ արձակել՝ բանվորական կոմիտեի միջոցով.

3. Նորմալ բանվորական որ (աշխատում եյին 11 ժամ. Մ.)։

4. Հեռացնել կառավարիչ Զեղգինիձեյին.

և ուրիշ մանր առաջարկներ։

Գործադուլը տևեց 2 շաբաթ.*) բավարարվեց մասամբ առաջին կետը, մյուսները մերժվեցին։

Շուստովի գործարանի բանվորության նախապատրաստված գործադուլը անմիջապես լիկվիդացիայի է յենթարկվում, շնորհիվ պահանջների կիսաբավարարման ու փոխադարձ համաձայնության։

Այնուհետև կոմիտեն (1906 թ.) աշխատանքների ծանրությունը տեղափոխում է Արհեստակցական միությունների կենտրոնը տեղական հարձակողական ագիտացիայի ներ կազմակերպելուն. սակայն հարձակողական կենտրոնում այդ այնքան էլ դյուրին խնդիր չեր։ Անգամ հաճախակի դրան և նման խոչընդոտանքի, այնուամենայնիվ հաջողվում է թե բանվորական և թե արհեստավորների շրջանում կազմակերպել 11 բջիջ և կապել Ս.-Դ. կոմիտեի հետ մոտ 300 ր.։ Այդ բջիջներից կարելի յե հիշել.

1. «Զանգի» (կաշվագործներից)՝	մոտ 15	անդամով
2. Յեվդոկիմովի բաղնիքի ծառայողներից	» 25	»
3. Տնային ծառայողներից	» 15	»
4. Բյարգահներից	» 40	»
5. Աշակերտական խմբակներից	» 80	»
6. Թուրքական շրջանից**)	» 5	»
7. Զինագործներից	» 20	»
8. Սարաջևի գործ. բանվորներից	» —	»
9. Այլի փորոզ բանվորներից և այլն	» —	»
Ընդամենը	» 300	»

1906 թ. 4-րդ Անդրկովկասյան (Ս.-Դ.) համագումարի շրջանում Յերևան են հաճախում տարբեր ժամանակներում կուսակցության ղեկավար բնակիչներ***) և այդպիսով հնարավոր է դառնում կանոնավոր հունի մեջ առնել բանվորական շարժումը և դնել նրա հետագա անելիքները։

Այս շրջանում (մայիսի վերջին) գործադուլ են հայտարարում ոստիկան **Առևտրական Ընկերության** Յերևանի ճյուղի ծառայողները։ Սրանց ներկայացրած 7 կետերից պահանջները

*) Այդ գործադուլի ընթացքում աչքի են ընկնում յեկեղ. բանվոր **Թադեոս Սիրիլլ.** (Ս.—Դ.-ներ)

) Թուրքական բջիջի ղեկավարն եր ընկ. **Աչեալի Սալրաճեվը.

***) Ս. Շահումյան, Ղարաջյան, Քաթանյան, Յեվգենի—Իվանովիչ?), և ուրիշները։ Ի միջի այլոց 1906 թ. **Սեպտեմբերին** համագումարին ընտրվում է Յերևանի կազմակերպության կողմից ընկ. **Ս. Շահումյան** իսկ 1907 թ. համագումարին՝ ընկ. **Գ. Սեպտեմբերին։**

*) Վ. Գ. Ա. ժանդարմերիայի վարչ. գործերը. Отношение Эриванского губернатора от 22 августа 906 г. за № 1185 և շարունակությունը.

**) «Կայծ» № 14, 1906 թ.

***) Տես հավելվածում գոկ № 4.

հունիսի սկզբներին լիակատար բավարարելուց հետո՝ վերսկսում են աշխատանքները։*)

Այնուհետև օգոստոսի 21-ին գործադուլ են անում **հյուսների և ատաղձագործների աշակերտները և բարգահները**։ Սրանք ներկայացնում են հետևյալ պահանջները.

1. Նորմալ բանվորական օր.
2. Ռոճիկի չեզ որավարձի հավելումն 20 տոկոսով.
3. Տոզեյինների կողմից բաղաբավարի վերաբերմունք չեզ այլն։

Տերերը այդ պահանջները ամբողջովին բավարարում են և հաջորդ օրվանից վերսկսվում են դադարած աշխատանքները։**)

Յերկար ձգձգվում և խոշոր ոգմուկ և բարձրացնում **Առևտրական բանկի Ցերեվանի բաժանմունքի ծառայողների գործադուլը**, որ սկսվեց օգոստոսի 21-ից։ Ծառայողները ծայր աստիճան շահագործվում էին բանկի դեկավարների և փայատերերի ձեռքում և նրանց ամեն մի քայլը՝ իբրեև անհատականի բարելավման ուղղած—ճնշվում էր ջնարհիվ Թիֆլիսում նստած պաշնակցական փայատերերի ձեռք առած կարուկ միջոցների։ Այս իսկ պատճառով տեղի «Դաշնակցականը» կոմիտեն առանձնապես դեմ էր այդ գործադուլին։ Սրանց գործադուլի դեկավարությունը իր վրա չի առնում Ս.-Դ. կազմակերպության Թիֆլիսի կոմիտեն, որի տեղով հրատարակում և առանձին թուղթիկ՝ տնտեսական պահանջներով միայն։***)

Բանկի դեկավարները սկզբում համաձայնվում էին բավարարել. աշխատանքները սկսելուց հետո՝ մերժում են, որին կրկին հետևում և գործադուլը։ Վերջին հաշվով չերեք ամիս տևելուց հետո, չերբ սպառնում են բանտով և բանկի փակմամբ (տովորական մի խաղ! Մ.)՝ նոյեմբերի 27-ին ծառայողները համաձայնվում են նախկին պայմաններով վերսկսել աշխատանքը։

Սեպտեմբերի 4-ին գործադուլ են հայտարարում նաև **փականագործների և դարբինների բարգահները**. պահանջները ընդհանուր առմամբ տնտեսական վիճակի բարելավման շուրջն են պատում։ Տերերը թողնում են անհետևանք։ 10 որ առանց որևե նյութական ոգնության մնացած, բանվորները մեծ մա-

*) «Կայծ» հունիս-հուլիսի և «Հաւաջ» հունիս №№-ները։

**) Վ. Պ. Արխ. Отношение Эриван. губернатора от 21 VIII за №4586 и от 23 VIII № 4608—1606 г.

***) Տես հավելված դեկ. № 5 (այդ պահանջները չերկու տեղ չէրկնվում պատճառով՝ թողնում ենք միայն թուղթիկում)։

Ա. ՇԱՀԻՆՅԱՆ

ՀԱՋԻ ԿԱՅԻՄ
(Ս. ԴՅՈՒՆԱՄԱՀՅԱՆ)

ամբ սեպտեմբերի 14-ին նախկին պայմաններով վերսկսում են ընդհատված աշխատանքները։ Մնում են մենակ Տեր Ավետիսյանի չուգունե-ձուլարանական գործարանի բանվորները, վրանք վերջինն են լքում գործադուլի քայքայված շարքերը և սեպտեմբերի 18-ին՝ իրենց տեղերը չկորցնելու պատճառով՝ ստիպված են լինում նույնպես գործի անցնել։ *)

Նոյեմբերի սկզբներում **Սարաչեվի գործարանի բանվորները** կրկին գործադուլի են դիմում տնտեսական մինուլն պահանջներով՝ ինչ 1905 թ. ապրիլին. բայց այդ պահանջվում էր նաև «հեռացնել գլխավոր վարպետին»։ Գործարանատերը «բավարարում է» միայն պահանջագրի 3-րդ կետը (եջ 126.), ըստ որի 11 ժամն փոխարեն հաստատվում է $10^1/_2$ ժ. բանվորական օր։ Մի շաբաթ տևելուց հետո այս գործադուլը դադարում է անհետևանք։

Դեկտեմբերին գործադուլ են հայտարարում **բաղնիքի, կաշվի գործարանի բանվորները** և **գինագործները**—գրեթե նոյնանիշ պահանջներով։ Առաջինը տևեց 10 օր, յերկրորդը՝ մեկ շաբաթ, յերրորդը՝ յերկու շաբաթ, և բոլորն էլ վերջացան բանվորության լիակատար հաղթությամբ։

Յերևանի բանվորության գործադուլային շարժման նյութական գործը հանդիսացավ Սարաչեի **ռեֆրիժերիկացիոն** և **կոնյակի գործարանների բանվորության** յերրորդ գործադուլը, որը Ս.-Դ. կազմակերպության ղեկավարությամբ պսակվեց հաղթությամբ։ Դա հետևանք ևր յերկար և համառ պայքարի, որը վերջապես, թեև վոչ լիակատար՝ բավարարվեց 1907 թ. հունվարի վերջերին։

Գործարանատերերը բավարարեցին այդ պահանջները հետևյալ կերպով. **)

1. Ռոճիկի հավելումն 1907 թ. փետրվարի 1-ից սկսած՝ հետևյալ կարգով.

20-ից մինչև 30 ո. տաղտուկներին 15 տոկոս.
31-ից » 35 ո. » 10 »
35 ո. բարձր » 5 »

2. Յուրաքանչյուր բանվոր Զատկին յեվ Նոր Տարուն տոնանում և մեկ ամսականի չափ պարգև (награда). դա վերաբե-

*) Վ. Գ. Աբխ. Յերևանի охранка-ի պետ՝ Ռոստովցևի գաղտնի զեկուցումը Կովկասի վոստիկանության վարիչին, 28 սեպտեմբերի 1906 թ. № 575.

**) «Фактыа» № 2, 1907.

Յերկու անգամ չկրկնելու համար մենք ենք բերում միայն «համաձայնության» վորը համապատասխանում և պահանջների առանձին-առանձին հետևյալին։

րում և այն բանվորներին, որոնք աշխատում են մինչեվ 1906 թ. հոկտեմբերը։

3. Ամեն որ բանվորները աշխատում են 8 ժամ. իսկ շաբաթ որերին՝ 7 ժամ. ռեթիֆիկացիոն բաժնում յերեք փոխով։

4. Բոլոր բանվորները յուրաքանչյուր որ ստանում են թեյ, շաքար յեվ ամսական 1/10 ողի։

5. Տարվա ընթացքում յուրաքանչյուր բանվոր ոգտվում է յերկու շաբաթյա արձակուրդով, վորի ընթացքում պահպանվում և նրա ռոճիկը։

6. Բանվորը յեվ իր ընտանիքը (միայն կանայք յեվ յերեխաները՝ յեթե նրանք ապրում են Յերեվանում) ոգտվում են բժշկական ոգնությամբ ի հաշիվ գործարանի։

7. Մինչեվ 1906 թ. հոկտեմբեր աշխատող բանվորների ընդունել յեվ արձակելը կատարվում է միջնորդ դատարանի միջոցով, վորը կազմվում է՝ գործարանատիրոջ յեվ բանվորների 1-ական ներկայացուցչից յեվ նրանց ընտրած յերրորդ անձից. մյուս բանվորները արձակվում են ըստ գործարանների աշխատանքների կրճատման, վորոնք ստանում են բացի իրենց հատանելիք սովորական ռոճիկից նայեվ վերադիր գումար՝ յուրաքանչյուր մեկ տարի ծառայության համար յերկու ամսական ռոճիկի չափ (1 ամիս ծառայության՝ 5 որվա աշխատավարձ)։

8. Բանվորի մահացության դեպքում նրա ընտանիքին տրվում է 50 ռ., կնոջ մահվան դեպքում՝ 25 ռ., մինչեվ 10 տարեկան յերեխաների՝ 10 ռ. յեվ մինչեվ 20 տարեկանների՝ 15 ռ.։

9. Բանվորներն ոգտվում են բաղնիսից ամսական յերկու անգամ։

10. Հիվանդության ընթացքում բանվորը մինչեվ 6 ամիս ստանում է իր ռոճիկը յեվ պահպանվում է նրա տեղը։ Հաշմանդամության դեպքում տրվում է ռոճիկի կեսը մինչեվ մահը։

11. Ջինվորական ծառայության կոչվելու դեպքում բանվորին տրվում է նրա յերկամյա ռոճիկը յեվ հատանելիք պարգեվը (награда)։ Այս կեսը վերաբերում է մինչեվ 1906 թ. հոկտեմբեր աշխատող բանվորներին։

12. Ջեռնարկության այլ ճիւղերի անցնելու դեպքում այս պահանջները մնում են իրենց ուժի մեջ, իսկ ռիկվիդացիայի յեվ կամ շտատը կրճատելու դեպքում դուրս մնացած բանվորները բավարարվում են 6 ամսվա ռոճիկով։ Այս կեսը վերաբերում է մինչեվ 1906 թ. հոկտեմբեր աշխատող բանվորներին։

13. Այս պահանջները կորցնում են իրենց ուժը բանվորների վերաբերյալ որոնք հրաժարակելու դեպքում»։

Գործարանատերը այս խոստումները դրժից մինչ «բանվորների վերաբերյալ որոնք հրաժարակելը»։

Թևակոխող ռեակցիան սև խաչ քաշեց այդ գործադուլի հաղթանակների վրա ևս։

* * *

Հետադարձ մի ակնարկ ձգելով 1903-7 թ.թ. գործադուլային շարժման, բանվոր դասակարգի կազմակերպված պայքարի վրա, տեսանք, վոր նա զուգընթաց, քայլ առ քայլ ընթացել է յերկրի տնտեսական կյանքի զարգացման հետ։

Հայաստանի հասարակական լայն շրջաններում պատվաստվում էր սոցիալ-քաղաքական այնպիսի յերևույթներ, վորպիսիք դրսևորում էին շահագործվող բազմությունների ընդդեմ փոքրաթիվ շահագործող-պարազիտների կազմակերպվող և հաստնացող պայքարի բովանդակությունը։

Արդյունաբերական կյանքը զարգացման նորմալ հունի մեջ էր մտել, արտադրական յեղանակն ու միջոցները կերպարանափոխվել. նոր ձեռնարկությունները կենտրոնացնում էին իրենց շուրջը բանվորություն։ Յերկաթուղին զարձել էր այն կենտրոնը, ուր հավաքվում էին հազարավոր պրոլետարներ։

Գյուղական միջավայրը հիմնավորապես «թունավորվել» էր. նրա բնակչությունը պահպանում էր դեպի արդյունաբերական կենտրոններ, յերկրի ներսում թե նրանից դուրս։ Արդյունաբերական բանվորության ազդեցությունը այսպիսով, նրանց քաղաքական-դասակարգային խնդրում անհերքելի փաստ էր։

Մոշոր դեր ունեն կատարած նաև պարբերաբար գյուղ վերադարձող բանվորները ու առանձին անհատ Սոցիալ-Դեմոկրատները։ Սրանք մերված բանվոր դասակարգի անհատա-քաղաքական կռիվների կենտրոնատեղերում, մեզ մոտ հանդիպացել են հեղափոխական խոսքի սերմնացաններ. նրանք պարզել, խորացրել են ընդհանուր հասարակական զժգոհությունները, կազմակերպել և ղեկավարել են յերիտասարդական խմբակներ ու կրուժոկներ։ Հարձակողական նացիոնալիզմով ոգակված, խոշոր կենտրոններում, այնուամենայնիվ, ինտերնացիոնալիզմի զրոշակի տակ նրանք իրենց շուրջն էին հավաքել մի քանի հարյուր պրոլետարներ։ Ռուսական առաջին հեղափոխությունը նրանց հրապարակ քաշեց։

Գործադուլային այն ցանցը, վոր զեկավարեցին Սոցիալ-Դեմոկրատիայի առանձին գրուպաններն ու կազմակերպու-

թյանները, մի պերճախոս ապացույց են այն փաստը, որ Հայաստանի բանվորական շրջաններն իրենց անփակաց փոռնով հանգիստ կարող էին բանվոր դասակարգի կազմակերպված պայքարի անհրաժեշտության:

1903-7 թ. թ. բանվորական շարժումները Հայաստանում իրապես մի ողակ էին կազմում այն հսկա շղթայի, որ պիտի պատ իր հանգույցներով սեղմում էր ցարիզմը բոլոր Ռուսաստանում:

Մեր արձանագրած գործադուլները կրում էին մեծապես տնտեսական և քաղաքական բնույթ: Բանվորության հիմնական պահանջները գործադուլի 21 դեպքերում ուղղված էին հողատեր **աշխատավարձի բարձրացման, աշխատաժամերի կրճատման յեվ անճախանձելի պայմանների կատարման:** Չնայած անդամ այդ տարբական պահանջներին, նրանցից բավարարման են արժանացել 4-ը, մերժման՝ 17-ը:

Գործադուլային ալերի թիվը հասնում է 270-ի, մինչեն հաշվով յուրաքանչյուր գործադուլի տևողությունը՝ 13 որ, վոր ունեցել՝

մինչև 7 որ տևողությամբ՝	9	գործադուլ.
» 14 »	»	6	»
» 30 »	»	—	»
» 40 »	»	2	»
» 60 »	»	1	»
» 90 »	»	1	»
» ?? »	»	2	»

Սկսվել են այդ գործադուլները մեծ մասամբ ոգտատերերի ամիսներին (16 դեպք). մասնակցել են ասաջին անդամ մոտ 12.000 և կրկնության՝ բոլոր գործադուլներին մոտ 17.000 բանվորներ:

Թեպետև 1907 թ. բանվորական շարժման նոր վոչինչ չեր խոստանում: Ցարական տեռորը վրում էր հետզհետե իր թևերը ամեն անկյուն:

Հեղափոխության մեղրամսին վոգևորված ասլրները լքում էին իրենց գիրքերը:*)

Հայ նացիոնալ-դեմոկրատիան իր ասլրներ գտնավորություն պատմաշարժության «անխուսափելի» միջոցների դեմ՝ բուրժուազիայի վոսկիներով վերականգնում էր իր կազմալուծված շարքերը:

Հոսանքության և համատարած անակնկալին արձագանգող անարխիան նկատվում էր ստորև ընդհանուր հասարակական վարակ:

Սկսվում էր ուժերի, գործունեության ու պահանջների վերագնահատման շրջանը:

*) Մեր խոսքը վերաբերում է հայ նացիոնալ-դեմոկրատիայի ասլրներ խմբավորություններին և մասնավորապես՝ հնչակյանները:

ՀԱՎԵԼՎԱԾ

Պոկումներ



Главный Союз Русского Нар-Соц. Р.П.

Пролетарии всех стран соединяйтесь!

Въ рудниках подземной застой-
ками на горе. Видны раздастся руж-
ныя о волк. И двухи дей Родзя-
до труда.

Ко всем Гражданам

Граждане! Вы всех правовых и будущих Го-
дственная свобода Царевича любовь-
царем его народу. Свобода Царевича
от большого до малого девицы и граждан полного пра-
вову. За рабочим погребенного Царевича свобода
умирать с голоду и холоду не говорить до двух пра-
ды, солдатам свобода сносить убеждения разных пар-
бонов, и читайтесь Царевича и
вять... За преступление

. . . . . .



задающийся от собственной злобы, изрядно на кле-
ную нашу, покинул позорно..... Свободная смерть
на славном поле, вот наша фраза. И позорная
смерть ждет голод народа.

